© Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ, 2006

Հայաստանի Հանրապետության

կենտրոնական բանկ

Տարեկան հաշվետվություն

2005

Տարեկան հաշվետվություն
2005

Ներկայացվում է
Հայաստանի Հանրապետության
Ազգային Ժողովին

ՀՀ ԿԲ նախագահ  Տ. Սարգսյան

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի 2005 թվականի ֆինանսական հաշվետվություն

«Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը (այսուհետ՝ Կենտրոնական բանկ) Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովին է ներկայացնում 2005 թ. ֆինանսական հաշվետվությունը դեկտեմբերի 31-ի դրությամբ, որը ներառում է տարեկան հաշվեկշիռը, եկամուտների և ծախսերի մասին հաշվետվությունը, դրամական միջոցների շարժի վերաբերյալ հաշվետվությունը, կապիտալի շարժի վերաբերյալ հաշվետվությունը և ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները:

Կենտրոնական բանկի ֆինանսական հաշվետվությունը կազմված է Ֆինանսական հաշվետվությունների ներկայացման միջազգային ստանդարտներին համապատասխան՝ Կենտրոնական բանկի խորհրդի կողմից ընդունված և հաստատված հաշվապահական հաշվառման սկզբունքների հիման վրա: Բոլոր էական հարցերում Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման ստանդարտները համապատասխանում են Ֆինանսական հաշվետվությունների ներկայացման միջազգային ստանդարտներին:

Կենտրոնական բանկի խորհուրդը պատասխանատու է ֆինանսական հաշվետվություններում արտացոլված հաշվապահական տեղեկատվության արժանահավատության համար: Կենտրոնական բանկի խորհուրդը պատասխանատու է Կենտրոնական բանկի ակտիվների պահպանման, կեղծիքների կանխման և բացահայտման համար:

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ՝
ուղղված ՀՀ կենտրոնական բանկի խորհրդին

Մեր կողմից իրականացվել է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (այսուհետև՝ Բանկ) 2005 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվապահական հաշվեկշռի և նույն ամսաթվին ավարտվող տարվա ֆինանսական արդյունքների, դրամական միջոցների հոսքերի և ընդհանուր կապիտալի փոփոխությունների մասին հաշվետվությունների աուդիտը: Նշված ֆինանսական հաշվետվությունների համար պատասխանատվությունը կրում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը: Մեր պատասխանատվությունն է՝ իրականացված աուդիտի հիման վրա արտահայտել կարծիք Բանկի ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: 2004 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացվել է մեր կողմից և նշված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ արտահայտվել է առանց վերապահումների դրական կարծիք՝ 2005 թ. մարտի 25-ի մեր հաշվետվությամբ:

Մենք աուդիտն իրականացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան: Այդ ստանդարտները պահանջում են այնպես պլանավորել և իրականացնել աուդիտը, որպեսզի ձեռք բերվեն բավարար երաշխիքներ, որ ֆինանսական հաշվետվությունները չեն պարունակում էական թերություններ: Աուդիտն ընդգրկում է ֆինանսական հաշվետվություններում արտացոլված տվյալներն ու համապատասխան ծանոթագրությունները հիմնավորող փաստերի ընտրանքային կարգով ստուգում: Աուդիտն ընդգրկում է նաև Բանկի ղեկավարության կողմից կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքների և կատարված գնահատումների, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատականը: Մենք համոզված ենք, որ մեր կողմից անցկացված աուդիտը բավարար հիմք է հանդիսանում մեր եզրահանգման համար:

Մեր կարծիքով, ֆինանսական հաշվետվությունները տալիս են Բանկի՝ 2005 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտվող տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ Ֆինանսական հաշվետվությունների ներկայացման միջազգային ստանդարտներին համապատասխան:

28 մարտի 2006 թ., Փարիզ

GRANT THORNTON INTERNATIONAL (GTI)
Grant Thornton
S.A. à Directoire et
Conseil de Surveillance
au Capital de
1 082 512 €
R.C.S. Paris B 632 013 843
100, rue de Courcelles - 75017 Paris, France

Grant Thornton

«Գրանթ Թորնթոն»

Բովանդակություն

1. Մակրոտնտեսական իրավիճակ, գնաճ և դրամավարկային քաղաքականություն .. 7
1.1. Մակրոտնտեսական իրավիճակը 7
Համախառն առաջարկ 8
Գներ և սակագներ 13
Աշխատավարձ և աշխատանքի շուկա 15
Համախառն պահանջարկ..... 16

1.2. Հարկաբյուջետային հատված 18
ՀՀ պետական բյուջեի եկամուտներ 18
ՀՀ պետական բյուջեի ծախսեր 19
ՀՀ պետական բյուջեի պակասուրդ 19
ՀՀ հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունների կոորդինացում 20

1.3. Արտաքին հատված 21
Իրական փոխարժեք և արտաքին առևտրի գներ 26
Համաշխարհային տնտեսությունը 2005 թվականին 27

1.4. Դրամավարկային քաղաքականությունը 32
Դրամավարկային քաղաքականության նպատակները և դրանց իրագործման ռիսկերը 32
Փողի պահանջարկ 32
Փողի առաջարկ 34
Ֆինանսական միջնորդության աստիճանը 34
Փողի բազա 36
Դրամավարկային քաղաքականության թափանցիկության և հրապարակայնության ապահովումը 39

1.5. Միջազգային պահուստների մակարդակը և կառավարումը 40

1.6. Ֆինանսական շուկա 42
Ավանդների և վարկերի տոկոսադրույքներ 42
ՊՊ առաջնային շուկա 42
ՊՊ սեփականատերերի կառուցվածքը 43
ՊՊ երկրորդային շուկա 44
Ռեպո շուկա 44
ՀՀ ԿԲ տոկոսադրույքներ 45
Արժութային շուկա 45

2. ՀՀ ֆինանսական կայունություն 47
2.1. Ֆինանսական կայունությունը մակրոտնտեսական միջավայրում 47
Անշարժ գույքի գներ 47
Եկամտային և պարտքային ցուցանիշներ 48
Արտաքին աշխարհի հետ կապված հիմնախնդիրներ 48

2.2. ՀՀ ֆինանսական շուկայի կայունություն 51

2.3. ՀՀ ֆինանսական կառույցներ 53
Բանկային համակարգի զարգացման միտումները 53
Ընդհանուր դրույթներ 53
Վարկային ռիսկ 54
Իրացվելիության ռիսկ 57
Շուկայական ռիսկեր 58
Վարկային կազմակերպությունների զարգացման միտումները 60
Ապահովագրական ընկերությունների զարգացման միտումները 60
ՀՀ-ում գործող արտարժույթի փոխանակման կետերը, արժութային դիլերները, արժեթղթերի շուկայի մասնակիցները և գրավատները 61

2.4. ՀՀ ֆինանսական ենթակառույցներ 62
Վճարահաշվարկային հարաբերությունների զարգացումը 62
Էլեկտրոնային վճարումների համակարգ 64
Համախառն թղթային վճարումների համակարգ 65
Պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման համակարգ.. 65
Պլաստիկ քարտերի շուկա 66
Միջազգային փոխանցումների համակարգեր 68
Կանխիկ դրամաշրջանառություն 68
Հնամաշ դրամանիշերի փոխարինումը 71
Հուշադրամների թողարկումը 71
Դրամանենգության դեմ պայքար 72
Վարկային ռեգիստր 72
ՀՀ ֆինանսական համակարգի օրենսդրական և ենթաօրենսդրական փոփոխություններ 74
Ֆինանսական համակարգի օրենսդրական դաշտի փոփոխություններ 74
Բանկային համակարգի կարգավորման դաշտի փոփոխություններ 75
Փողերի «լվացման» և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքար 77
«Գերմանա-հայկական հիմնադրամ». փոքր և միջին ձեռներեցության աջակցման վարկային ծրագիր (ԳՀՀ)..... 78

3. Կադրային քաղաքականությունը 80
Կադրերի ուսուցում և վերապատրաստում.... 80
ՀՀ կենտրոնական բանկի միջազգային համագործակցությունը 81

ՀՀ կենտրոնական բանկի կառուցվածքը ... 83

ՀՀ ԿԲ տարեկան ֆինանսական հաշվետվություն 85

Հավելված 119

1. ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿ, ԳՆԱՁ ԵՎ ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1.1. ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ

2005 թվականի ընթացքում ընդհանուր մակրոտնտեսական միջավայրը էապես փոփոխվել է՝ պայմանավորված ինչպես իրական հատվածում արձանագրված տեղաշարժերով, այնպես էլ ՀՀ պետական տնտեսական քաղաքականության ոլորտում իրականացված միջոցառումներով: Բացի այդ, տարվա ընթացքում տնտեսության վրա զգալի ազդեցություն են ունեցել արտաքին գործոնները՝ ինչպես արտաքին ֆինանսական ներհոսքը, այնպես էլ միջազգային շուկաներում կարևոր ապրանքների (մասնավորապես՝ նավթի, ցորենի և գունավոր մետաղների) գների փոփոխությունը:

Արտաքին ֆինանսական զգալի ներհոսքի և վերջին հինգ տարիներին արձանագրված բարձր տնտեսական աճի արդյունքում մասնավոր հատվածի եկամուտների ավելացումը հանգեցրել է կապիտալ շինարարության աճի տեմպերի արագացման: Միջոցները հիմնականում ուղղվել են արդյունաբերության և ծառայությունների ճյուղեր, ինչպես նաև բնակարանային շինարարությանը:

Համախառն առաջարկի բաղադրատարրերի վրա 2005 թվականին էական ազդեցություն են ունեցել նաև բարենպաստ բնակլիմայական պայմանները, որոնք, նպաստելով գյուղատնտեսության թողարկման ծավալների բարձր իրական աճին, խթանել են գյուղատնտեսական արտադրանքի վերամշակման ծավալների աճը. ընդ որում՝ մի մասն ուղղվել է արտահանմանը: Մյուս կողմից, գյուղատնտեսական մթերքների թողարկման բարձր իրական աճի արդյունքում զգալիորեն նվազել են դրանց մեծածախ և մանրածախ գները՝ խթանելով մասնավոր սպառման ավելացումը:

Տնտեսական կայուն աճի միտումները, գնաճի ցածր մակարդակը, արտաքին ֆինանսական շարունակական ներհոսքը հանգեցրել են ՀՀ դրամի կայուն արժևորմանը, որն էլ բարենպաստ պայմաններ է ստեղծել դրամայնացման գործընթացի արագացման համար: Էական նշանակություն է ունեցել նաև երկրում ազգային արժույթի շրջանառելիության ընդլայնման նպատակով տարվա երկրորդ կեսին ՀՀ ԿԲ կողմից «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխությունը:

Այսպիսով, 2005 թվականին ՀՀ–ում ձևավորված մակրոմիջավայրը նպաստել է տնտեսական բարձր աճի ձեռքբերմանը և ցածր գնաճի ապահովմանը:

Ըստ 2005 թվականի ՀՀ պետական բյուջեի մասին օրենքի և Դրամավարկային քաղաքականության ծրագրի՝ նախատեսվում էր տարվա արդյունքում ապահովել 8% ՀՆԱ իրական աճ՝ տարեկան գնաճի մինչև 3% և ՀՆԱ դեֆլյատորի 104.0% ցուցանիշների ապահովման պարագայում: Մինչդեռ, համաձայն ՀՀ ԱՎԾ տվյալների, 2005 թվականին արձանագրվել է 13.9% տնտեսական աճ՝ ՀՆԱ դեֆլյատորի 103.1% և ՍԳԻ 99.8% (դեկտեմբերը նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ) մակարդակի պարագայում:

Հաշվետու տարում արձանագրված գնանկման հիմնական պատճառը գյուղատնտեսական մթերքների հարուստ բերքի պարագայում դրանց գների զգալի նվազումն էր: Գնաճի վրա զսպող ազդեցություն է ունեցել նաև ներմուծված ապրանքների գների նվազումը, որը պայմանավորվել է արտաքին ֆինանսական ներհոսքի մեծ ծավալների պայմաններում արձանագրված դրամի արժևորմամբ:

2005 թվականին և՛ ներմուծման, և՛ արտահանման ծավալների աճը զգալի գերազանցել է ծրագրված մակարդակը: Ներմուծման 20.8% իրական աճը հիմնականում պայմանավորվել է բնակչության եկամուտների աճի արդյունքում սպառման ապրանքների և կապիտալ շինարարության աճի արդյունքում՝ ներդրումային ապրանքների ներմուծման զգալի ավելացմամբ: Արտահանման ծավալների առաջանցիկ աճին էապես նպաստել է գունավոր մետաղների և պատրաստի սննդի արտադրանքի արտահանման ծավալների աճը: Արդյունքում՝ ընթացիկ հաշվի ճեղքվածքը ՀՆԱ-ում, նախորդ տարվա համեմատ, կրճատվել է 0.3 տոկոսային կետով և կազմել 4.2%՝ նախատեսված 3.4%-ի փոխարեն (ներմուծման և արտահանման վերաբերյալ մանրամասն տվյալները տե՛ս «Արտաքին հատված» բաժնում):

2005 թվականի ընթացքում իրականացված հարկաբյուջետային քաղաքականությունը գնաճի վրա ընդհանուր առմամբ ունեցել է չեզոք ազդեցություն (ծրագրային ցուցանիշների նկատմամբ), իսկ հատկապես երկրորդ կիսամյակի

Հիմնական մակրոտնտեսական ցուցանիշները (ծրագրային և փաստացի)

Ցուցանիշներ *(տոկոսով, եթե հատուկ նշված չէ)*	2004 փաստացի	2005 ծրագրային	2005 փաստացի
Իրական ՀՆԱ աճ	10.1	8.0	13.9
ՀՆԱ դեֆլյատորի աճ	6.0	4.0	3.1
Գնաճը *(դեկտեմբերը նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ)*	2.0	3.0	-0.2
Գնաճը *(տարին նախորդ տարվա նկատմամբ)*	7.0	2.2	0.6
Ներքին պահանջարկի իրական աճ *	11.1	9.1	13.2
Իրական սպառման աճ	10.9	7.5	11.1
Պետական սպառման աճ	16.2	20.4	20.3
Մասնավոր սպառման աճ	10.2	6.0	9.7
Համախառն ներդրումների իրական աճ	12.3	15.8	22.4
Պետական կապիտալ ներդրումների աճ	-26.8	30.5	23.4
Մասնավոր կապիտալ ներդրումների աճ	24.1	13.1	22.2
Ներմուծման իրական աճ	-1.6	7.4	20.8
Արտահանման իրական աճ	1.1	7.8	9.5
Անվանական փոխարժեքի արժեզրկում	-7.8	-9.1	-16.2
Դրամային զանգվածի աճ (M2) *(ժամանակահատվածի միջին)*	6.1	17.9	37.8
Փողի բազայի աճ *(ժամանակահատվածի միջին)*	7.0	13.6	39.0
Տոկոսով՝ ՀՆԱ-ում			
Բյուջեի պակասուրդ *(սեփականաշնորհման միջոցների ծախսումներով)*	-1.7	-2.3	-2.0
Ընթացիկ հաշվի պակասուրդ *(ներառյալ պաշտոնական տրանսֆերտները)*	-4.5	-3.4	-4.2
Համախառն ներդրումներ	23.9	25.2	26.3
Ազգային խնայողություններ	15.4	19.3	22.2

** Համախառն պահանջարկի և դրա բաղադրատարրերի 2005 թվականի ցուցանիշները ԿԲ գնահատումներն են:*

վերջին ամիսներին դրսևորված ընդլայնողական վարքագծի պայմաններում վերջինիս ազդեցությունը հիմնականում կդրսևորվի հաջորդ տարվա ընթացքում:

Նշված զարգացումների պարագայում 2005 թվականի ընթացքում դրամավարկային քաղաքականությունն իրականացվել է՝ ելնելով տնտեսությունում ընթացող դրամայնացման գործընթացի, ինչպես նաև բարձր տնտեսական աճի արդյունքում դրամի նկատմամբ ձևավորված պահանջարկի բավարարման անհրաժեշտությունից՝ առաջնայնությունը տալով գնաճի ծրագրային ցուցանիշի ապահովմանը:

Համախառն առաջարկ [1]

Վերջին չորս տարիներին տնտեսությունում արձանագրված զարգացման դրական միտումները շարունակվեցին նաև 2005 թվականին, և տնտեսական աճը, գերազանցելով նախատեսված մակարդակը, կազմեց 13.9%: Սակայն ճյուղային զարգացումները որոշակիորեն շեղվեցին նախորդ տարիների միտումներից:


Գյուղատնտեսության համախառն արտադրանքի բարձր աճին զուգահեռ, զգալի արագացել են շինարարության ճյուղի աճի տեմպերը:

Կապիտալ շինարարության ճյուղում արձանագրված ավելացված արժեքի 35.1% աճը 5.4 տոկոսային կետով նպաստել է ՀՆԱ իրական աճին: Ընդ որում, շինարարության ծավալների աճը գերազանցել է նախորդ տարվա մակարդակը, սակայն զիջել է 2002-2003 թվականներին գրանցված ցուցանիշներին: Ընդ որում, եթե 2002-2003 թվականներին կապիտալ շինարարության ծավալների աճը պայմանավորված էր Լինսի հիմնադրամի կողմից ֆինանսավորված մեծածավալ շինարարությամբ, ապա 2005 թվականին հիմնականում պայմանավորվել է տնտեսության մասնավոր հատվածի՝ բնակչության և ձեռնարկությունների կողմից շինարարության ծավալների ավելացմամբ:

[1] *«Համախառն առաջարկ» բաժնում ներկայացված տվյալների աղբյուրը ԱՎԾ «ՀՀ սոցիալ-տնտեսական իրավիճակը 2005 թվականի հունվար-դեկտեմբերին» տեղեկագիրն է:*

Տնտեսության հիմնական ճյուղերի մասնաբաժինը ՀՆԱ իրական աճում (տոկոսային կետ)

Ցուցանիշներ	2000	2001	2002	2003	2004	2005
Արդյունաբերություն	1.4	0.9	2.7	2.9	0.4	1.4
Գյուղատնտեսություն	-0.3	2.7	1.0	1.0	3.1	2.5
Շինարարություն	2.4	0.5	4.0	5.6	2.1	5.4
Ծառայություններ	1.2	4.0	4.2	3.6	4.3	3.7
Ապրանքների և ներմուծման զուտ հարկեր	1.2	1.5	1.4	0.8	0.2	0.9
Տնտեսական աճ *(%)*	5.9	9.6	13.2	13.9	10.1	13.9




Գրաֆիկ 1.1
Տնտեսության հիմնական ճյուղերի ավելացված արժեքի իրական աճը (%)

2005 թվականին գյուղատնտեսության նպաստումը տնտեսական աճին 0.6 տոկոսային կետով զիջել է նախորդ տարվա մակարդակը և կազմել 2.5 տոկոսային կետ՝ պայմանավորված այս ոլորտում արձանագրված ավելացված արժեքի 11.2% իրական աճով:

Արդյունաբերության ճյուղում տարվա ընթացքում արձանագրվել է որոշակի առաջընթաց՝ հանգեցնելով ճյուղի ավելացված արժեքի աճի տեմպերի վերականգնմանը: Այսպես, արդյունաբերության ավելացված արժեքն ավելացել է 7.4%-ով (նախորդ տարի՝ 2.1%-ով), որը տնտեսական աճին նպաստել է 1.4 տոկոսային կետով (նախորդ տարի՝ 0.4 տոկոսային կետով):

Չնայած կապի ծառայությունների ոլորտում 2005 թվականին տեղի ունեցած էական փոփոխությանը (բջջային հեռախոսակապի նոր օպերատորի մուտքը շուկա), ծառայությունների ոլորտում ավելացված արժեքի աճի տեմպերի անկում է արձանագրվել: Վերջինս, հանգեցնելով ավելացված արժեքի 10.6% աճի, էապես չփոփոխեց տնտեսական աճին ոլորտի նպաստման ցուցանիշը, որը նախորդ տարվա համեմատ նվազելով 0.6 տոկոսային կետով, կազմել է 3.7 տոկոսային կետ:

Թեև ՀՆԱ սեզոնայնությունը 2004 թվականի համեմատ գրեթե չի փոփոխվել, այնուամենայնիվ տնտեսական աճի տեմպը, սկսած տարվա երկրորդ կիսամյակից, մշտապես գերազանցել է նախորդ տարվա մակարդակը՝ պայմանավորված կապիտալ շինարարության ծավալների աճի տեմպերի ավելացմամբ:




Գրաֆիկ 1.2
ՀՆԱ ամսական դինամիկան

Արդյունաբերություն: 2005 թվականին արդյունաբերության ճյուղի զարգացումները զգալիորեն շեղվել են նախորդ տարիների միտումներից: Այսպես, թեև արդյունաբերության համախառն արտադրության ֆիզիկական ծավալի աճը, ինչպես և 2004 թվականին, մշտապես ցածր է եղել տնտեսական աճի ցուցանիշներից, սակայն արդյունաբերության իրական աճը մոտ 5 տոկոսային կետով գերազանցել է նախորդ տարվա ցուցանիշը:


Ընդ որում, 2005 թվականին արտադրության ծավալների աճը համաչափ չի բաշխվել ըստ արդյունաբերության ենթաճյուղերի: Ի տարբերություն նախորդ տարվա, երբ մշակող արդյունաբերության ենթաճյուղում արտադրության իրական ծավալները նվազել էին, 2005 թվականին դրանք զգալիորեն ավելացել են: Հակառակ միտում է արձանագրվել նաև հանքագործական արդյունաբերության ճյուղում. նախորդ

տարվա ընթացքում գրանցվել էր աճ, իսկ 2005 թվականին՝ արտադրության ծավալների նվազում:



Գրաֆիկ 1.3
Արդյունաբերության համախառն արտադրանքի իրական աճի և ՀՆԱ իրական աճի դինամիկան

Հանքագործական արդյունաբերության ճյուղում արտադրության 4.4% իրական նվազումը հիմնականում պայմանավորվել է մետաղի հանքաքարերի արդյունահանման ծավալների 4.6% նվազմամբ: Մասնավորապես՝ նվազել են ինչպես ոսկու, այնպես էլ գունավոր մետաղների արդյունահանման ծավալները: Ընդ որում, եթե ոսկու արդյունահանման անկումը պայմանավորվել է գործող հանքերում պաշարների նվազմամբ, ապա գունավոր մետաղների արդյունահանման ծավալների նվազումը՝ տարվա ընթացքում միջազգային շուկաներում գունավոր մետաղների գների աճի դանդաղմամբ:



Գրաֆիկ 1.4
Արդյունաբերության հիմնական ենթաճյուղերի մասնաբաժինը արդյունաբերության աճում (%)

2005 թվականին վերամշակող արդյունաբերության արտադրանքի ֆիզիկական ծավալն ավելացել է 9.7%-ով (նախորդ տարի նվազել էր 0.7%-ով): Արտադրության ծավալների ավելացումը արձանագրվել է հիմնականում մետաղագործական արդյունաբերության արտադրության մոտ 35% իրական աճի հաշվին, որը 7.1 տոկոսային կետով նպաստել է վերամշակող արդյունաբերության իրական աճին: Արդյունքում՝ ճյուղի տեսակարար կշիռը ամբողջ արդյունաբերության մեջ ավելացել է մոտ 7 տոկոսային կե-

Արդյունաբերության ճյուղերի տեսակարար կշիռները և իրական աճի տեմպերը

Արդյունաբերության ճյուղ	2002		2003		2004		2005	
	կշիռ (%)*	աճ (%)**	կշիռ (%)*	աճ (%)**	կշիռ (%)*	աճ (%)**	կշիռ (%)*	աճ (%)**
էլեկտրաէներգիա, գազ և ջրամատակարարում	24.4	-14.4	22.2	1.3	19.1	9.9	17.5	10.7
Հանքագործական արդյունաբերություն	8.9	16.8	11.0	2.4	17.8	8.7	17.4	-4.4
Վերամշակող արդյունաբերություն, որից՝	66.7	25.0	66.8	20.3	63.1	-0.7	65.1	9.7
Սննդի արդյունաբերություն	35.7	7.0	33.9	13.1	31.1	1.0	28.1	4.1
Մետաղագործական արդյունաբերություն	9.0	23.5	10.9	18.3	12.9	2.1	19.4	34.9
Ոսկերչական արտադրատեսակների արտադրություն	6.0	82.7	5.2	29.3	3.1	-15.3	3.7	26.1
Քիմիական արդյունաբերություն	2.1	-20.7	1.7	-17.5	2.0	54.9	2.5	14.0
Ծխախոտի արտադրություն	3.1	55.6	3.4	27.6	2.8	18.5	2.4	57.1
Մեքենաների և սարքավորումների արտադրություն	1.3	-30.6	1.4	18.1	1.2	14.2	2.1	-2.6
Ամբողջ արդյունաբերություն	100	16.1	100	15.1	100	2.1	100	7.5

** Տեսակարար կշիռը ամբողջ արդյունաբերության մեջ:*
*** Ճյուղի համախառն արտադրանքի իրական աճ:*

տով և կազմել 19.4%: Ճյուղում շարունակվող ներդրումները կայուն հիմք են ձևավորում հետագայում ճյուղի արտադրողականության, արտադրատեսակների և արտադրության ծավալների ավելացման համար: Աճի տեմպերի նման արագացումը պայմանավորվել է ֆերոմոլիբդենի և ցինկի խտանյութի արտադրության ծավալների՝ համապատասխանաբար 96.6% և 67.8% աճով:

Ինչպես և նախորդ տարի, ամենամեծ՝ 57.1% աճը արձանագրվել է քիմիական արդյունաբերությունում՝ 1.8 տոկոսային կետով նպաստելով վերամշակող արդյունաբերության իրական աճին: Ենթաճյուղում տարվա ընթացքում շարունակվել է սինթետիկ կաուչուկի արտադրության ծավալների արագացված աճը (2.1 անգամ): Նոր գործարանի շահագործման արդյունքում մոտ 2 անգամ ավելացել է նաև կաուստիկ սոդայի արտադրության ծավալը, որը, թերևս, ցածր տեսակարար կշիռ ունի քիմիական արդյունաբերության ենթաճյուղում:


Սննդի արդյունաբերությունում 2005 թվականին արձանագրված 4.1% իրական աճը հիմնականում պայմանավորվել է ոգելից խմիչքի և պահածոների արտադրության ծավալների ավելացմամբ: Այսպես, մրգերի և բանջարեղենի պահածոյացման ծավալներն ավելացել են 34.9%-ով, մրգահյութի արտադրության ծավալները՝ 27.8%-ով, իսկ գինու արտադրության ծավալները՝ 12.3%-ով:

Ընդհանուր առմամբ, տարվա ընթացքում արդյունաբերական արտադրանքը գրեթե ամբողջությամբ իրացվել է: Ընդ որում, նվազել են արդյունաբերական արտադրանքի արտահանման աճի տեմպերը՝ կազմելով 2%՝ նախորդ տարվա 8.6%-ի փոխարեն, որի արդյունքում արտահանված արդյունաբերական արտադրանքի տեսակարար կշիռը ողջ արդյունաբերության մեջ կազմել է 36.5%:

Գյուղատնտեսություն: 2005 թվականին, ինչպես և նախորդ տարի, բարենպաստ բնակլիմայական պայմանների արդյունքում արձանագրվել է գյուղատնտեսության համախառն արտադրանքի երկնիշ՝ 11.2% իրական աճ: Ընդ որում, ինչպես և 2004-ին, նման բարձր աճը հիմնականում պայմանավորվել է բուսաբուծության ենթաճյուղի արտադրության ծավալների ավելացմամբ:

Բարենպաստ բնակլիմայական պայմանների շնորհիվ տարվա ընթացքում բուսաբուծության համախառն արտադրանքն ավելացել է 14.9%-ով՝ նախորդ տարվա 20.1%-ի փոխարեն: Եթե 2004 թվականին դա տեղի է ունեցել հիմնականում հացահատիկի և կարտոֆիլի բերքի ավելացման, ապա 2005 թվականին՝ պտղի, խաղողի և բանջարեղենի բերքի ավելացման արդյունքում: Մասնավորապես, պտղի բերքն ավելացել է մոտ 2.8 անգամ, բանջարեղենինը՝ 10.5%-ով, իսկ խաղողինը՝ 10.4%-ով: Ընդ որում, վերը նշված մթերքների աճի մեծ մասն ապահովվել է Սյունիքում, Արմավիրում և Արարատում:

Այնուամենայնիվ, քանի որ բուսաբուծության ոլորտում բերքատվության աճը առավելապես պայմանավորվել է բարենպաստ բնակլիմայական պայմանների շնորհիվ, ուստի բուսաբուծության աճի շարունակական միտումն ապահովելու համար անհրաժեշտ են խոշոր ներդրումներ ճյուղում՝ ուղղված ինչպես ոռոգման համակարգի բարելավմանը, այնպես էլ բուսաբուծության նոր տեխնոլոգիաների ներդրմանը:




Գրաֆիկ 1.5
Գյուղատնտեսության ենթաճյուղերի դինամիկան 2003 - 2005 թթ.

2005 թվականին աճի տեմպը նվազել է անասնաբուծության ճյուղում: Ընդ որում, եթե մսի արտադրության ծավալների աճը, գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը 1.3 տոկոսային կետով, կազմել է 4.8%, ապա կաթի արտադրության աճի տեմպերը զիջել են նախորդ տարվա ցուցանիշը՝ կազմելով 7.1%: Ձվի արտադրության ծավալները, նախորդ տարվա 12.1% իրական աճի համեմատ, նվազել են 8%-ով:

Շինարարություն: Ի տարբերություն նախորդ տարվա, 2005 թվականին շինարարության ծավալների աճի տեմպը զգալի արագացել է, որի արդյունքում կապիտալ շինարարության իրական աճը կազմել է 34.2%՝ նախորդ տարվա 17.2%-ի փոխարեն: Ընդ որում, շինարարության

աճի մեծ մասը ֆինանսավորվել է ներքին աղբյուրների հաշվին:


2005 թվականին շինարարության ֆինանսավորման կառուցվածքում 4 տոկոսային կետով նվազել է արտաքին վարկերի և մարդասիրական օգնության միջոցների տեսակարար կշիռը և կազմել է 4%: Ներքին ֆինանսավորման աղբյուրների կառուցվածքում էական տեղաշարժ չի եղել, քանզի դրանցից յուրաքանչյուրի գծով արձանագրվել է զգալի ավելացում: Ընդ որում, բավականին բարձր՝ մոտ 50%-ով ավելացել են պետական բյուջեի կողմից ֆինանսավորված շինարարության ծավալները, մինչդեռ ձեռնարկությունների և բնակչության միջոցների հաշվին կատարված շինարարությունն ավելացել է համապատասխանաբար 39.1% և 38.1%-ով: Վերջինիս էապես նպաստել է նախորդող հինգ տարիների ընթացքում արձանագրված բարձր տնտեսական աճի պարագայում բնակչության եկամուտների շարունակական աճը, ինչպես նաև արտաքին ֆինանսական միջոցների ներհոսքը, որը, սակայն, արտացոլվել է ձեռնարկությունների կողմից ներդրումների ավելացման միջոցով:



Գրաֆիկ 1.6
Շինարարության ֆինանսավորման աղբյուրների կառուցվածքը 2001 - 2005 թթ.

Շինարարության 39%-ը իրականացվել է արտադրական նշանակության օբյեկտներում, ընդ որում՝ դրա մոտ կեսը ֆինանսավորվել է ձեռնարկությունների միջոցների հաշվին: Բնակչության կատարած կապիտալ շինարարության կառուցվածքում մոտ 8 տոկոսային կետով ավելացել է արտադրական նշանակության օբյեկտների շինարարությունը, որի արդյունքում բնակչության կողմից ֆինանսավորվել է արտադրական նշանակության օբյեկտների շինարարության 24%-ը:

Շինարարության ճյուղային կառուցվածքում մոտ 4 տոկոսային կետով ավելացել է արդյունաբերության տեսակարար կշիռը՝ հիմնականում վերամշակող արդյունաբերությունում իրականացված կապիտալ շինարարության ծավալների 2.4 անգամ ավելացման հաշվին: Միևնույն ժամանակ, չնայած տրանսպորտի և կապի ոլորտում շինարարության ծավալները 24.2%-ով ավելացել են, ընդհանուր ծառայությունների ոլորտում իրականացված կապիտալ շինարարության տեսակարար կշիռը ողջ շինարարության մեջ նվազել է 4 տոկոսային կետով և կազմել 38.6%: Կապի ոլորտում շինարարության աճը հիմնականում պայմանավորվել է տարվա երկրորդ կեսին բջջային հեռախոսակապի շուկա մուտք գործած նոր օպերատորի կողմից իրականացված ներդրումներով:



Գրաֆիկ 1.7
Շինարարության ճյուղային կառուցվածքը 2001- 2005 թթ.

2005 թվականին աճի բարձր տեմպեր են արձանագրվել բնակարանային շինարարությունում. ողջ շինարարության մեջ դրա տեսակարար կշիռն ավելացել է մոտ 2 տոկոսային կետով: Արդյունքում՝ բնակարանային շինարարությունը, իրական արտահայտությամբ ավելանալով մոտ 39%-ով՝ կազմել է ամբողջ շինարարության 46.6%-ը: Ինչպես և նախորդ տարիներին, դրա ֆինանսավորումը հիմնականում իրականացվել է բնակչության միջոցների, մասամբ էլ՝ ձեռնարկությունների միջոցների հաշվին:

Ծառայություններ: Ծառայությունների և առևտրի ոլորտում գրանցվել է 12.1% իրական աճ, որը վկայում է նախորդ տարիներին ճյուղում դրսևորված աճի միտումների շարունակման մասին:

Մասնավորապես՝ տրանսպորտի ճյուղում աճել են և՛ բեռնաշրջանառության, և՛ ուղևորաշրջանառության ցուցանիշները: Բեռնաշրջանառության 14.6% աճը հիմնականում ապահովվել է խողովակաշարային տրանսպորտով բեռնաշրջանառության 25% աճի հաշվին, որը կապված էր երկրում իրականացվող գազիֆիկացման գործընթացի ակտիվացման հետ: 3.6%-ով նվազել է երկաթուղային տրանսպորտով բեռնա-

շրջանառությունը. ավելացել են միայն ցեմենտի բեռնափոխադրումները, իսկ մյուս բոլոր ապրանքատեսակների բեռնափոխադրումների ծավալները նվազել են: Ուղևորաշրջանառության 4.1% աճը գրանցվել է ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորաշրջանառության 8%-ով ավելացման շնորհիվ, որին նպաստել է նաև տաքսիներով ուղևորաշրջանառության մոտ 3 անգամ աճը:


2005 թ. կապի ոլորտում պահպանվել են նախորդ տարի արձանագրված բարձր աճի միտումները. կապի ծառայություններից ստացված հասույթը իրական արտահայտությամբ աճել է 26.1%-ով՝ նախորդ տարվա 21.2%-ի փոխարեն: Դրան մեծապես նպաստել է 2005 թվականին ոլորտում արձանագրված էական տեղաշարժը՝ հուլիսի 1-ից բջջային հեռախոսակապի շուկայում սկսել է գործել նոր օպերատոր: Շուկայում մրցակցության ուժեղացման արդյունքում սակագները նվազել են, և 61.5%-ով ավելացել է մատուցված բջջային հեռախոսակապի ծառայությունների ծավալը: Բացի այդ, հանրապետությունում գործող հին հեռախոսակայանների թվայնացման շարունակական գործընթացի արդյունքում, 16.4%-ով ավելացել է նաև հեռախոսային խոսակցություններից ստացվող իրական հասույթը:

2005 թվականին շարունակվել է մանրածախ ապրանքաշրջանառության ծավալի աճի տեմպերի նվազման միտումը, որի արդյունքում իրական աճը, նախորդ տարվա համեմատ նվազելով մոտ 1 տոկոսային կետով, կազմել է 9.3%: Առևտրի շրջանառության առավելագույն աճը՝ 23.9%, տեղի է ունեցել խանութներում, որտեղ իրականացվող առևտուրը կազմում է ողջ առևտրաշրջանառության 47.5%-ը:

Գներ և սակագներ

2005 թվականի դրամավարկային քաղաքականության ծրագրով նախատեսվել էր տարեվերջի դրությամբ և միջին տարեկան կտրվածքով ապահովել համապատասխանաբար մինչև 3% և 2.2% գնաճ: Տարվա ընթացքում արձանագրված զարգացումների արդյունքում դեկտեմբերի դրությամբ գրանցվել է 0.2% գնանկում, իսկ միջին տարեկան գնաճը կազմել է 0.6%:

2005 թվականին գնաճի վրա իրենց ազդեցությունն են ունեցել ինչպես ներքին, այնպես էլ արտաքին գործոնները: Եթե առաջին եռամսյակում հիմնական գործոնները փոխարժեքի արժևորումն էր, որը ներմուծման գների նվազման միջոցով որոշակիորեն զսպել է գնաճը, և նախորդ տարվա վերջում պահանջարկի ընդլայնման լագային ազդեցությունը, ապա տարվա հաջորդ ամիսներին գնաճի վրա էական ազդեցություն է ունեցել գյուղատնտեսությունում արձանագրված բերքի աճի բարձր ցուցանիշը՝ հատկապես մրգի և բանջարեղենի:



Գրաֆիկ 1.8
Ծրագրային և փաստացի գնաճը (%)

Գնաճի սեզոնայնությունը 2005 թվականին ավելի է խորացել՝ հիմնականում պայմանավորված գյուղատնտեսությունում արձանագրված բարձր աճի արդյունքում տարվա երկրորդ և երրորդ եռամսյակներում դրսևորված ավելի խորը գնանկմամբ: Այսպես, եթե երկրորդ եռամսյակում ակնկալվում էր 1.8% գնաճ, իսկ երրորդ եռամսյակում՝ 4.3% գնանկում, ապա փաստացի արձանագրվել է համապատասխանաբար 2.2% և 5.0% գնանկում:


Գնաճն ըստ ապրանքների և ծառայությունների[2]: Բնականոն գնաճ: 2005 թվականին գնանկումը արձանագրվել է հիմնականում պարենային ապրանքների գների նվազման հաշվին. 2004 թվականի դեկտեմբերի համեմատությամբ պարենային ապրանքների[3] գները նվազել են 1.2%-ով, մինչդեռ ոչ պարենային ապրանքների և ծառայությունների գծով արձանագրվել է համապատասխանաբար 2.1% և 1.9% գնաճ:

Պարենային ապրանքների գնանկմանը առավելապես նպաստել է այնպիսի ապրանքախմբերի գների նվազումը, ինչպիսիք են՝ հացաբերքը (գնանկումը՝ 4.2%, նպաստումը պարենային ապրանքների գնանկմանը՝ 1.3 տոկոսային կետ), միրգը (գնանկումը՝ 17.4%, նպաստումը պարենային ապրանքների գնանկմանը՝ 1.0 տո-

[2] *Գնաճի ցուցանիշները 2004 թվականի դեկտեմբերի համեմատությամբ են:*
[3] *Ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ:*

կոսային կետ) և ձկնամթերքը (գնանկումը՝ 19%, նպաստումը պարենային ապրանքների գնանկմանը՝ 0.3 տոկոսային կետ): Գյուղատնտեսությունում բերքի զգալի աճի արդյունքում ամենից ավելի նվազել են դեղձի (-65.5%), սալորի (-51.5%), ելակի (-44.7%) և ծիրանի (-44.1%) գները, մինչդեռ տանձի և խաղողի գները նվազել են մոտ 11%-ով: Միևնույն ժամանակ, միջազգային շուկաներում ցորենի գների որոշակի նվազման պարագայում հացահատիկի գները նվազել են 33.2%-ով, որի արդյունքում մոտ 20%-ով նվազել են ալյուրի գները:


Պարենային ապրանքների խմբում 9.5%-ով ավելացել են բանջարեղենի գները՝ պայմանավորված դեկտեմբերին այս ապրանքախմբի գրեթե բոլոր ապրանքատեսակների գների անսպասելի բարձր աճով: Այսպես, նոյեմբերի դրությամբ, նախորդ տարվա դեկտեմբերի համեմատ, բանջարեղենի գները նվազել են 10.5%-ով, իսկ դեկտեմբերին արձանագրվել է այդ ապրանքախմբի գների 22.4% աճ՝ հիմնականում պայմանավորված բնակչության եկամուտների ավելացման արդյունքում ամանորյա տոներին բանջարեղենի նկատմամբ պահանջարկի զգալի ավելացմամբ: Այսպիսով՝ բանջարեղենի գների ավելացումը 1.1 տոկոսային կետով ավելացրել է պարենային ապրանքախմբի գնաճի ցուցանիշը:



Գրաֆիկ 1.9

Պարենային ապրանքների (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ) գների ինդեքսը 2003 - 2005 թթ. (յուրաքանչյուր տարվա համար որպես բազա է ընդունվել նախորդ տարվա դեկտեմբերը) (%)


Ոչ պարենային ապրանքային խմբում 2005 թվականին արձանագրված 2.1% գնաճը հիմնականում պայմանավորվել է արտաքին գործոնների ազդեցությամբ: Մասնավորապես՝ նավթի համաշխարհային գների աճի հետևանքով համապատասխանաբար 11.1%-ով, 9.8%-ով և 4.4%-ով բարձրացել են բենզինի, նավթի և դիզելային վառելիքի գները՝ 1.7 տոկոսային կետով նպաստելով ոչ պարենային ապրանքախմբի գների ավելացմանը: 15.6%-ով աճել են նաև հեղուկ գազի գները, որը 0.3 տոկոսային կետով ավելացրել է ոչ պարենային ապրանքների գնաճի ցուցանիշը: Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի որոշմամբ՝ մայիսից 26.1%-ով բարձրացվել է խմելու ջրի վարձը՝ 0.7 տոկոսային կետով նպաստելով ոչ պարենային ապրանքախմբի գնաճին: Զգալի՝ 27.3%-ով բարձրացել են նաև ցեմենտի գները:



Գրաֆիկ 1.10

Ոչ պարենային ապրանքների գների ինդեքսը 2003-2005 թթ. (յուրաքանչյուր տարվա համար որպես բազա է ընդունվել նախորդ տարվա դեկտեմբերը) (%)


Ծառայությունների ոլորտում գների աճը կազմել է 1.9%՝ հիմնականում պայմանավորված բնակկոմունալ ծառայությունների սակագների 1.3% և տրանսպորտի սակագների 1.7% աճով, ինչպես նաև մշակութային և կրթական ծառայությունների սակագների՝ համապատասխանաբար 10.5% և 7.9% ավելացմամբ, որը բնակչության եկամուտների զգալի ավելացման և երկրում զբոսաշրջության ակտիվացման արդյունք է: Միևնույն ժամանակ, ինտերնետային հեռախոսակապի զարգացման շնորհիվ 14.3%-ով նվազել են ՀՀ-ից դուրս հեռախոսային խոսակցությունների սակագները: Բացի այդ, բջջային հեռախոսակապի շուկայում տարվա երկրորդ կիսամյակից նոր օպերատորի գործունեությամբ պայմանավորված մրցակցության խորացումը հանգեցրել է բջջային հեռախոսակապի սակագների զգալի նվազման, որը, սակայն, չի անդրադարձել ՍԳԻ վրա, քանզի այս ծառայությունն ընդգրկված չէ սպառողական զամբյուղում:



Գրաֆիկ 1.11

Ծառայությունների սակագների ինդեքսը 2003 - 2005 թթ. (յուրաքանչյուր տարվա համար որպես բազա է ընդունվել նախորդ տարվա դեկտեմբերը) (%)

Գների վարքագծի ուսումնասիրման համար նպատակահարմար է դիտարկել նաև բնականոն գնաճը[4]: Բնականոն գնաճը 2005 թվականի դեկտեմբերին, նախորդ տարվա դեկտեմբերի համեմատ, կազմել է 0.5%, հունվար-դեկտեմբերին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ՝ 0.6%՝ հիմնականում պայմանավորված «Կարտոֆիլ» (0.2 տոկոսային կետ), «Ձու» (0.1 տոկոսային կետ), «Կարագ» (0.1 տոկոսային կետ) և «Տավարի միս» (0.1 տոկոսային կետ) ապրանքատեսակների գների աճով:



Գրաֆիկ 1.12
Գնաճի և բնականոն գնաճի փոփոխությունները (2004թ. դեկտեմբերը = 100)


ՀՆԱ դեֆլյատոր և ծյուղային գների ինդեքսներ[5]: 2005 թվականին ՀՆԱ դեֆլյատորը կազմել է 103.1%՝ նախորդ տարվա 106%-ի փոխարեն: Էական տեղաշարժեր են արձանագրվել ծյուղային գների կառուցվածքում. կապիտալ շինարարության և արդյունաբերության գների ինդեքսների աճն ուղեկցվել է գյուղատնտեսության գների ինդեքսի և բեռնափոխադրումների սակագների նվազմամբ:

Սպառողական գների ինդեքսի վրա ազդեցության տեսանկյունից ծյուղային դեֆլյատորներից առավել կարևորվում է գյուղատնտեսության գների ինդեքսը, որը 2005թ. նվազել է 9.3%-ով՝ նախորդ տարվա 9.6% աճի փոխարեն: Նշված գնանկումն արձանագրվել է բուսաբուծության հարուստ բերքի արդյունքում գների 26.5% նվազման հաշվին: Ընդ որում, զգալի է եղել մրգի, ինչպես նաև ցորենի և գարու իրացման գների նվազումը:

Տարվա ընթացքում կապիտալ շինարարության գների ինդեքսը աճել է 18.5%-ով՝ նախորդ տարվա 1.3%-ի փոխարեն: Այդ ցուցանիշի բարձր մակարդակը հիմնականում պայմանավորվել է շինմոնտաժային աշխատանքների, այդ թվում նաև՝ շինանյութերի գների բարձրացմամբ:

Նվազել են արդյունաբերության գների ինդեքսի աճի տեմպերը (2005թ.՝ 7.7%, 2004թ.՝ 21.7%): Դրա հիմնական պատճառը գունավոր մետաղների համաշխարհային գների աճի դանդաղման հետևանքով գունավոր մետաղագործության գների աճի տեմպի նվազումն էր (2005թ.՝ 30.6%, 2004թ.՝ 77.0%): Գների 4.9% անկում է արձանագրվել սննդի արդյունաբերության ոլորտում՝ 2004թ. 14.1% աճի փոխարեն: Վերջինս մասամբ պայմանավորվել է հացամթերքի և բուսական ծագման արտադրանքի գների որոշակի նվազմամբ:

Շարունակվել են նախորդ տարվանից դրսևորված՝ բեռնափոխադրումների սակագների նվազման միտումները, որի հետևանքով սակագների ինդեքսը նվազել է 10.4%-ով: Ավտոմոբիլային տրանսպորտի սակագների աճը նախորդ տարվա համեմատ ավելի բարձր է եղել՝ 8%, մինչդեռ տրանսպորտի մյուս տեսակների սակագները նվազել են ավելի շատ, քան 2004 թվականին:



Գրաֆիկ 1.13
Ծյուղային գների ինդեքսները 2004 - 2005 թթ.

Աշխատավարձ և աշխատանքի շուկա

2005 թվականին աշխատանքի շուկան շարունակել է զարգանալ տնտեսական ակտիվության աճին համահունչ: Պաշտոնապես գրանցված գործազրկության տարվա միջին մակարդակը նախորդ տարվա համեմատ նվազել է 1.5 տոկոսային կետով և կազմել 8.1%, ընդ որում՝ դեկտեմբերի դրությամբ գրանցվել է գործազրկության 7.6% մակարդակ: Միևնույն ժամանակ, հաշվետու տարվա ընթացքում գործազրկության նպաստի միջին չափը նախորդ տար-

[4] *2004 թվականի հունիսից ՀՀ կենտրոնական բանկը որպես բնականոն գնաճի պաշտոնական ցուցանիշ հրապարակում է 15 տոկոսով հատած միջինի մեթոդով հաշվարկված ցուցանիշը: Ցուցանիշի հաշվարկման մեթոդաբանությունը մանրամասն ներկայացված է «ՀՀ ԿԲ բանբեր» պարբերականում (2004 թվականի առաջին եռամսյակ):*

[5] *2005թ. հունվար-դեկտեմբերի ցուցանիշները հաշվարկվել են 2004թ. հունվար-դեկտեմբերի համեմատությամբ:*

վա համեմատ իրական արտահայտությամբ ավելացել է մոտ 1.8 անգամ և տարեվերջի դրությամբ կազմել 6044 դրամ:

Հատկանշական է այն փաստը, որ պաշտոնապես գրանցված գործազուրկների ընդամենը 14%-ն ունեն բարձրագույն կրթություն, մինչդեռ մոտ 80%-ը կազմում են միջնակարգ մասնագիտական և ընդհանուր միջնակարգ կրթություն ունեցող գործազուրկները: Աշխատուժի նկատմամբ պահանջարկի կառուցվածքում գերակշռել է բանվորական աշխատատեղերի համար ներկայացվող պահանջարկը՝ կազմելով ողջ պահանջարկի 80.7%-ը: Իսկ որակյալ աշխատուժի նկատմամբ պահանջարկի 62.5%-ը բաժին է ընկել բժշկական մասնագիտություններին:


Ինչ վերաբերում է գործազրկության տարածաշրջանային բաշխվածությանը, ապա միջին տարեկան գործազրկության առավել բարձր մակարդակ է արձանագրվել Սյունիքում (17.7%), Շիրակում (17.5%) և Լոռիում (17.2%), իսկ ամենացածր մակարդակը՝ Արագածոտնում՝ 1.9%:

Տնտեսական աճի շարունակական բարձր մակարդակի պայմաններում աշխատուժի նկատմամբ պահանջարկի անընդհատ ավելացման և դրա արդյունքում գործազրկության մակարդակի նվազման հետ մեկտեղ, 2005 թվականի ընթացքում հանրապետությունում շարունակվել է արձանագրվել աշխատավարձի աճ: 2005 թվականի հունվար - դեկտեմբերին, նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ, միջին ամսական անվանական աշխատավարձը իրական արտահայտությամբ ավելանալով 18.7%-ով, դեկտեմբերի վերջի դրությամբ կազմել է մոտ 65 հազար դրամ:

Ընդ որում, աշխատավարձը բարձրացել է տնտեսության բոլոր ճյուղերում. միջին ամսական աշխատավարձի առավելագույն՝ մոտ 37% աճ է գրանցվել սոցիալական ոլորտում, մինչդեռ տարվա ընթացքում տնտեսական բարձր ակտիվություն ցուցաբերած շինարարության և արդյունաբերության ոլորտներում այն կազմել է համապատասխանաբար՝ 15.2% և 14.6%: Տնտեսական աշխուժացման և աշխատուժի շուկայում մրցակցության ավելացման արդյունքում ըստ տնտեսության ճյուղերի աշխատավարձի անհավասարաչափ բաշխումը որոշ չափով մեղմվել է: 2005 թվականին շինարարության և արդյունաբերության ճյուղերի միջին աշխատավարձը գերազանցել է հանրապետական միջին մակարդակը համապատասխանաբար 34%-ով և 32%-ով (նախորդ տարի՝ համապատասխանաբար 42.8% և 44.3%): Այնուամենայնիվ, վարկավորման և ապահովագրության ոլորտի միջին աշխատավարձը հանրապետությունում ամենաբարձրն է և միջին հանրապետականին գերազանցում է ավելի քան 3.3 անգամ:

Համախառն պահանջարկ [6]

2005 թվականին շարունակվել է արձանագրվել համախառն պահանջարկի՝ սպասվածից բարձր աճ, որի արդյունքում տնտեսական աճը կազմել է 13.9%: Որոշակի փոփոխություն է գրանցվել համախառն պահանջարկի կառուցվածքում, որտեղ ներքին պահանջարկի՝ նախորդ տարվա աճի պահպանման պարագայում էապես շեղվել են արտաքին հատվածի ցուցանիշները՝ հանգեցնելով զուտ արտահանման կրճատմանը:




Գրաֆիկ 1.14
Համախառն պահանջարկի տարրերը

Վերջին տարիների բարձր տնտեսական աճի արդյունքում բնակչության եկամուտների ավելացման, ինչպես նաև մասնավոր տրանսֆերտների շարունակական մեծածավալ ներհոսքի պարագայում հաշվետու տարվա ընթացքում պահպանվել են տնտեսության ներքին պահանջարկի աճի բարձր տեմպերը: Այնուամենայնիվ, ներքին պահանջարկի կառուցվածքում մասնավոր հատվածի ծախսումների աճի տեմպերի նվազման հետ մեկտեղ, արձանագրվել է պետական հատվածի ծախսերի ավելացում, որի արդյունքում մասնավոր հատվածի ծախսերի տեսակարար կշիռը ներքին պահանջարկի մեջ կրճատվելով 1.5 տոկոսային կետով, կազմել է 86.8%:

Մասնավոր տրանսֆերտների աճի տեմպերի կրճատման պարագայում 2005 թվականին նվազել են նաև մասնավոր սպառման իրական աճի տեմպերը՝ կազմելով 9.7%՝ նախորդ տարի՝ 10.2%: Արդյունքում՝ մոտ 7 տոկոսային կետով

[6] *Համախառն պահանջարկի բաղադրատարրերի իրական աճի ցուցանիշները ՀՀ ԿԲ գնահատումներն են:*


նվազել է ՀՆԱ-ում մասնավոր սպառման տեսակարար կշիռը և կազմել 77.2%:



Գրաֆիկ 1.15
Սպառման կշիռը ՀՆԱ-ում

Չնայած 2005 թվականին մասնավոր ներդրումների աճը գերազանցել է դրամավարկային ծրագրով կանխատեսվող մակարդակը, այնուամենայնիվ այն զիջել է նախորդ տարվա ցուցանիշը՝ կազմելով 22.2% (2004 թվականին՝ 24.1%): Չնայած դրան, համախառն ներդրումների կառուցվածքում մասնավոր ներդրումների տեսակարար կշիռը մնացել է գրեթե անփոփոխ և կազմել մոտ 84%: Մասնավոր ներդրումների մեծ մասը, ինչպես և նախորդ տարիներին, ուղղվել է արդյունաբերության և ծառայությունների ոլորտ:

2005 թվականին պետական հատվածի ծախսումները եղել են ծրագրով նախատեսվածի շրջանակներում՝ իրական արտահայտությամբ ավելացել են 27.3%-ով: Պետական ներդրումների աճը զիջել է ծրագրով նախատեսված ցուցանիշը՝ կազմելով 23.4%: Արդյունքում՝ պետական ծախսերի ազդեցությունը տնտեսության վրա փոքր-ինչ ընդլայնող էր:



Գրաֆիկ 1.16
Համախառն ներդրումների կառուցվածքը

Պետական սպառման աճը, նախորդ տարվա համեմատ ավելանալով մոտ 4 տոկոսային կետով, կազմել է 20.3%:

2005 թվականին շարունակվել են արտահանման և ներմուծման կառուցվածքում նախորդ տարի դրսևորված միտումները: Այսպես, արձանագրվել են գունավոր մետաղների, ինչպես նաև պատրաստի սննդի արտադրանքի արտահանման աճի բարձր տեմպեր, իսկ ներմուծման կառուցվածքում, բացի սպառման ապրանքներից, բարձր աճ է արձանագրվել ներդրումային ապրանքների գծով: Արդյունքում՝ արտահանման ծավալների իրական աճը կազմել է 9.5%, իսկ ներմուծումը՝ ավելացել 20.8%-ով:

ՀՆԱ բաղադրատարրերի իրական աճը նախորդ տարվա նկատմամբ

Ցուցանիշներ	2005 (փաստացի)	2005 (ծրագրային)	2004 (փաստացի)
Իրական ՀՆԱ	13.9	8.0	10.1
Ներքին պահանջարկ	13.2	9.1	11.1
Սպառում	11.1	7.5	10.9
Պետական	20.3	20.4	16.2
Մասնավոր	9.7	6.0	10.2
Կապիտալ ներդրումներ	22.4	15.8	12.3
Պետական	23.4	30.5	-26.8
Մասնավոր	22.2	13.1	24.1
Ներմուծում	20.8	7.4	-1.6
Արտահանում	9.5	7.8	1.1

1.2. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ[1]


Ըստ «2005 թվականի ՀՀ պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի՝ ՀՀ պետբյուջեի եկամուտներն ու դրամաշնորհները ՀՆԱ-ում պետք է կազմեին 16.4%, հարկերը՝ 14.7 %, իսկ ծախսերը՝ 18.7 %: Տնտեսական աճի ձևավորված բարձր մակարդակը նպաստել է ՀՀ պետական բյուջեի հարկերի տարեկան ծրագրված մակարդակի գերազանցմանը, սակայն արձանագրվել է հարկեր/ՀՆԱ ցուցանիշի՝ ծրագրվածից ցածր մակարդակ:

Ըստ հաշվարկված հարկաբյուջետային ազդակների՝ համախառն պահանջարկի վրա հարկաբյուջետային քաղաքականությունն ունեցել է 1.2 ընդլայնող ազդեցություն (եկամուտների ազդակը՝ 0.6 զսպող, ծախսերի ազդակը՝ 1.8 ընդլայնող): Հատկանշական է, որ հարկաբյուջետային քաղաքականության ընդլայնող ազդեցությունը հատկապես դրսևորվել է տարվա երկրորդ կեսին՝ պայմանավորված դեկտեմբերին կատարված մեծածավալ ծախսերով:


ՀՀ պետական բյուջեի եկամուտներ

2005 թվականին ՀՀ պետբյուջեի եկամուտներն ու դրամաշնորհները, նախորդ տարվա համեմատությամբ, ավելացել են 25.2%-ով, այդ թվում՝ հարկերն ու տուրքերը՝ 20.4%-ով, իսկ դրամաշնորհները՝ 0.9%-ով: Գրանցվել է ոչ հարկային եկամուտների և կապիտալ եկամուտների աննախադեպ աճ՝ համապատասխանաբար 143% և 36 %: Դա պայմանավորվել է Ջանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի սեփականաշնորհումից և Երևանում տեղաբաշխված պետական սեփականություն հանդիսացող հողերի օտարումից ստացված մուտքերով: Ընդորում, եկամուտների հավաքագրման մակարդակը ծրագրային ցուցանիշները գերազանցել է տարվա բոլոր ամիսներին:

ՀՀ պետբյուջեի եկամուտներն ու դրամաշնորհները կազմել են ՀՆԱ 16.7%-ը (2004 թ.՝ 15.7%), իսկ հարկերն ու տուրքերը՝ ՀՆԱ 14.4 %-ը (2004 թ.՝ 14.1 %, 2003 թ.՝ 14.05%):



Գրաֆիկ 1.17
ՀՀ պետական բյուջեի եկամուտների և դրամաշնորհների կառուցվածքը



Գրաֆիկ 1.18
ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտները 2004 և 2005 թվականներին

2005 թվականի հարկային եկամուտների կառուցվածքում փոքր-ինչ նվազել է անուղղակի[2] հարկերի կշիռը և կազմել հարկային եկամուտների և տուրքերի 62.8%-ը (2004թ.՝ 64.1%), իսկ նախորդ տարվա համեմատությամբ անուղղակի հարկերի աճը կազմել է 18 տոկոս: Ուղղակի[3] հարկերը նախորդ տարվա համեմատությամբ աճել են մոտ 40 տոկոսով, ինչը հիմնականում ապահովվել է շահութահարկի և եկամտահարկի հաշվին: Վերջիններիս աճը նախորդ տարվա համեմատությամբ կազմել է համապատասխանաբար 45.4 տոկոս և 30.4 տոկոս: Հարկային եկամուտների կառուցվածքում նախորդ տարվա համեմատ 3.2 տոկոսով աճել է ուղղակի հարկերի տեսակարար կշիռը՝ կազմելով 22.8 տոկոս: Ուղղակի և անուղղակի հարկերը ՀՆԱ-ում կազ-

[1] *Վերլուծության ժամանակ օգտագործվել են ԱՎԾ «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2005 թվականի հունվար-դեկտեմբերին» տեղեկագիրը և ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից ՀՀ ԿԲ-ին տրամադրված 2005 թվականի պետական բյուջեի նախնական տարեկան ճշգրտված ծրագիրը:*

[2] *Անուղղակի հարկերը ներառում են ավելացված արժեքի հարկը, ակցիզահարկը և մաքսատուրքը:*

[3] *Ուղղակի հարկերը ներառում են եկամտահարկը, շահութահարկը, հողի հարկը և գույքահարկը:*

մել են 3.3 տոկոս և 9.1 տոկոս (2004թ.՝ համապատասխանաբար 2.7 տոկոս և 9.0 տոկոս): Պետական բյուջեի այլ հարկերի տեսակարար կշիռը 2004 թվականի համեմատությամբ նվազել է 1.9 տոկոսային կետով և կազմել հարկերի 14.4 տոկոսը:


2005 թվականին շարունակվել են հարկերի հավաքագրման անհամաչափության հարթման միտումները. տարվա միջին ամսական հարկերի 18.4 տոկոսը բաժին է ընկել ամսվա վերջին երեք օրերին, մինչդեռ նախորդ տարի նշված ցուցանիշը կազմել է 24.7 տոկոս, իսկ 2003 թվականին՝ 43.6 տոկոս:

ՀՀ պետական բյուջեի ծախսեր

2005 թվականին ՀՀ պետական բյուջեի ծախսերի փաստացի ցուցանիշը գրեթե ապահովել է ծրագրային մակարդակը կամ կազմել է տարեկան ճշտված ծրագրի 99 տոկոսը[4]: Նախորդ տարվա համեմատ ծախսերի աճը կազմել է 33.5[5] տոկոս, ընդ որում՝ ընթացիկ ծախսերն ավելացել են 22.7 տոկոսով, կապիտալ ծախսերը՝ 120.2 տոկոսով, իսկ զուտ վարկավորումը՝ 25.8 տոկոսով: ՀՆԱ-ում պետբյուջեի ծախսերն ավելացել են 2.1 տոկոսային կետով և կազմել 17.7 տոկոսը:

Ընթացիկ ծախսերի մեջ պետական սպառումը նախորդ տարվա համեմատ աճել է 25.9 տոկոսով, իսկ ՀՆԱ-ում՝ 0.7 տոկոսային կետով և կազմել ՀՆԱ 9.3 տոկոսը: Պետական տրանսֆերտները ՀՆԱ-ում աճել են 0.2 տոկոսային կետով և կազմել ՀՆԱ 3.4 տոկոսը:

Հատկանշական է, որ կապիտալ ծախսերը ՀՆԱ-ում աճել են 1.5 տոկոսային կետով և կազմել ՀՆԱ 3.2 տոկոսը: Դա հիմնականում պայմանավորվել է ներքին ֆինանսավորման աղբյուրների հաշվին իրականացված կապիտալ ծախսերի աճով և կազմել ընդհանուր կապիտալ ծախսերի 75 տոկոսը (2004 թ.՝ 46 տոկոս, 2003թ.՝ 21.2 տոկոս): Ներքին ֆինանսավորման հաշվին կապիտալ ծախսերի աճի նման միտումը դրական նախադրյալ է ինչպես կարճաժամկետ, այնպես էլ երկարաժամկետ տնտեսական աճի կայունության ապահովման համար: Կապիտալ ծախսերում նվազել է արտաքին աղբյուրների հաշվին իրականացվող ծախսերի տեսակարար կշիռը (կապիտալ ծախսերի 25 տոկոսը): Ընդ որում, արտաքին աղբյուրների հաշվին իրականացվող ծախսերը նախորդ տարվա համեմատ նվազել են 29 տոկոսով, ինչը արտաքին նպատակային ծրագրերի նախատեսված ծավալների թերստացումների հետևանք է:



Գրաֆիկ 1.19
ՀՀ պետական բյուջեի ծախսերի կառուցվածքը 2004 - 2005 թթ. (մլն ՀՀ դրամ)


Պետական ծախսերի 2005 թվականի ճշգրտված ծրագրի կատարման արդյունքում Գանձապետարանի միասնական հաշվի մնացորդը տարեվերջին, 2004 թ. տարեվերջի համեմատ, նվազել է 20.2 մլրդ դրամով: Նշենք, որ տարվա առաջին կեսին արձանագրվել է միասնական հաշվի միջոցների կուտակում, իսկ երկրորդ կեսին՝ ծախսում: ՀՀ կենտրոնական բանկում Կառավարության ընդհանուր միջոցների միջին ամսական մնացորդը կազմել է 56.1 մլրդ դրամ, այն դեպքում, երբ նախորդ տարի Կառավարության միջոցների միջին ամսական մակարդակը 38 մլրդ դրամ էր:

ՀՀ պետական բյուջեի պակասուրդ

Պետական բյուջեի պակասուրդը 2005 թվականին կազմել է 44.9 մլրդ դրամ կամ ՀՆԱ 2 %-ը՝ ծրագրված՝ 2.3 %-ի փոխարեն: Շեղման հիմնական պատճառը ծրագրվածի նկատմամբ ՀՆԱ ավելի բարձր մակարդակի ձևավորումն էր, ինչպես նաև արտաքին աղբյուրներից ֆինանսավորվող ՕԻԳ-երի նախատեսված միջոցների թերստացումը: Պակասուրդի ֆինանսավորումն ունեցել է հետևյալ կառուցվածքը՝ արտաքին աղբյուրներից զուտ ֆինանսավորումը կազմել է պակասուրդի 34.5 տոկոսը, իսկ ներքին աղբյուրներից ֆինանսավորումը՝ 65.5 տոկոսը: Արտաքին աղբյուրներից ֆինանսավորումը կազմել է ծրագրվածի մոտ 45 տոկոսը՝ պայմանավորված ՕԻԳ-երի թերստացումներով և Աղքատության կրճատման աջակցության վարկի նախատեսված մասնաբաժնի չստացմամբ (ակնկալվում է ստա-

[4] *Ծախսերում ներառված չեն արտաքին աղբյուրներից ֆինանսավորվող ՕԻԳ-երի միջոցները:*
[5] *ՕԻԳ -երը ներառյալ:*

նալ 2006 թվականին): Պետական աժեթղթերի տեղաբաշխումից զուտ մուտքերը 2005 թ. կազմել են 6.3 մլրդ դրամ կամ ներքին ֆինանսավորման 52.6 տոկոսը:



Գրաֆիկ 1.20
ՀՀ պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորման աղբյուրների կառուցվածքը

ՀՀ հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունների կոորդինացում

2005 թվականին հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունների կոորդինացման աշխատանքները դարձյալ իրականացվել են ՀՀ պետական բյուջեի ծրագրերի անհամադրելիության պայմաններում: Բյուջեի ամսական ծրագրերի և ՀՀ 2005 թվականի պետական բյուջեի եռամսյակային համամասնություններում ներկայացված ցուցանիշների միջև զգալի շեղումները հետևանք են նշված երկու ծրագրերում ցուցանիշների ծրագրման տարբեր մեթոդաբանությունների: Նշված իրավիճակում դրամավարկային քաղաքականության ծրագրման և բանկային համակարգի իրացվելիության կառավարման գործընթացն ուղեկցվել է հարկաբյուջետային հատվածից բխող անորոշություններով: Դրա վառ դրսևորումը դեկտեմբերին իրականացված բյուջեի ծախսերն էին, ինչը գերազանցել է ամսվա համար ծրագրված ցուցանիշը մոտ 11 մլրդ դրամով:


2005 թվականին դրամավարկային քաղաքականության և բանկային իրացվելիության կառավարման գործընթացում կարևոր միջոցառում էր ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից լրացուցիչ արժեթղթերի թողարկումը (տարվա ընթացքում՝ 15.6 մլրդ դրամ) և տեղաբաշխումից ստացվող մուտքերի ավանդադրումը ՀՀ ԿԲ-ում, իսկ հունիսից դրան ավելացավ նաև ՀՀ ԿԲ կողմից սեփական արժեթղթերի թողարկումն ու տեղաբաշխումը: ՀՀ արժեթղթերի շուկայում վերջին տարիներին շարունակական է դարձել պետական արժեթղթերի տոկոսադրույքների նվազման միտումը՝ արժեթղթերի ժամկետայնության երկարացմանը զուգընթաց: Այսպես, 2005 թվականին պետական միջին ժամկետային արժեթղթերի եկամտաբերությունը կազմել է 5.09% (2004 թ.՝ 5.6%), իսկ պետական երկարաժամկետ արժեթղթերի եկամտաբերությունը՝ 8.83% (2004 թ.՝ 9.27 %):

Դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականությունների կոորդինացման ոլորտում վերջին տարիներին դրսևորված միտումները վկայում են, որ կոորդինացման արդյունավետության բարձրացման տեսանկյունից առավել կարևոր է պետական բյուջեի եռամսյակային ծրագրերի ճշգրտման մեխանիզմների կիրառումը, բյուջեի ցուցանիշների ճշգրտված համամասնությունների հրապարակումը, ինչպես նաև ամսական ծրագրերի ու եռամսյակային համամասնություններով ներկայացված ցուցանիշների միջև շեղումների պատճառների մեկնաբանումը:

1.3. ԱՐՏԱՔԻՆ ՀԱՏՎԱԾ

Արտաքին աշխարհի հետ Հայաստանի տնտեսության ինտեգրմանը զուգընթաց, առավել կարևորվում են տնտեսության արտաքին հատվածի դերն ու նշանակությունը: Դեռևս 2004 թվականից դրսևորված մի շարք երևույթներ շարունակվեցին նաև 2005 թվականի ընթացքում: Մասնավորապես՝ արձանագրվել է նավթի ու բենզինի միջազգային գների աճ, իսկ ոսկու և ոչ թանկարժեք մետաղների գները զգալիորեն են աճել: Ի տարբերություն 2004 թվականի, 2005 թվականին ուժեղացել է ԱՄՆ դոլարի դիրքը միջազգային այլ արժույթների նկատմամբ: Դրա հետ մեկտեղ, Հայաստանի տնտեսությունում վերջին տարիներին գրանցված բարձր տնտեսական ակտիվությունը պահպանվել է նաև 2005 թվականին՝ ուղեկցվելով արտաքին ապրանքաշրջանառության ծավալների զգալի ավելացմամբ, մասնավոր տրանսֆերտների ու զուտ գործոնային եկամուտների աճով, ընթացիկ հաշվի համեմատաբար կայուն մակարդակով:

Խնայողությունների ու ներդրումների միջև ճեղքվածքը գրեթե պահպանել է նախորդ տարվա մակարդակը, ընդ որում՝ պետական հատվածում ճեղքվածքի խորացումը փոխհատուցվել է մասնավոր հատվածում ճեղքվածքի կրճատմամբ:



Գրաֆիկ 1.21
Պետական և մասնավոր հատվածների զուտ ֆինանսավորման պահանջի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում (S-I)


2005 թվականի դրամավարկային քաղաքականության ծրագրով նախատեսվել էր անվանական արժեքով ընթացիկ հաշվի պակասուրդի գրեթե կայուն մակարդակ: Ընթացիկ հաշվի կայուն մակարդակը պայմանավորված էր լինելու ապրանքների ու ծառայությունների հաշվեկշիռների պակասուրդի խորացմամբ, որը փոխհատուցվելու էր եկամուտների, մասնավոր ու պետական տրանսֆերտների աճով: Նման պայմաններում ակնկալվում էր ընթացիկ հաշիվ/ՀՆԱ ցուցանիշի էական բարելավում, որը կազմելու էր 3.4 տոկոս՝ պայմանավորված ՀՆԱ-ի բարձր աճով և անվանական փոխարժեքի արժեքավորմամբ:

2004 թվականի համեմատությամբ կանխատեսվում էր օտարերկրյա ուղղակի ներդրումների զգալի աճ՝ կապված պետական խոշոր ձեռնարկության՝ Պղնձամոլիբդենային կոմբինատի սեփականաշնորհման ու մի շարք ձեռնարկությունների կողմից խոշորածավալ ներդրումային ծրագրերի իրականացման հետ: Արդյունքում՝ կապիտալ ու ֆինանսական հաշվով ստացվող միջոցները գերազանցելու էին ընթացիկ հաշվի պակասուրդը, ինչը հանգեցնելու էր Կենտրոնական բանկի համախառն արտաքին պահուստների ավելացման:

Ըստ դրամավարկային քաղաքականության ծրագրի՝ ապրանքների արտահանման ու ներմուծման ծավալների 12.5 տոկոս և 12.3 տոկոս աճի արդյունքում, արտաքին ապրանքաշրջանառության ծավալն ավելանալու էր 12.4 տոկոսով՝ կազմելով 2.2 մլրդ ԱՄՆ դոլար:


2005 թվականին ապրանքների արտահանումը (կրեդիտ) կազմել է 981.4 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա համեմատ ավելանալով 243.1 մլն ԱՄՆ դոլարով (32.9%): Ապրանքների արտահանման բարձր աճը հիմնականում պայմանավորվել է արտաքին առևտրի պայմանների լավացմամբ՝ միջազգային շուկաներում զգալիորեն աճել են ոչ թանկարժեք մետաղների գները: Մասնավորապես՝ պղնձի միջազգային գները 2005 թվականին բարձրացել են 28%-ով, իսկ մոլիբդենի գները՝ մոտ 2 անգամ, ինչը բարենպաստ ազդեցություն է ունեցել Հայաստանի արտահանման ծավալների աճի վրա: Այս առումով, ապրանքների արտահանման աճում զգալի մասնաբաժին ունի «Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» ապրանքախումբը, որի արտահանումը 2005 թվականին ավելացել է 178 մլն ԱՄՆ դոլարով (2.3 անգամ): Նման բարձր աճի արդյունքում այս ապրանքախմբի տեսակարար կշիռը էականորեն մեծացել է ընդհանուր արտահանման կառուցվածքում՝ կազմելով 33.2%: Արտահանման աճին նպաստել են նաև «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» և «Պատրաստի սննդի արտադրանք» ապրանքախմբերը: «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի արտահանումը (ի տարբերություն 2004 թ. նվազման) 2005 թվականին ավելացել է 37.2 մլն ԱՄՆ դոլարով (12.4%-ով), իսկ «Պատրաստի

սննդի արտադրանք» ապրանքախմբի արտահանումը՝ 27.5 մլն ԱՄՆ դոլարով (39.7%-ով): Ապրանքախմբի արտահանման աճը հիմնականում պայմանավորվել է ոգելից խմիչքների, մասնավորապես՝ կոնյակի արտահանման ծավալների աճով:



Գրաֆիկ 1.22
Արտահանման կառուցվածքը՝ ըստ հիմնական ապրանքատեսակների (մլն ԱՄՆ դոլար)


Արտահանման աշխարհագրական կառուցվածքում տեղի են ունեցել որոշակի փոփոխություններ: 2004 թվականի համեմատ աճել է Ռուսաստանի տեսակարար կշիռը, որը կազմել է 12.5%՝ նախորդ տարվա 10.8%-ի փոխարեն: Սա հիմնականում պայմանավորվել է Ռուսաստան արտահանվող կոնյակի արտահանման ծավալների աճով: Ընդհանուր արտահանման մեջ ԱՊՀ երկրների տեսակարար կշիռը 2005 թվականին կազմել է 18.9%:



Գրաֆիկ 1.23
Արտահանման կառուցվածքը՝ ըստ երկրների (մլն ԱՄՆ դոլար)


2005 թվականին արտահանման մեջ զգալիորեն աճել է Եվրոմիության երկրների տեսակարար կշիռը՝ կազմելով 46.6%՝ նախորդ տարվա 35.3%-ի փոխարեն: Նման աճը տեղի է ունեցել Նիդեռլանդների ու Գերմանիայի հաշվին, որոնց տեսակարար կշիռները կազմել են 13.7% և 15.5%՝ նախորդ տարվա 3.6%-ի և 11.5%-ի փոխարեն: Այս երկրներ արտահանման աճը հիմնականում «Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» ապրանքախմբի արտահանման ավելացման արդյունք է: Բացի այդ, նվազել են ԱՄՆ ու Իսրայել արտահանման կշիռները:

Ապրանքների ներմուծումը (դեբետ) 2005 թվականին կազմել է 1566.1 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա համեմատ ավելանալով 369.8 մլն ԱՄՆ դոլարով (30.9%): Ընդ որում՝ ապրանքների ներմուծման բարձր աճ գրանցվել է ներմուծման կառուցվածքում ընդգրկված գրեթե բոլոր ապրանքախմբերի գծով, բացառությամբ «Բուսական ծագման արտադրանք» և «Մանածագործական իրեր» ապրանքախմբերի: Վերջին տարիներին գրանցված բարձր տնտեսական ակտիվությունը, եկամուտների շարունակական աճը, փոխարժեքի արժեքավորումը հանգեցրել են ներմուծվող ապրանքների նկատմամբ պահանջարկի բարձր աճի: Ներմուծման աճին մեծապես նպաստել են զգալի տեսակարար կշիռ ունեցող ապրանքախմբերը: Դրանցից առաջինը «Մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ» ապրանքախումբն է, որի ներմուծումն ավելացել է 91.5 մլն ԱՄՆ դոլարով (67.5%-ով): Այս ապրանքախմբի ներմուծման աճը տեղի է ունեցել մի շարք խոշոր ձեռնարկությունների կողմից ներդրումային ծրագրերի իրականացման նպատակով մեքենասարքավորումների ներկրման հաշվին: Հաջորդը «Հանքահումքային արտադրանք» ապրանքախումբն է, որի ներմուծումն ավելացել է 85.7 մլն ԱՄՆ դոլարով (40.9%-ով)՝ հիմնականում ի հաշիվ բենզինի ու գազի ներկրման աճի, ինչպես նաև բենզինի գների բանկացման: Բացի այդ, զգալի ավելացել է նաև մի շարք այլ ապրանքախմբերի ներմուծումը, մասնավորապես՝ «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի ներմուծման ծավալներն ավելացել են 56.1 մլն ԱՄՆ դոլարով (19.2%-ով): «Վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ» ապրանքախմբի ներմուծումը 2005 թվականին ավելացել է 53.4 մլն ԱՄՆ դոլարով (57.7%-ով)՝ հիմնականում պայմանավորված ավտոմեքենաների ներկրման զգալի ավելացմամբ, ինչը բնակչության եկամուտների աճի ու սպառողական վարկերի շուկայի ակտիվացման արդյունք է: Բարձր աճ են ունեցել նաև «Պատրաստի սննդի արտադրանք», «Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր», «Քիմիա և դրա հետ կապված արդյունաբերության ճյուղերի արտադրանք» ապրանքախմբերը:



Գրաֆիկ 1.24
Ներմուծման կառուցվածքը՝ ըստ հիմնական ապրանքատեսակների (մլն ԱՄՆ դոլար)


2005 թվականին ներմուծման աշխարհագրական կառուցվածքում էական փոփոխություններ տեղի չեն ունեցել: ԱՊՀ երկրների տեսակարար կշիռը ներմուծման մեջ կազմել է 22.3%, իսկ Եվրոմիության երկրների տեսակարար կշիռը՝ 33.4%:



Գրաֆիկ 1.25
Ներմուծման կառուցվածքը՝ ըստ երկրների (մլն ԱՄՆ դոլար)

Ապրանքների արտահանման ու ներմուծման նշված զարգացումների պայմաններում արտաքին ապրանքաշրջանառության ծավալն ավելացել է 31.7%-ով՝ կազմելով 2.5 մլրդ ԱՄՆ դոլար: Ապրանքների արտահանումը 2005 թվականին ֆինանսավորել է ներմուծման 62.7%-ը (2004 թ.՝ 61.7%): Ապրանքային հաշվեկշռի պակասուրդը նույն ժամանակահատվածում խորացել է 126.8 մլն ԱՄՆ դոլարով (27.7%)՝ կազմելով 584.7 մլն ԱՄՆ դոլար: Այնուամենայնիվ, ապրանքային հաշվեկշռի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում կազմել է 11.9% (2004 թ.՝ 12.6%):

2005 թվականին 16.8 մլն ԱՄՆ դոլարով բարելավվել է նաև «Ծառայություններ» հոդվածի բացասական հաշվեկշիռը՝ պայմանավորված ծառայությունների ներմուծման համեմատ արտահանման առավել բարձր աճով: Ընդ որում՝ ծառայությունների և՛ արտահանման, և՛ ներմուծման աճը հիմնականում զբոսաշրջության ծառայությունների աճի արդյունք է: Բացի այդ, ավելացել է նաև տրանսպորտային, համակարգչային ու տեղեկատվական ծառայությունների արտահանումը: Ծառայությունների արտահանումն ավելացել է 95.5 մլն ԱՄՆ դոլարով (38.7%), ներմուծումը՝ 78.7 մլն ԱՄՆ դոլարով (24.8%):



Գրաֆիկ 1.26
Արտահանման և ներմուծման դինամիկան (մլն ԱՄՆ դոլար)

«Եկամուտներ» հոդվածի ցուցանիշը 2005 թվականին ավելացել է 8.2 մլն ԱՄՆ դոլարով՝ կազմելով 44.9 մլն ԱՄՆ դոլար: Աճը տեղի է ունեցել հիմնականում սեզոնային աշխատուժից ստացվող եկամուտների ավելացման հաշվին (28.9 մլն ԱՄՆ դոլարով՝ 16.2%): Որոշ չափով ավելացել են նաև ԿԲ համախառն պահուստների կառավարումից ստացվող եկամուտները: Միևնույն ժամանակ, 2004 թ. համեմատ, 2005 թվականին 20.7 մլն ԱՄՆ դոլարով (14.6%) աճել են օտարերկրյա ներդրումների դիմաց վճարվող զուտ եկամուտները[1]:

«Ընթացիկ տրանսֆերտները» 2005 թվականին ավելացել են 59.1 մլն ԱՄՆ դոլարով և կազմել 389.5 մլն ԱՄՆ դոլար: Աճը գերազանցապես տեղի է ունեցել մասնավոր տրանսֆերտների ավելացման հաշվին, որոնք կազմել են 322.6 մլն ԱՄՆ դոլար: 5.9 մլն ԱՄՆ դոլարով ավելացել են պետական տրանսֆերտները և կազմել 66.9 մլն ԱՄՆ դոլար: Մասնավոր տրանսֆերտների ու զուտ գործոնային եկամուտների աճին զգալիորեն նպաստել է Ռուսաստանի տնտեսությունում, նավթի միջազգային բարձր գներով պայմանավորված, եկամուտների աճը, քանի որ մասնավոր տրանսֆերտների ու զուտ գործոնային եկամուտների ստացման հիմնական աղբյուրը Ռուսաստանի Դաշնությունն է:

2005 թվականին ՀՀ բանկային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց ոչ առևտրային նպատակով Հայաստան է փոխանցվել 752.8 մլն դոլար (մոտ 17%-ով ավելի, քան 2004 թվակա-

[1] *Օտարերկրյա ներդրումների դիմաց վճարվող եկամուտներում զգալի կշիռ ունի վերաներդրված շահույթը, որը բացասական նշանով գրանցվում է ընթացիկ հաշվի «Զուտ գործոնային եկամուտներ» տողում և դրական նշանով՝ «Կապիտալի և ֆինանսական հաշվի ուղղակի ներդրումներ» տողում:*


Ոչ առևտրային նպատակով փոխանցումների դինամիկան 2004-2005 թվականներին
(հազար ԱՄՆ դոլար)

	2004		2005		2005 թ.՝ 2004 թ. նկատմամբ (%)	
	ներհոսք	արտահոսք	ներհոսք	արտահոսք	ներհոսք	արտահոսք
ԱՄՆ	78787	20519	82628	30671	4.9	49.5
Ռուսաստան	419014	68210	541308	83537	29.2	22.5
Այլ երկրներ	146219	82567	128882	75585	-11.9	-8.5
Ընդամենը	644019	171296	752819	189793	16.9	10.8

նին), իսկ Հայաստանից արտերկրներ՝ 189.8 մլն դոլար (մոտ 11%-ով ավելի)՝ նախորդ տարվա 644.0 մլն դոլար ներհոսքի և 171.3 մլն դոլար արտահոսքի փոխարեն: Արդյունքում գրանցվել է 563.0 մլն դոլար զուտ ներհոսք (2004 թ.՝ 472.7 մլն դոլար), և աճը կազմել է 19%:

2005 թվականին իրականացված փոխանցումների մեծ մասը բաժին է ընկել Ռուսաստանին և ԱՄՆ-ին: Նշված երկրների տեսակարար կշիռը ոչ առևտրային ներհոսքի կառուցվածքում կազմել է 83 %, իսկ արտահոսքի կառուցվածքում՝ 60 %: Ընդ որում, Ռուսաստանի հետ կապված փոխանցումները զգալիորեն ավելի են ԱՄՆ-ի փոխանցումներից, քանի որ բանկային համակարգով ռուսաստանյան փոխանցումների սակագները համեմատաբար ցածր են:

Ներհոսքի մեկ փոխանցման միջին գումարը 2005 թվականին կազմել է 692 դոլար (նախորդ տարի՝ 730 դոլար), արտահոսքինը՝ 2852 դոլար (նախորդ տարի՝ 2997 դոլար):




Գրաֆիկ 1.27
Ֆիզիկական անձանց փոխանցումների տեսակարար կշիռները՝ ըստ եռամսյակների (%)

Ընդ որում՝ արտերկրներից ստացված փոխանցումների սեզոնայնությունը բավականին հստակ է արտահայտված նաև 2005 թվականին: Մասնավորապես՝ փոխանցումների ներհոսքը զգալիորեն նվազել է 1-ին եռամսյակում, այնուհետև աստիճանաբար աճել 2-րդ և 3-րդ եռամսյակներում և առավելագույն մակարդակի հասել 4-րդ եռամսյակում (ըստ ամիսների, գագաթնակետը՝ օգոստոսին և դեկտեմբերին):

2005 թվականին ընթացիկ հաշիվը կազմել է 204.2 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա 161.6 մլն ԱՄՆ դոլարի փոխարեն: Արտաքին հատվածը բնութագրող ընթացիկ հաշիվ/ՀՆԱ ցուցանիշը բարելավվել է 0.3 տոկոսային կետով և կազմել 4.2%:

Նախորդ տարվա համեմատ «Կապիտալ տրանսֆերտներ» հոդվածի ցուցանիշը ավելացել է՝ 2005 թվականին կազմելով 50.7 մլն ԱՄՆ դոլար (2004 թվականին՝ 34.3 մլն ԱՄՆ դոլար): Կապիտալ տրանսֆերտները 2005 թվականին ֆինանսավորել են ընթացիկ հաշվի 24.8%-ը:



Գրաֆիկ 1.28
Ընթացիկ հաշվի տարրերի դինամիկան (մլն ԱՄՆ դոլար)

Օտարերկրյա ուղղակի ներդրումները 2005 թվականին կազմել են 248.3 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա համեմատ ավելանալով 31.8 մլն ԱՄՆ դոլարով (14.7%): Ուղղակի ներդրումների բարձր մակարդակը պայմանավորվել է Զանգեզուրի պղնձամոլիբդենային գործարանի սեփականաշնորհմամբ ու մի շարք օտարերկրյա կապիտալով ձեռնարկությունների կողմից խոշորածավալ ներդրումների իրականացմամբ: Ուղղակի ներդրումները ֆինանսավորել են ընթացիկ հաշ-

վի 121.6%-ը, որը բարձր ցուցանիշ է: Ուղղակի ներդրումների հիմնական մասը ստացվել է հետևյալ չորս երկրներից. Հունաստան՝ 20%, Ֆրանսիա՝ 8%, Գերմանիա՝ 40%, ԱՄՆ՝ 6%: Իրական հատվածում իրականացված օտարերկրյա ուղղակի ներդրումների 22.9%-ը ուղղվել է տնտեսության կապի ոլորտ, 10.8%-ը՝ սննդամթերքի և խմիչքների ոլորտ, 39.9%-ը՝ հանքագործական արդյունաբերություն:

Կառավարության արտաքին պետական վարկերի զուտ հոսքերը 2005 թվականին կազմել են 36.1 մլն ԱՄՆ դոլար, այդ թվում՝ ստացվել է 49.7 մլն ԱՄՆ դոլարի վարկ, իսկ նախորդ տարիներին ներգրավված վարկերի մարումները կազմել են 13.7 մլն ԱՄՆ դոլար: Կառավարության արտաքին պետական վարկերը ֆինանսավորել են ընթացիկ հաշվի 17.7%-ը:

Մասնավոր հատվածը[2] վերջին տարիներին ունեցել է բավական փոփոխական վարքագիծ: Մասնավորապես, ի տարբերություն 2004 թվականի, 2005 թվականին մասնավոր հատվածի զուտ արտաքին ակտիվները կրճատվել են 40.8 մլն ԱՄՆ դոլարով: Բանկերի զուտ արտաքին ակտիվները նվազել են 69.9 մլն ԱՄՆ դոլարով՝ հիմնականում պայմանավորված պարտադիր պահուստավորման նորմատիվի փոփոխությամբ (կապված արտարժույթով ներգրավված միջոցների դիմաց արտարժույթով պահուստավորման պահանջի հետ):

Արդյունքում՝ կապիտալի ու ֆինանսական հաշվով ստացվող միջոցները զգալիորեն գերազանցել են ընթացիկ հաշվի պակասուրդը՝ հանգեցնելով ԿԲ համախառն արտաքին պահուստների էական ավելացմանը (2005 թվականի ընթացքում ԿԲ համախառն արտաքին պահուստներն ավելացել են 161.9 մլն ԱՄՆ դոլարով[3]): Համախառն արտաքին պահուստների աճը հիմնականում պայմանավորվել է ԿԲ կողմից միջբանկային շուկայում արտարժույթի գնմամբ (շուրջ 102.4 մլն ԱՄՆ դոլար), բանկերի կողմից ԿԲ-ում արտարժույթով միջոցների պահուստավորմամբ (49.5 մլն ԱՄՆ դոլար), Կառավարության ստացած դրամաշնորհները ԿԲ-ում փոխարկմամբ (20.7 մլն ԱՄՆ դոլար) և Կառավարության սեփականաշնորհման միջոցների փոխարկմամբ (30 մլն ԱՄՆ դոլար): Արտաքին հատվածի կարևորագույն ցուցանիշներից մեկը՝ ներմուծման ծածկույթի ցուցանիշը, կազմել է 4.1 ամիս՝ նախորդ տարվա 4.3 ամսվա փոխարեն՝ պայմանավորված ապրանքների ներմուծման բարձր աճով:

2005 թվականին զգալիորեն բարելավվել է Հայաստանի պետական արտաքին պարտքի բեռը: Արտաքին պետական պարտքը (ներառյալ պետական երաշխիքով վարկերը) 2005 թվականին կազմել է 1099 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա համեմատ կրճատվելով 84 մլն ԱՄՆ դոլարով: Տարվա ընթացքում ներգրավվել է 59 մլն ԱՄՆ դոլարի արտաքին պետական վարկ, իսկ պարտքի մարումները կազմել են 50 մլն ԱՄՆ դոլար: Արտաքին պարտքի ցուցանիշի նվազման հիմնական պատճառը փոխարժեքների փոփոխությունն է: Արտաքին պարտքի կայունությունը բնութագրող արտաքին պարտք/ՀՆԱ ցուցանիշը նախորդ տարվա համեմատ բարելավվել է 10 տոկոսային կետով՝ կազմելով 22%: Արտաքին պարտքի կառուցվածքում գերակշռում են Համաշխարհային բանկից ու ԱՄՀ-ից արտոնյալ պայմաններով ներգրավված վարկերը: Արտոնյալ վարկերի տեսակարար կշիռն ընդհանուր վարկերի մեջ կազմել է 98%:

Արտաքին պետական պարտքի սպասարկման վճարները 2005 թվականին կազմել են 62 մլն ԱՄՆ դոլար, այդ թվում՝ հիմնական գումարի մարումները կազմել են 50 մլն ԱՄՆ դոլար, իսկ տոկոսավճարները՝ 12 մլն ԱՄՆ դոլար: Արտաքին պարտքի իրացվելիությունը բնութագրող ցուցանիշները նույնպես էականորեն բարելավվել են՝ ի հաշիվ ապրանքների ու ծառայությունների արտահանման բարձր աճի: Արտաքին պարտքի սպասարկում/ապրանքների ու ծառայությունների արտահանում ցուցանիշը կազմել է 4.7%՝ նախորդ տարվա 9.7%-ի փոխարեն:

ՀՀ առևտրային բանկերի ու վարկային կազմակերպությունների վարկային պարտավորությունները[4] արտաքին աշխարհի նկատմամբ 2005 թվականի վերջին կազմել են 47.7 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա 22.0 մլն ԱՄՆ դոլարի փոխարեն: 2005 թվականի ընթացքում առևտրային բանկերն ու վարկային կազմակերպությունները արտաքին աշխարհից ներգրավել են 39.0 մլն ԱՄՆ դոլար վարկային միջոցներ, նախկինում ձեռք բերված վարկերի դիմաց կատարել են 13.8 մլն ԱՄՆ դոլար հիմնական գումարի մարումներ:

2005 թվականին, նախորդ տարվա համեմատությամբ, փոփոխվել է արտաքին աշխարհից


[2] Առանց բանկերի և վարկային կազմակերպությունների:
[3] Առանց ԿԲ եզրափակիչ շրջանառության, ներառյալ կուտակված տոկոսները:

[4] Ներառված չեն միջազգային ֆինանսական կազմակերպություններից և այլ վարկատուներից տարբեր ծրագրերի շրջանակներում ՀՀ կառավարության միջոցով ստացված վարկերը:

ՀՀ առևտրային բանկերի ներգրաված վարկերի կազմն ու կառուցվածքը: Վարկատու երկրների կազմում ավելացել են Ղազախստանը, Գերմանիան, Լյուքսեմբուրգը և այլն: 2005 թ. վերջի դրությամբ ՀՀ առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների հիմնական վարկատու երկրներն են եղել՝ Մեծ Բրիտանիան, որի տեսակարար կշիռը տրված վարկերի մեջ կազմել է 16.9% (նախորդ տարի՝ 15.5%), Ռուսաստանը՝ 14.7 % (նախորդ տարի՝ 1.7%), Շվեյցարիան՝ 10.5% (նախորդ տարի՝ 22.7%), ԱՄՆ-ն՝ 10.3% (նախորդ տարի՝ 18.9%), Լյուքսեմբուրգը՝ 9.4% և Գերմանիան՝ 8.4%:

Ներգրաված վարկերը բանկերը հիմնականում տեղաբաշխել են տնտեսության հետևյալ ոլորտներում. 14.3 մլն ԱՄՆ դոլարը՝ առևտրի, 15.6 մլն ԱՄՆ դոլարը՝ արդյունաբերության և 6.1 մլն ԱՄՆ դոլարը՝ ֆինանսական հատվածներում:

2005 թվականի վերջի դրությամբ ներգրավված վարկերի միջին կշռված տոկոսադրույքը նախորդ տարվա համեմատությամբ աճել է և կազմել 7.6% (2004 թվականին՝ 5.6%): Վարկերի մոտ 60.8%-ը լողացող (LIBOR) տոկոսադրույքով է, միջին ժամկետայնությունը մոտ 4.2 տարի է: Կարճաժամկետ վարկերի տեսակարար կշիռը նվազել է և կազմել ներգրավված վարկերի ընդամենը 6.3%-ը՝ նախորդ տարվա 8.6%-ի փոխարեն:




Գրաֆիկ 1.29
1999-2005 թվականներին ՀՀ առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների մասնավոր պարտքի դինամիկան

Իրական փոխարժեք և արտաքին առևտրի գներ

Ըստ ՀՀ ԿԲ կանխատեսումների՝ 2005 թվականին դրամի իրական արդյունավետ փոխարժեքը արժևորվելու էր 2.6 տոկոսով՝ 2.2 տոկոս միջին գնաճի և ԱՄՆ դոլար/ՀՀ դրամ փոխարժեքի 9.7 տոկոս արժևորման պայմաններում: Գործընկեր երկրների միջին կշռված գնաճը կազմելու էր 8.2 տոկոս, իսկ փոխարժեքների միջին կշռված արժևորումը ԱՄՆ դոլարի նկատմամբ՝ 4.2 տոկոս: Փաստացի իրական արդյունավետ փոխարժեքը արժևորվել է 9.0 տոկոսով. հիմնական ազդեցություն են ունեցել դրամի փոխարժեքի զգալի արժևորումը ԱՄՆ դոլարի նկատմամբ (16.5 տոկոս) և գործընկեր երկրների փոխարժեքների միջին կշռված արժևորման ցածր տեմպերը (0.6 տոկոսով): Հայաստանի և գործընկեր երկրների միջին կշռված գնաճը փոքր-ինչ ցածր է եղել կանխատեսվածից, համապատասխանաբար՝ 0.6 և 6.3 տոկոս:

2005 թվականին ՀՀ դրամի իրական փոխարժեքի արժևորումը 2004 թվականին ձևավորված միտման շարունակական դրսևորումն էր, որը բխում էր արտաքին հատվածի զարգացումներից: Իրավիճակի վրա ազդեցություն ունեցող հիմնական գործոններից կարելի է առանձնացնել երկուսը՝ մասնավոր տրանսֆերտների խոշորածավալ ներհոսքը և առևտրի պայմանների էական բարելավումը: Մասնավոր տրանսֆերտները 2005 թվականին ավելացել են 19.7 տոկոսով, որը 2004 թվականի 70.2 տոկոս աճի պայմաններում զգալի ազդեցություն ունեցավ արտաքին հատվածի ցուցանիշների վրա: Նման պայմաններում ՀՀ ԿԲ կողմից ազատ լողացող փոխարժեքի քաղաքականության պահպանումը հանգեցրեց նրան, որ իրական փոխարժեքի ճշգրտումը տեղի ունեցավ անվանական փոխարժեքի արժևորման միջոցով, այլ ոչ թե բարձր գնաճի՝ ինչը կլիներ ԿԲ կողմից անվանական փոխարժեքի մակարդակը պահպանելու դեպքում:



Գրաֆիկ 1.30
ՀՀ դրամի իրական արդյունավետ փոխարժեքի դինամիկան

Ըստ Կենտրոնական բանկի գնահատումների՝ 2005 թվականին տեղի է ունեցել Հայաստանի առևտրի պայմանների աննախադեպ լավացում՝ 15.0 տոկոսով՝ կանխատեսված 0.4 տոկոս վատացման փոխարեն: Պատճառը ներմուծման գների նկատմամբ արտահանման գների առա-

Հայաստանի իրական արդյունավետ փոխարժեքը 1999 – 2005 թթ.

	1999	2000	2001	2002	2003	2004	2005 ծրագրային	2005 փաստացի
Իրական փոխարժեք (1997 = 100)	112.3	111.9	108.0	98.4	88.4	91.4	93.7	99.6
Տոկոսային փոփոխություն	4.5	-0.4	-3.5	-8.9	-10.2	3.4	2.6	9.0
ՍԳԻ (ՀՀ)	0.7	-0.8	3.2	1.1	4.7	7.0	2.2	0.6
Անվանական փոխարժեք (ՀՀ)	-5.6	-0.8	-2.8	-3.2	-0.9	8.5	9.7	16.5
ՍԳԻ (գործընկեր երկրներ)	18.5	9.9	8.9	7.6	6.9	5.8	8.2	6.3
Անվանական փոխարժեք (գործընկեր երկրներ)	34.1	12.2	5.7	0.7	-6.9	-5.5	-4.2	-0.6

ջանցիկ աճն էր: Արտահանման դոլարային գների աճը կազմել է 22.7 տոկոս (ծրագրային՝ 4.0%), մինչդեռ ներմուծման գներինը՝ 6.6 տոկոս (ծրագրային՝ 4.4%):

Արտահանման գների բարձր աճի պատճառը միջանկյալ սպառման ապրանքների գների աճն էր, որը 2005 թվականին կազմել է 46.4 տոկոս՝ պայմանավորված ոչ թանկարժեք մետաղների (պղինձ, մոլիբդեն) գների էական աճով: Սպառողական ապրանքների գների 9.1 տոկոս բարձրացումը պայմանավորվել է գործընկեր երկրների՝ հիմնականում Ռուսաստանի տնտեսության վարքագծով (գնաճ և անվանական փոխարժեք), որի ազդեցությունը կազմել է 7.6 տոկոսային կետ, մինչդեռ ԱՄՆ-ինը և Եվրոգոտու երկրներինը բավականին ցածր է:

Ներմուծման գների աճի պատճառը նավթամթերքի և սպառողական ապրանքների գների աճն էր, որոնք համապատասխանաբար կազմել են 42.1 և 7.6 տոկոս: Նավթամթերքների գների բարձրացումը պայմանավորվել է իրական և սպեկուլյատիվ պահանջարկի աճով՝ առաջարկի սահմանափակության պարագայում: Ներմուծված սպառողական ապրանքների գները նույնպես հիմնականում աճել են Ռուսաստանի և Ուկրաինայի գնաճի և փոխարժեքների ազդեցությամբ (նպաստումը, համապատասխանաբար՝ 3.1 և 1.1 տոկոսային կետ):

Արտահանման և ներմուծման գները 2000 - 2005 թթ.

Նախորդ տարվա համեմատ	2000	20001	2002	2003	2004	2005
Արտահանման միավոր արժեք	**99.9**	**100.7**	**102.3**	**98.9**	**107.8**	**122.7**
Ներդրումային	98.9	102.1	100.1	102.3	99.9	97.8
Սպառողական	104.9	100.8	101.7	108.9	112.6	109.1
Ադամանդ	99.9	100.3	96.9	90.1	98.9	100.0
Միջանկյալ սպառում	99.0	96.5	102.6	103.7	113.7	146.4
Ներմուծման միավոր արժեք	**100.5**	**99.9**	**103.9**	**103.1**	**110.1**	**106.6**
Ներդրումային	101.8	99.7	93.6	93.8	100.6	99.5
Սպառողական	100.5	105.3	105.7	112.4	111.0	107.6
Միջանկյալ սպառում	98.4	95.9	98.4	98.7	105.8	99.9
Նավթամթերք	107.6	102.7	99.0	99.5	125.8	142.1
Ադամանդ	97.4	102.9	112.9	101.9	119.5	100.0
Բնական գազ	96.9	98.4	94.8	99.5	99.6	100.0
Առևտրի պայմաններ	**99.4**	**100.9**	**98.5**	**95.9**	**98.0**	**115.0**

Համաշխարհային տնտեսությունը 2005 թվականին

Չնայած 2005 թվականին համաշխարհային տնտեսության աճի տեմպերը ցածր են եղել 2004 թվականի ցուցանիշներից, այնուհանդերձ պահպանել են բավականին բարձր մակարդակ՝ 4.2

տոկոս[5]: Ընդ որում՝ տարվա առաջին կեսին, համաշխարհային շուկաներում բիզնես-միջավայրի նկատմամբ վստահության փոքր-ինչ բարձրացման հետ կապված, համաշխարհային տնտեսության աճի տեմպերն ավելի բարձր էին, քան երկրորդ կիսամյակում: Տարվա երկրորդ կեսին՝ մասամբ արտացոլելով նավթի միջազգային գների բարձրացումը, ինչպես նաև «Կատրին» փոթորկի ավերիչ ազդեցությունը ԱՄՆ տնտեսության վրա, համաշխարհային տնտեսության աճի տեմպերը դանդաղեցին: 2005 թվականին համաշխարհային տնտեսության աճին հիմնականում նպաստել է ծառայությունների ոլորտի բարձր աճը, որը մասամբ փոխհատուցել է նաև նավթի միջազգային բարձր գներով պայմանավորված՝ արդյունաբերության աճի ցածր տեմպերը:

Ըստ տարածաշրջանների՝ 2005 թ. տնտեսական աճին զգալի նպաստել են զարգացած երկրներից՝ ԱՄՆ-ի տնտեսությունը (որի տնտեսական աճը կազմել է 3.5 տոկոս), իսկ զարգացող երկրներից՝ Չինաստանի և Հնդկաստանի տնտեսությունները (համապատասխանաբար՝ 9.3 և 7.1 տոկոս): Ուշագրավ է նաև Ճապոնիայի տնտեսությունը, որը վերջին երեք տարիներին վերականգնման նախանշաններ է ցույց տալիս, իսկ տնտեսական աճը 2005 թվականին կազմել է 2.0 տոկոս: Եվրոգոտու երկրներում տնտեսական աճի տեմպերը դանդաղել են, սակայն որոշակի բարելավում է նկատվել 2005 թվականի վերջին: Այդուհանդերձ, Եվրոգոտու տնտեսական աճը 2005 թ-ին բավականին ցածր է՝ 1.2 տոկոս:

ԱՊՀ երկրներում թեև գրանցվել է տնտեսական բարձր աճ (6.0 տոկոս), սակայն նախորդ տարվա համեմատ զգալի նվազել է (8.4 տոկոս)[6]: Նվազումը հիմնականում պայմանավորվել է Ռուսաստանի Դաշնության և Ուկրաինայի տնտեսությունների աճի տեմպերի նվազմամբ, համապատասխանաբար՝ 6.4 և 2.4 տոկոս՝ նախորդ տարվա 7.2 և 12.1 տոկոսի փոխարեն: Նվազման պատճառներից է նաև Ղրղզստանի 0.6 տոկոս տնտեսական անկումը՝ նախորդ տարվա 7.2 տոկոս աճի փոխարեն: Ընդ որում՝ Ղրղզստանի և Ուկրաինայի տնտեսական զարգացումների վրա խիստ բացասաբար են անդրադարձել այս երկրների քաղաքական ճգնաժամերը: Նշենք նաև, որ 2005 թվականին աննախադեպ՝ 26.4 տոկոս աճ է գրանցվել Ադրբեջանում, որն ամենաբարձրն է ոչ միայն ԱՊՀ երկրներում, այլ նաև այլ տարածաշրջանների երկրների համեմատությամբ:

2005 թվականին համաշխարհային տնտեսությունում, առավելապես՝ ԱՄՆ տնտեսությունում, պահպանվել են ընթացիկ հաշիվների անհավասարակշռության խորացման միտումները: 2005 թվականի համար ԱՄՆ ընթացիկ հաշվի պակասուրդի հարաբերությունը ՀՆԱ-ին գնահատվում է մոտ 6.5 տոկոս՝ պայմանավորված նավթի աճող գներով և ԱՄՆ տնտեսության հարաճուն պահանջարկով: Իսկ հակադիր՝ հավելուրդ արձանագրած հիմնական երկրներն են՝ Ճապոնիան, Չինաստանը, Մերձավոր Արևելքը և ԱՊՀ երկրները (վերջին երկուսը՝ կապված նավթի գների աճի հետ): Սակայն, այս ամենի հետ մեկտեղ, ԱՄՆ տնտեսություն կապիտալի ներհոսքը բավականին բարձր մակարդակ ունի և ծածկում է ընթացիկ հաշվի պակասուրդը:

Ամեն դեպքում, ԱՄՆ խնայողությունների ցածր մակարդակը մնում է միջնաժամկետ հիմնական խնդիրներից մեկը, որը էական ռիսկեր է պարունակում համաշխարհային տնտեսության կայուն զարգացման համար:

Չնայած ԱՄՆ ընթացիկ հաշվի աճող պակասուրդին՝ ԱՄՆ դոլարը 2005 թվականին որոշակի արժևորվել է գործընկեր երկրների արժույթների նկատմամբ, որը, ըստ բազմաթիվ վերլուծաբանների կարծիքի[7], կրում է կարճաժամկետ բնույթ՝ հիմնականում պայմանավորված ԱՄՆ և մյուս զարգացած երկրների (Եվրոգոտի, Ճապոնիա) տոկոսադրույքների տարբերության աճով, ինչպես նաև ԱՄՆ կառավարության կողմից ձեռնարկված մի շարք վարչական միջոցառումների կարճաժամկետ՝ միանգամյա ազդեցությամբ (օր. օֆշորային կապիտալի շահութահարկը 5 տոկոսով հարկելու մասին հայտարարությունը՝ պաշտոնական սահմանված 25 տոկոսի փոխարեն): Այս ժամանակահատվածում թուլացել է եվրոյի դիրքը համաշխարհային շուկայում, որի պատճառը Եվրոգոտու քաղաքական հիմնախնդիրներն են, ինչպես, ասենք՝ Ֆրանսիայի և Նիդեռլանդների կողմից Եվրոմիության սահմանադրության մերժումը, Եվրոմիության միջնաժամկետ բյուջեի ընդունման հետ կապված անհամաձայնությունները, ազգային և կրոնական բախումները Ֆրանսիայում և այլն:

[5] Տեղեկատվության աղբյուրը՝ ԱՄՀ "World Economic Outlook-2005. September" պարբերականն է, եթե այլ բան նշված չէ:
[6] ԱՊՀ երկրների տնտեսական աճի և գնաճի ցուցանիշների աղբյուրը՝ ԱՊՀ վիճակագրության կոմիտե:

[7] Մասնավորապես, տե՛ս N. Roubini "Einstein and the US dollar: Is the currency rewriting the laws of gravity?", 21 Nov 2005, www.rgemonitor.com

Համաշխարհային տնտեսական աճը

	2003	*2004*	*2005*
Համաշխարհային արտադրանք	**4.0**	**5.1**	**4.3**
Զարգացած երկրներ	1.9	3.3	2.5
Միացյալ Նահանգներ	2.7	4.2	3.5
Եվրոգոտի	0.7	2.0	1.2
Ճապոնիա	1.4	2.7	2.0
Այլ զարգացած երկրներ	2.5	4.4	3.2
Զարգացող երկրներ	6.5	7.3	6.4
Աֆրիկա	4.6	5.3	4.5
Կենտրոնական և Արևելյան Եվրոպա	4.6	6.5	4.3
ԱՊՀ	7.9	8.4	6.0
Զարգացող Ասիա	8.1	8.2	7.8
Չինաստան	9.5	9.5	9.3
Հնդկաստան	7.4	7.3	7.1
Մերձավոր Արևելք	6.5	5.5	5.4
Արևմտյան կիսագունդ	2.2	5.6	4.1
Հավելում.			
Եվրոմիությունում	*1.3*	*2.5*	*1.6*

Ուշադրության են արժանի նաև Չինաստանի իրականացրած արժութային քաղաքականության բարեփոխումները[8], որոնք, այնուամենայնիվ, էականորեն չարժևորեցին չինական յուանը ԱՄՆ դոլարի նկատմամբ (տարվա ընթացքում ընդամենը 2.4 տոկոս)[9]: Սակայն ակնկալվում է այդ բարեփոխումների շարունակականություն 2006 թվականին, ինչը կնպաստի գլոբալ անհաշվեկշռությունների վերացմանը:

Հիմնական ապրանքատեսակների գները բարձրացել են նաև 2005 թվականին՝ պայմանավորված համաշխարհային պահանջարկի աճով, որը առավել ցայտուն դրսևորվել է նավթամթերքի և մետաղների շուկաներում: Նավթամթերքի շուկայում գների աճը մի քանի գործոնների հետևանք էր՝ երկարաժամկետ հատվածում առաջարկի սահմանափակության, իսկ կարճաժամկետ հատվածում՝ աշխարհաքաղաքական զարգացումներով պայմանավորված անորոշությունների: Չնայած «Կատրին» փոթորկի ազդեցությունը չեզոքացվեց ԱՄՆ նավթի ռազմավարական պաշարների օգտագործմամբ և Սաուդյան Արաբիայի կողմից նավթի առաջարկի ավելացմամբ (օրական 0.5 մլն բարելով), սակայն նավթի վերամշակման հզորությունների սակավությունը առաջ է բերում ճնշումներ գների վրա՝ հատկապես ԱՄՆ-ում:

Արդյունքում՝ համաշխարհային տնտեսությունում գնաճը 2005 թվականին, նախորդ տարվա համեմատությամբ, փոքր-ինչ բարձրացավ, սակայն դեռևս մնում է խելամիտ սահմաններում: Դա հատկապես վերաբերում է զարգացած երկրներին, որտեղ գնաճային ճնշումները, հատկապես բնականոն գնաճի, դեռևս մնում են կառավարելի: Որոշակի բացառություն կարելի է համարել ԱՄՆ տնտեսությունը, որտեղ երկու գործոններ՝ նավթի բարձր գները և միավոր աշխատուժի ծախսերի աճը, արդեն իսկ մտահոգության տեղիք են տալիս՝ գնաճային ճնշումների մեծացման առումով[10]:

Ի տարբերություն զարգացած երկրների, զարգացող երկրներում գնաճային ճնշումները շատ ավելի արտահայտված են եղել: Դա հիմնականում պայմանավորվել է ինչպես նավ-

[8] Յուան/ԱՄՆ դոլար հաստատագրված փոխարժեքի 2.1 տոկոս արժևորում 2005 թվականի հուլիսի 21-ին, և օրական տատանումների միջակայքի ընդլայնում մինչև ± 0.3 տոկոս՝ գործընկեր երկրների փոխարժեքների զամբյուղի նկատմամբ:

[9] 2005 թ. դեկտեմբերի միջին փոխարժեքը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ:

[10] HSBC-ի փորձագետների կարծիքով, քանի որ ԱՄՆ-ում նավթամթերքի հարկման բեռն ավելի թեթև է մյուս զարգացած երկրների համեմատ, դա հանգեցնում է տնտեսության վրա նավթամթերքի գների ազդեցության ուժեղացմանը: ԱՄՆ-ում 2005թ-ին միավոր աշխատուժի ծախսը նախորդ տարվա համեմատ աճել է 2.4 տոկոսով՝ նախորդ տարվա նույն ցուցանիշի 2.9 տոկոս նվազման փոխարեն: Մինչդեռ զարգացած երկրների նույն ցուցանիշի միջինը (ներառյալ ԱՄՆ-ը) 2005թ-ին կազմել է 1.6 տոկոս՝ 2004թ. 1.7 տոկոս նվազման փոխարեն:

թամթերքի գների աճի ավելի մեծ ազդեցությամբ, այնպես էլ որոշ զարգացող երկրներում նկատված տնտեսական աննախադեպ աճով: Վերջինս հիմնականում վերաբերում է այն երկրներին, որոնք ընթացիկ տարում ունեցել են խոշոր առևտրային հավելուրդներ, մասնավորապես՝ ԱՊՀ և Միջին Ասիայի երկրների ընդհանուր հավելուրդը 2005 թվականին աճել է համապատասխանաբար 66.9 և 18.0 տոկոսով:

ԱՊՀ երկրներում արագացել են գնաճի տեմպերը: Երկնիշ գնաճ է գրանցվել ԱՊՀ չորս երկրներում՝ Ուկրաինայում, Ռուսաստանում, Ղրղզստանում և Ադրբեջանում, որտեղ միջին գնաճը համապատասխանաբար կազմել է 14, 13, 12 և 10 տոկոս: Ամենացածր գնաճը գրանցվել է Հայաստանում ՝ 0.6 տոկոս:

Ֆինանսական շուկաների պայմանները 2005 թվականի ընթացքում մնացել են բարենպաստ՝ չնայած Ֆեդերալ պահուստային համակարգը շարունակել է իրականացնել զսպող դրամավարկային քաղաքականություն, որին տարվա վերջին միացել է Եվրոպական կենտրոնական բանկը: Սակայն երկարաժամկետ իրական տոկոսադրույքները մնում են անսովոր ցածր մակարդակի վրա, ինչը, ըստ ՖՊՀ նախկին նախագահ Ալան Գրինսպենի՝ հանելուկային երևույթ է: Չնայած այն մասամբ արտացոլում է լավ խարսխված գնաճային սպասումները համաշխարհային մակարդակով, սակայն դժվարությամբ է կապվում պետական և մասնավոր աճող պարտքերի հետ:

Այստեղ, բացի ֆինանսական շուկաների պայմաններից, կարևոր դեր ունեն նաև համաշխարհային ներդրումների և խնայողությունների վարքագծերը: Հայտնի է ՖՊՀ ներկայիս նախագահ Բեն Բերնանկեի՝ 2005 թվականին արտահայտած կարծիքը, որ զարգացող երկրներում խնայողությունների աննախադեպ աճը հանգեցրել է «խնայողությունների ավելցուկի»՝ նվազեցնելով համաշխարհային տոկոսադրույքները և, վերջինիս միջոցով, խթանելով ակտիվների գների աճը՝ պատճառ դառնալով զարգացած երկրների մասնավոր հատվածի խնայողությունների անկման:


Զարգացած երկրներում խնայողությունների կրճատման արդյունքում բարելավվում է զարգացող երկրների արտաքին հաշվեկշռվածությունը և, միևնույն արտաքին գործոնների ազդեցությամբ, արժեքավորվում իրական փոխարժեքը: Այս միտումը վերջին տարիներին արտահայտվել է նաև անցումային երկրներում, մասնավորապես Արևելյան Եվրոպայում ցայտուն է

Գների փոփոխություն

	2003	*2004*	*2005*
Զարգացած երկրներ	1.8	2.0	2.2
Միացյալ Նահանգներ	2.3	2.7	3.1
Եվրոմիություն	2.1	2.1	2.1
Ճապոնիա	-0.2	0.0	-0.4
Այլ զարգացած երկրներ	1.8	1.8	2.1
Զարգացող երկրներ	6.0	5.8	5.9
Աֆրիկա	10.4	7.8	8.2
Կենտրոնական և Արևելյան Եվրոպա	9.2	6.5	4.8
ԱՊՀ	12.0	10.3	12.6
Զարգացող Ասիա	2.6	4.2	4.2
Մերձավոր Արևելք	7.1	8.4	10.0
Արևմտյան կիսագունդ	10.6	6.5	6.3
Հավելում. *Եվրոմիությունում*	*2.0*	*2.2*	*2.1*
Հիմնական ապրանքատեսակներ			
Սննդամթերք	5.1	14.3	-0.4
Խմիչք	4.9	3.0	21.0
Գյուղատնտեսական հումքային արտադրանք	3.7	5.5	2.4
Մետաղներ	12.2	36.2	26.4
Էներգակիրներ	16.7	30.9	38.8

դրսևորվել 2003 - 2004 թվականներին, իսկ ԱՊՀ երկրներում՝ 2004 - 2005 թվականներին՝ կապված կապիտալի հոսքերի պակաս շարժի հետ:

Արդյունքում, ինչպես և նախորդ տարի, ԱՊՀ երկրներում 2005 թվականին շարունակվել է իրական փոխարժեքի՝ արտաքին հատվածից եկող արժևորման ճնշումը, որը Արևելյան Եվրոպայի երկրների մեծամասնությունում հավասարակշռվել էր 2004 թվականի ընթացքում: Նման պարագայում ԱՊՀ երկրներում օրակարգային էր անվանական փոխարժեքի արժևորում - գնաճ երկընտրանքը: Այն երկրները, որոնք իրականացնում էին ավելի ճկուն փոխարժեքի քաղաքականություն, ունեցան ավելի ցածր գնաճի տեմպեր:



Գրաֆիկ 1.31

Գնաճը և փոխարժեքը Արևելյան Եվրոպայի և ԱՊՀ երկրներում 2004 և 2005 թթ.

** 2005 թվականի հունվար - նոյեմբեր:*

1.4. ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Դրամավարկային քաղաքականության նպատակները և դրանց իրագործման ռիսկերը

2005 թվականին ԿԲ կողմից իրականացվող դրամավարկային քաղաքականությունը, ինչպես և նախորդ տարիներին, նպատակաուղղված էր Հայաստանի Հանրապետությունում գների կայունության, այն է՝ գնաճի ծրագրային մինչև 3% ցուցանիշի ապահովմանը: Այս պարագայում, ակնկալվող տնտեսական աճը պետք է կազմեր 8%: Ընդ որում, տարվա ընթացքում պահպանվելու էին ԿԲ կողմից նախկինում որդեգրված ծավալային կարգավորման ռազմավարության սկզբունքները: Դրամավարկային ծրագրով, որպես տարվա առանձնահատկություն, նախանշվում էին դեռևս նախորդ տարվանից դրսևորված՝ ՀՀ դրամի նկատմամբ վստահության բարձրացման միտումները և դրամի շրջանառության ոլորտի հնարավոր ընդլայնումը: Վերջինիս թերևս կարող էր նպաստել նաև 2005 թվականի հուլիսից «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի և ֆիզիկական անձանց ավանդների երաշխավորման համակարգի վերջնական ներդրումը:

Հաշվի առնելով վերոնշյալը, ԿԲ կողմից փողի պահանջարկի գնահատման արդյունքում կանխատեսվում էր տարվա ընթացքում փողի զանգվածի աճ 18.5%-ով և դրամային զանգվածի աճ 15.5%-ով, որոնց պարագայում այդ ցուցանիշների միջին տարեկան աճը պետք է կազմեր համապատասխանաբար 26% և 17.9%: Գործառնական նպատակ հանդիսացող փողի բազայի կառավարումը ենթադրում էր ժամանակաշրջանի վերջի դրությամբ վերջինիս 8.9% աճ (միջին տարեկան աճը՝ 13.6%):

Տարվա դրամավարկային քաղաքականության ծրագրի իրականացման ընթացքում տնտեսության գրեթե բոլոր հատվածներից ակնկալվում էր որոշակի ռիսկերի և դրա հետևանքով՝ գների մակարդակի վրա որոշակի հնարավոր ճնշումների առաջացում, որի պարագայում ԿԲ-ն չէր բացառում տարվա ընթացքում փողի ագրեգատների ծրագրային մակարդակների վերանայման անհրաժեշտությունը: 2005 թվականին նախանշված ռիսկերը հիմնականում դրսևորվեցին: Դրանցից մասնավորապես նշենք՝ նախատեսվածից բարձր տնտեսական աճը, տրանսֆերտների և արտահանման՝ սպասվածից բարձր աճը, ինչպես նաև տարվա հիմնական առանձնահատկություն համարվող դրամայնացման գործընթացի և դրա արդյունքում փողի պահանջարկի՝ նախատեսվածից ավելի ընդլայնումը:

Վերոնշյալ ռիսկերի դրսևորմամբ, ինչպես նաև 2005 թվականի առաջին կիսամյակում ձևավորված մակրոմիջավայրի զարգացումներով պայմանավորված՝ ԿԲ-ն տարվա երկրորդ կեսին վերանայեց դրամավարկային ցուցանիշների ծրագրային մակարդակները՝ առավել ընդլայնողական քաղաքականություն իրականացնելու նկատառումով: Վերջինս հնարավոր էր համարվում նաև այն պատճառով, որ տարվա ընթացքում գնաճային էական ճնշումներ չառաջացան, որի հիմնական պատճառներից թերևս կարելի է առանձնացնել գյուղատնտեսական արտադրանքի թողարկման աճի բարձր տեմպերը (11.4%), հետևաբար՝ գների վրա դրանց ունեցած զսպողական ազդեցությունը:

Փողի պահանջարկ


2005 թվականի վերանայված ծրագրի փաստացի արդյունքներով տարեվերջին գրանցվել է փողի և դրամային զանգվածների համապատասխանաբար 28.2% և 54.2% աճ, իսկ փողի բազան աճել է 51.9%-ով (2004 թ-ին այս ցուցանիշների աճը կազմել էր համապատասխանաբար՝ 22.3%, 9.2% և 11.4%): Փողի պահանջարկի և հատկապես դրա դրամային մասի այսպիսի խոշոր աճի պատճառ են հանդիսացել նաև տարվա ընթացքում արտարժույթի մեծածավալ ներհոսքի պարագայում դրամի փոխարժեքի կայուն արժեքավորման միտումները, որոնք էլ ավելի են նպաստել դրամայնացման գործընթացի աշխուժացմանը: Փողի ագրեգատների նման աճի պայմաններում, 2005 թվականի տարեվերջի դրությամբ գրանցվել է -0.2% գնանկում, իսկ միջին տարեկան գնաճը կազմել է 0.6%:

Փողի զանգվածի և դրա տարրերի վարքագծի, ինչպես նաև նախորդ տարիների միտումների համեմատության առումով տարին կարելի է դիտարկել ըստ կիսամյակների: Նախ նշենք, որ նախորդ տարիների առաջին կիսամյակներում արձանագրվել էր փողի և դրամային զանգվածների նվազում, իսկ 2005 թվականի առաջին կիսամյակում աճել են ինչպես փողի, այնպես էլ դրամային զանգվածները՝ համապատասխանա-


բար 6.1% և 12.9% (2003-2004 թթ. միջին կիսամյակային 2.3% և 7.8% նվազման փոխարեն): Ըստ փողի զանգվածի բաղադրատարրերի՝ նշված աճը բացառապես պայմանավորվել է շրջանառության մեջ կանխիկի 6.8% և դրամային ավանդների 25.5% աճով, մինչդեռ արտարժութային ավանդները նվազել են 1%-ով: Սա, թերևս, բացատրվում է արդեն իսկ տարեսկզբից դիտարկվող արժույթի փոխարինման երևույթով, որի հետևանքով առաջին կիսամյակում փողի ագրեգատները չցուցաբերեցին նախորդ տարիներին բնորոշ փողի պահանջարկի սեզոնային դրսևորումներով պայմանավորված նվազման վարքագիծը:

Տարվա երկրորդ կիսամյակում, արդեն վերանայված ծրագրով առավել ընդլայնողական դրամավարկային քաղաքականության իրականացման արդյունքում, շրջանառությունում գտնվող կանխիկը ավելացել է 37.1%-ով՝ վերջին երկու տարվա նույն ժամանակահատվածի միջին կիսամյակային 20.1%-ի փոխարեն, դրամային ավանդները ավելացել են 36%-ով՝ 12.6%-ի, իսկ արտարժութային ավանդները՝ 1.3%-ով՝ 26.4%-ի փոխարեն:

Ընդհանուր առմամբ, ինչպես և երևում է կիսամյակային միտումներից, փողի զանգվածի կառուցվածքային բաղադրատարրերից տարվա ընթացքում անհամեմատ մեծ աճ են դրսևորել դրամային բաղադրատարրերը: Դրամային ավանդները նախորդ տարվա 47.0 մլրդ դրամից հասել են 80.2 մլրդ դրամի (70.7% աճ), իսկ շրջանառության մեջ գտնվող կանխիկը նախորդ տարվա 98.6 մլրդ դրամից հասել է 144.3 մլրդ դրամի (46.4% աճ): Դրամային ավանդների աճը հավասարապես ապահովվել է ինչպես ցպահանջ, այնպես էլ ժամկետային ավանդների ավելացման արդյունքում:



Գրաֆիկ 1.32
Փողի զանգվածի դինամիկան՝ ըստ բաղադրատարրերի (մլն ՀՀ դրամ)



Գրաֆիկ 1.33
Ըստ ժամկետայնության դրամով և արտարժույթով ավանդների վարքագիծը (մլն ՀՀ դրամ)

Չափազանց ցածր է եղել արտարժութային ավանդների աճի տեմպը՝ ընդամենը 0.4%: Համեմատության համար նշենք, որ նախորդ երկու տարիներին գրանցվել էր արտարժութային ավանդների միջին հաշվով շուրջ 34% աճ: Այսպիսի փոքր աճի ձևավորմանը նպաստել է ցպահանջ արտարժութային ավանդների 21.7%-ով

Դոլարայնացման ցուցանիշը անցումային շրջանի մի շարք երկրներում

Երկիր	Արտարժութային ավանդների կշիռը փողի զանգվածում								
	1997	1998	1999	2000	2001	2002	2003	2004	2005
Հայաստան	29.4	38.3	46.8	51.8	47.0	38.8	42.9	49.0	38.5
Վրաստան	20.9	29.1	35.6	41.2	44.9	46.4	50.3	44.0	44.0
Ադրբեջան	24.6	28.9	32.9	58.3	48.9	48.4	49.1	54.5	45.2
Էստոնիա	12.7	14.9	15.9	17.2	31.5	30.9	15.8	15.5	20.3
Լատվիա	32.6	30.7	29.2	31.4	30.9	29.0	27.6	29.2	32.0
Լիտվա	25.3	23.4	27.3	32.8	32.9	24.4	19.5	19.8	21.4
Ռուսաստան	17.9	21.7	30.5	29.7	27.5	25.8	18.9	17.8	16.3
Ուկրաինա	14.3	18.5	22.9	24.6	15.4	18.5	20.7	23.9	23.5
Չեխիա	10.3	11.2	10.8	10.5	9.9	9.7	9.3	9.4	12.1
Սլովակիա	10.7	12.0	14.4	15.3	11.5	12.4	10.9	10.6	11.4
Սլովենիա	31.5	27.2	25.9	28.9	31.6	28.3	28.1	28.5	28.7
Ռումինիա	32.0	29.7	37.4	39.7	42.8	40.4	37.1	33.8	30.0
Բուլղարիա	52.5	39.2	38.0	39.7	39.3	37.6	36.9	33.5	34.6

նվազումը, որը միաժամանակ ուղեկցվել է ժամկետային արտարժութային ավանդների 25.7% աճով: Սա վկայում է տարվա ընթացքում արտարժույթի և առավելապես որպես շրջանառության միջոցի դրա դերի նվազման մասին:


Ժամկետային ավանդների ավելացման հաշվին 9.9 մլրդ դրամով (84.6%) ավելացել են պետական մասնակցությամբ ձեռնարկությունների և կազմակերպությունների ավանդները: Ընդ որում, աճի մեծ մասը՝ 6.2 մլրդ դրամը, բաժին է ընկել արտարժութային ավանդների շարժերին:

Այսպիսով, ակնհայտ է, որ տարվա ընթացքում փողի զանգվածի կառուցվածքային համամասնությունները փոխվել են առավելապես դրամային բաղադրատարրերի ավելացման հաշվին: Ավանդների փոփոխության նման վարքագծի պարագայում, կարելի է ենթադրել, որ տարվա ընթացքում ձևավորված բարձր գործարար ակտիվությանը զուգընթաց, բարձրացել է ազգային արժույթի նկատմամբ վստահությունը և ընդլայնվել է դրա շրջանառության ոլորտը: Սա ՀՀ-ում դոլարայնացման աստիճանի կրճատման պատճառ է հանդիսացել:

Փողի առաջարկ

Ինչպես և նախորդ տարի, 2005 թվականին նույնպես փողի առաջարկի աճը ապահովվել է բանկային համակարգի ԶԱԱ և ԶՆԱ աճի հաշվին՝ համապատասխանաբար 24.9% և 35.4% (վերանայված ծրագրային աճը՝ 33.2% և 9.5%): Ընդ որում, բացարձակ թվերով ավելի մեծ աճ են ապահովել ԶԱԱ-ը (51.1 մլրդ դրամ), որն էլ բացառապես պայմանավորվել է ԿԲ ԶԱԱ աճով (ավելի քան 88 մլրդ դրամ կամ 59%), մինչդեռ առևտրային բանկերի ԶԱԱ-ը նվազել են 37 մլրդ դրամով (67%-ով): Առևտրային բանկերի ԶԱԱ նվազումը ակնհայտ վկայում է այն հանգամանքի մասին, որ բանկերն առավել ակտիվորեն սկսել են միջոցները տեղաբաշխել ՀՀ տնտեսությունում:

Բանկային համակարգի ԶՆԱ-ը 2005 թվականին աճել են 28 մլրդ դրամով (35%)՝ կրելով ինչպես բանկային համակարգի հանդեպ Կառավարության զուտ պարտավորությունների ցուցանիշի աճի, այնպես էլ տնտեսության վարկավորման ծավալների աճողական վարքագծի ազդեցությունը: Ընդ որում, Կառավարության զուտ պարտավորությունների ցուցանիշը առաջին կիսամյակի ընթացքում նվազել է՝ պայմանավորված այդ ժամանակահատվածում իրականացված զսպողական հարկաբյուջետային քաղաքականությամբ և, մասնավորապես, ավելցուկային իրացվելիության կարգավորման նպատակով ՊՊ լրացուցիչ թողարկումներից ստացված միջոցների՝ ԿԲ-ում ավանդադրմամբ: Տարվա երկրորդ կեսին արդեն դրսևորվել է այս գործոնների հակառակ ուղղվածությունը (Կառավարությունն իրականացրել է ընդլայնողական հարկաբյուջետային քաղաքականություն, և մարվել են ԿԲ-ում ավանդադրված միջոցները), որի արդյունքում Կառավարության զուտ պարտավորությունների ցուցանիշը աճել է:



Գրաֆիկ 1.34
Բանկային համակարգի ԶԱԱ-ի և ԶՆԱ-ի վարքագիծը (մլն ՀՀ դրամ)


Տնտեսության վարկավորման ցուցանիշը տարեվերջին, նախորդ տարվա վերջի համեմատությամբ, աճել է 32.2%-ով: Արժույթի փոխարինման էֆեկտով պայմանավորված, 2005-ին արագացել են դրամային վարկերի աճի տեմպերը՝ կազմելով 72.4% (2004 թ. աճը՝ 44.9%): Միևնույն ժամանակ, նույն գործոնով պայմանավորված, դանդաղել են արտարժութային վարկերի աճի տեմպերը՝ նախորդ տարվա 42.5%-ի դիմաց՝ 18.6%: Ընդ որում, պահպանվել են տնային տնտեսությունների վարկավորման աճի բարձր տեմպերը՝ 48.2%, ինչը վկայում է սպառողական վարկերի ակտիվ գործընթացի մասին:

Տարվա ընթացքում շուրջ 40 մլրդ դրամով նվազել են բանկային համակարգի զուտ այլ ակտիվները: Նվազման գերակշիռ մասը բաժին է ընկել առևտրային բանկերի զուտ այլ ակտիվներին: Վերջինս էլ պայմանավորվել է նրանով, որ 2005 թվականին բանկային համակարգը զգալիորեն համալրել է կանոնադրական կապիտալը և աշխատել շահույթով:

Ֆինանսական միջնորդության աստիճանը

Ֆինանսական միջնորդության աստիճանը բնութագրող ցուցանիշների փոփոխությունները

2005 թվականին տարբեր ուղղությամբ են եղել. փողայնացման և դրամայնացման գործակիցներն աճել են, մինչդեռ փողի և դրամային բազմարկիչները նվազել են: Տարվա ընթացքում արձանագրված բարձր տնտեսական աճի պարագայում, փողի և դրամային զանգվածի վերոնշյալ բաղադրատարրերի արագանցիկ աճի հետևանքով փողայնացման գործակիցը 2004 թվականի վերջի 12.6%-ից 2005-ի վերջին հասել է 14%-ի, իսկ դրամայնացման գործակիցը՝ 6.6%-ից 7.7%-ի: Նույն շարժերով պայմանավորված՝ տարվա ընթացքում նվազել են նաև փողի և դրամի շրջապտույտի արագությունները՝ համապատասխանաբար 9.7% և 14.8%-ով:



Գրաֆիկ 1.35
Փողի շրջապտույտի արագությունը


Միևնույն ժամանակ, փողի և դրամային բազմարկիչները նախորդ տարվա համեմատությամբ 2005 թվականին նվազել են համապատասխանաբար 6.4% և 0.8%-ով՝ կազմելով 2.04 և 1.13: Այս գործակիցները կիսամյակային պարբերականությամբ դիտարկելու դեպքում կտեսնենք, որ եթե առաջին կիսամյակում դրանք նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ ցուցաբերել են համեմատաբար կայուն վարքագիծ, ապա տարվա երկրորդ կեսին կտրուկ նվազել են: Երկրորդ կիսամյակում փողի և դրամային բազմարկիչների նման նվազումը, այնուամենայնիվ, չի կարելի բնորոշել որպես ֆինանսական միջնորդության աստիճանի նվազում, քանի որ դա ԿԲ կողմից տարվա երկրորդ կեսին պարտադիր պահուստավորման մեխանիզմի փոփոխության արդյունք է: Պարտադիր պահուստավորման փոփոխված մեխանիզմը ենթադրում էր նորմայի բարձրացում 2 տոկոսային կետով (8%), ինչպես նաև ըստ արժույթի պահուստավորման ենթակա միջոցների տարանջատում: Սրա հետևանքով ԿԲ-ում բանկերի դրամով թղթակցային հաշիվներում կուտակվեց շուրջ 12.0 մլրդ դրամի ավելցուկային իրացվելիություն, որը, միաժամանակ, ուղեկցվելով տարվա ընթացքում դրամայնացման գործընթացով պայմանավորված շրջանառության մեջ կանխիկի աճով և արտարժութային ավանդների աճի տեմպերի նվազմամբ, հանգեցրեց բազմարկիչների

Անցումային տնտեսությամբ մի շարք երկրների փողայնացման գործակիցների համեմատական աղյուսակ*

Երկիր	(M2X)*/ՀՆԱ x 100							
	1997	1998	1999	2000	2001	2002	2003	2004
Հայաստան	7.8	8.4	9.9	11.7	13.0	12.0	12.4	12.6
Վրաստան	8.1	7.3	7.9	10.4	11.1	11.7	12.5	15.4
Ադրբեջան	13.8	10.7	11.7	16.3	12.9	13.0	14.4	18.0
Էստոնիա	29.8	27.3	32.3	35.7	39.1	38.8	39.5	41.2
Լատվիա	25.2	24.6	24.6	27.8	30.3	32.9	39.5	48.9
Լիտվա	18.5	18.8	20.7	22.8	26.1	28.6	30.9	34.9
Ղրղզստան	13.7	14.5	13.6	11.3	11.1	14.6	17.5	20.6
Մոլդովա	21.6	19.3	20.5	22.3	25.5	29.8	31.8	38.3
Ռուսաստան	17.0	17.7	16.9	18.2	23.5	26.2	29.8	31.6
Ուկրաինա	13.4	15.2	16.8	18.6	22.1	29.1	35.9	36.4
Չեխիա	65.8	61.9	61.1	67.2	69.4	71.2	72.2	69.6
Լեհաստան	34.2	36.7	39.6	39.6	43.5	40.8	41.3	40.4
Սլովակիա	62.6	59.9	61.9	64.4	66.7	63.8	64	61.9
Սլովենիա	39.2	42.2	43.3	46.6	54.5	54.8	53.6	53.6
Ռումինիա	24.6	24.8	24.6	23.0	23.2	24.7	24.2	27.0
Բուլղարիա	34.1	29.6	31.7	36.8	41.8	43.1	48.5	54.7

** M2-ը ազգային արժույթով փողի զանգվածն է, M2X-ը ներառում է նաև արտարժութային ավանդները:*

նվազմանը: Փողի բազմարկչի համեմատությամբ դրամային բազմարկչի ավելի փոքր նվազման տեմպերը բացատրվում են տարվա ընթացքում դրամային ավանդների արագանցիկ աճով:



Գրաֆիկ 1.36
Փողի և դրամային բազմարկիչների վարքագծերը

Փաստորեն, տարվա ընթացքում բազմարկիչների նման վարքագծի համեմատությունը նախորդ տարվա նույն ցուցանիշների հետ այդքան էլ համադրելի չէ, և ավելի տեղին է 2005 թ. ֆինանսական միջնորդության աստիճանի մասին դատողություններ անել փողայնացման և դրամայնացման ցուցանիշների միջոցով, որոնք միանշանակ վկայում են տարվա ընթացքում վերջինիս աճի մասին:

Այնուամենայնիվ, ինչպես նախորդ տարիներին, 2005 թ. նույնպես Հայաստանի Հանրապետությունը փողայնացման ցուցանիշով զիջել է անցումային տնտեսությամբ շատ երկրների, մասնավորապես՝ Արևելյան Եվրոպայի և Մերձբալթյան պետություններին:

Փողի բազա


2005 թվականի առաջին կիսամյակում ձևավորված մակրոտնտեսական և դրամավարկային միջավայրը բնութագրվել է դրամի փոխարժեքի շարունակական արժեքավորման և այդ պայմաններում դրամի նկատմամբ պահանջարկի կտրուկ աճի՝ դրամավարկային քաղաքականության տարեկան ծրագրով նախանշված ռիսկի դրսևորմամբ: Ստեղծված իրավիճակում, հաշվի առնելով դրամավարկային ցուցանիշների ծրագրային զգալի շեղումները և այն, որ արդյունքում դրանք չեն հանգեցրել գնաճային էական ճնշումների (կիսամյակային 1.5% գնաճ՝ ծրագրված 4%-ի փոխարեն), ԿԲ-ն տարվա երկրորդ կեսից վերանայել է դրամավարկային ցուցանիշների ծրագրային մակարդակները՝ առավել ընդլայնողական դրամավարկային քաղաքականություն իրականացնելու նկատառումով: Ըստ վերանայված ծրագրի, ԿԲ-ն նախատեսում էր տարվա վերջի դրությամբ փողի բազայի 41.4% աճ՝ սկզբնական ծրագրի 8.9%-ի, և միջին տարեկան 35.4% աճ՝ 13.6%-ի պարագայում:

Փողի պահանջարկի աճը տարվա ընթացքում գերազանցել է վերանայված ծրագրով նախա-

Փողի բազմարկչի ցուցանիշը անցումային տնտեսությամբ մի շարք երկրներում

Երկիր	Փողի բազմարկիչ								
	1997	1998	1999	2000	2001	2002	2003	2004	2005
Հայաստան	1.39	1.77	2.01	2.09	1.97	1.9	1.97	2.14	1.76
Վրաստան	1.35	1.42	1.45	1.59	1.71	1.69	1.81	1.72	1.91
Ադրբեջան	1.44	1.56	1.62	2.17	1.91	1.92	2.04	1.81	2.07
Էստոնիա	2.29	2.29	2.30	2.51	3.43	3.87	3.74	3.49	3.73
Լատվիա	2.03	2.03	1.97	2.33	2.46	2.49	2.87	3.06	2.93
Լիտվա	2.20	1.95	2.19	2.65	2.97	2.87	2.68	3.11	3.24
Ղրղզստան	1.37	1.50	1.53	1.53	1.53	1.44	1.45	1.57	1.38
Մոլդովա	1.69	1.66	1.67	1.84	1.95	2.06	2.31	2.31	2.26
Ռուսաստան	2.19	2.35	2.22	2.10	2.22	2.26	2.03	2.19	2.44
Ուկրաինա	1.69	1.80	1.79	1.80	1.80	2.08	2.34	2.27	2.26
Չեխիա	3.41	2.88	2.71	2.94	3.12	6.61	6.61	6.67	6.72
Լեհաստան	3.84	4.11	4.98	6.03	5.32	5.31	5.25	5.35	5.69
Սլովակիա	4.64	5.15	4.79	5.31	4.85	4.96	5.87	6.22	
Սլովենիա	8.61	8.6	8.15	9.45	9.1	10.4	10.48	10.85	
Ռումինիա	2.92	3.6	2.71	2.42	2.21	1.97	2.03	1.64	1.39
Բուլղարիա	2.59	2.63	2.54	2.99	2.89	3.0	3.11	2.75	3.04


տեսված աճի տեմպերը՝ հիմնականում պայմանավորված վերոնշյալ գործոններով և տարվա վերջին օրերին Կառավարության կողմից իրականացված մեծածավալ ծախսումներով: Այսպես, փողի բազան երկրորդ և երրորդ եռամսյակներում զգալիորեն գերազանցել է տատանումների թույլատրելի միջակայքի վերին սահմանը, իսկ ողջ չորրորդ եռամսյակի ընթացքում կառավարվել է միջակայքի շրջանակներում՝ բացառությամբ տարվա վերջին օրերի, երբ բյուջետային մեծածավալ ծախսումների հետևանքով այն կրկին գերազանցել է տատանման միջակայքի վերին սահմանը: Արդյունքում՝ տարին ավարտվել է ժամանակաշրջանի վերջի դրությամբ փողի բազայի տարեկան 51.9% և միջինը 39% աճով:



Գրաֆիկ 1.37
Փողի բազայի վարքագիծը 2005 թ. (մլն ՀՀ դրամ)

Որպես դրամի մեծածավալ պահանջարկի բավարարման հիմնական գործիք է ծառայել արտարժույթի գնումը, որի ընտրությունը պայմանավորված էր նաև արտարժութային մեծածավալ ներհոսքի ազդեցությունը շուկայում որոշ չափով մեղմելու խնդրով: Միևնույն ժամանակ, այս ներարկող գործիքի ակտիվ կիրառությունը հիմնավորված էր տարվա ընթացքում ձևավորված գնանկումային միջավայրի առկայությամբ, այն դեպքում, երբ նախորդ տարի արտարժույթի ներհոսքի չեզոքացման նպատակով փողի առաջարկի ընդլայնման հնարավորությունները բավականին սահմանափակ էին՝ գնաճային ճնշումների պարագայում:

Ելնելով նշված գործոններից՝ ԿԲ-ն արտարժույթի գնման գործիքի միջոցով տարվա ընթացքում ներարկել է շուրջ 45.0 մլրդ դրամի իրացվելիություն: Միաժամանակ, Կառավարության սեփականաշնորհման հատուկ հաշվի միջոցներից ԿԲ-ն փոխարկել է 14.6 մլրդ դրամին համարժեք արտարժույթ, որի ծախսումը Կառավարության կողմից ևս հանգեցրել է դրամային ավելցուկային իրացվելիության աճի: Վերջինիս նպաստել է նաև հունիսի 10-ից պարտադիր պահուստավորման մեխանիզմի փոփոխությունը, ինչի հետևանքով ևս 12.0 մլրդ դրամ, որն ապահովում էր ներգրավված արտարժութային միջոցների դիմաց պահուստավորումը, դարձել է ավելցուկային իրացվելիություն:



Գրաֆիկ 1.38
Փողի բազայի վարքագիծն ըստ բաղադրատարրերի (մլն ՀՀ դրամ)

Տարվա ընթացքում ձևավորված մեծածավալ դրամային ավելցուկային իրացվելիության կրճատման խնդիրը ԿԲ-ն լուծել է ինչպես գործիքակազմում եղած դրամային ներքաշող գործիքներով (հակադարձ ռեպո և ավանդ), այնպես էլ նոր ներդրված ֆինանսական գործիքներով (Կառավարության կողմից պետարժեթղթերի լրացուցիչ թողարկումներից ստացված միջոցների ավանդադրում ԿԲ-ում և ԿԲ արժեթղթերի թողարկում):

ԿԲ նախաձեռնությամբ այդ ժամանակահատվածում կնքվել են ՊՊ պորտֆելի ողջ ծավալով՝ շուրջ 6.0 մլրդ դրամի հակադարձ ռեպո համաձայնագրեր, որոնք պարբերաբար վերակնքվել են:


Բանկերն այս տարի բավականին ակտիվ նախաձեռնություն են ցուցաբերել մշտական հնարավորության ավանդային գործիքից օգտվելու հարցում, որի միջոցով ըստ էության լուծել են կարճաժամկետ (1-2 շաբաթ) բնույթի դրամային ավելցուկ իրացվելիության տեղաբաշխման խնդիրը:

Մինչև ԿԲ արժեթղթերի թողարկումը ակտիվորեն կիրառվել է ՊՊ լրացուցիչ թողարկումներից ստացված միջոցները ԿԲ-ում ավանդադնելու մեխանիզմը, որի միջոցով հունվար-հուլիս ժամանակահատվածում ներքաշվել է 15.6 մլրդ դրամի իրացվելիություն (մինչև տարեվերջ դրանք ամբողջությամբ մարվել են):

Հունիսի 10-ից ԿԲ-ն առաջին անգամ թողարկել է սեփական արժեթղթերը՝ մինչև 1 տարի մարման ժամկետով, որոնց տեղաբաշխման արդյունքում ներքաշվել է 21.2 մլրդ դրամի զուտ ծավալի իրացվելիություն:


Վերոնշյալ գործառնությունների արդյունքում, ինչը բխել է նաև տնտեսությունում ընթացող

դրամայնացման գործընթացից, արձանագրվել են ԿԲ-ից դուրս գտնվող կանխիկի աճի անհամեմատ բարձր տեմպեր. տարվա ընթացքում կանխիկն ավելացել է 47.1%-ով:




Գրաֆիկ 1.39
ՀՀ ԿԲ-ից դուրս շրջանառվող կանխիկ (%)

2005 թվականն առանձնահատուկ էր նաև բանկային համակարգի կողմից տնօրինվող ավելցուկ պաշարների բավականին բարձր մակարդակի առկայության տեսանկյունից, որին մեծապես նպաստել է տարվա կեսից պարտադիր պահուստավորման մեխանիզմի փոփոխությունը. միջին ամսական ավելցուկը 2004 թվականի վերջի 6.5 մլրդ դրամից հունիսին հասել է 13.6 մլրդ, իսկ տարեվերջին՝ 14.5 մլրդ դրամի: Ընդ որում, դրա հիմնական մասը բանկերը պահել են իրենց ընթացիկ գործառնություններն իրականացնելու համար:




Գրաֆիկ 1.40
Ավելցուկ պաշարների վարքագիծը (մլն ՀՀ դրամ)

2005 թվականի ընթացքում ԿԲ ՁԱԱ-ը համալրվել են 88.3 մլրդ դրամով կամ 59.2%-ով, ինչն ուղեկցվել է ԿԲ ՁՆԱ 19.8 մլրդ դրամի կամ ավելի քան 2 անգամ նվազմամբ: Ընդ որում, եթե ըստ կիսամյակների ՁԱԱ-ը երկուսում էլ աճել են՝ պայմանավորված ԿԲ կողմից արժութային շուկայում մեծածավալ գնման գործառնությունների իրականացմամբ, պահուստավորման մեխանիզմի փոփոխության հետևանքով ԿԲ-ում արտարժույթով թղթակցային հաշիվների միջոցների կուտակմամբ և այլ արտարժութային փոխարկումներով, ապա ՁՆԱ-ն առաջին կիսամյակում նվազել է 33.1 մլրդ դրամով, իսկ երկրորդում՝ աճել 13.3 մլրդ դրամով (ազդեցության գործոնները ներկայացված են սույն բաժնի «Փողի առաջարկ» ենթաբաժնում):



Գրաֆիկ 1.41
Փողի բազայի վարքագիծը ըստ ՁԱԱ-ի և ՁՆԱ-ի (մլն ՀՀ դրամ)


2005 թվականի ընթացքում շուկայական տոկոսադրույքների դրսևորած նվազողական վարքագիծը և փողի առաջարկի անհամեմատ բարձր աճի տեմպերը վկայում են իրականացված առավել ընդլայնողական դրամավարկային քաղաքականության մասին: Այդուհանդերձ, իրականացված քաղաքականությունը բնութագրող ցուցանիշներից դրամավարկային պայմանների ինդեքսը[1], 2005 թվականի հաշվարկներով, առաջին կիսամյակի ընթացքում արտահայտել է դրամավարկային քաղաքականության զսպողական ուղղվածություն՝ ցուցաբերելով աճողական վարքագիծ, ինչը մեծամասամբ կրել է իրական արդյունավետ փոխարժեքի արժեքավորման ազդեցությունը: Երկրորդ կիսամյակում արդեն, իրական փոխարժեքի համեմատաբար կայուն վարքագծի պարագայում, թուլացել է դրամավարկային պայմանների ինդեքսի վրա այդ գործոնի ազդեցությունը և, հիմնականում տոկոսադրույքների նվազման արդյունքում, ինդեքսը նվազել է՝ արտահայտելով ընդլայնողական դրամավարկային քաղաքականության ուղղվածությունը:



Դրամավարկային պայմանների ինդեքսի վարքագիծը ՀՀ տնտեսությունում

2005 թվականին փողի առաջարկի՝ նախատեսվածից ավելի շատ ընդլայնումը առավել ակնառու երևում է դրամավարկային կանոնների[2] հաշվարկից. տարվա ընթացքում և հատկապես երկրորդ կիսամյակում փողի բազայի փաստացի ցուցանիշն էապես գերազանցել է կանոնով հաշվարկված մա-

կարդակը, որի ազդեցության հիմնական գործոնները ներկայացված են «Փողի բազա» բաժնում: Այսինքն, ըստ կանոնի հաշվարկի տրամաբանության, դրամավարկային քաղաքականության առավել ընդլայնողական բնույթը հիմնավորվում է ամվանական ՀՆԱ աճի տեմպի համեմատ փողի բազայի 12-ամսյա աճի առաջանցիկ տեմպերով, որոնք ընթացիկ տարվա ընթացքում կազմել են համապատասխանաբար 13.9% և 51.9%:



Փաստացի և կանոնով հաշվարկված փողի բազաների վարքագիծը

[1] Դրամավարկային պայմանների հնդեքսի հայեցակարգը հրապարակված է 2001 թվականի 2-րդ եռամսյակի «ՀՀ ԿԲ բանբերում»:
[2] Դրամավարկային կանոնների հաշվարկման մեթոդաբանությունը հրապարակված է ՀՀ 2002 թվականի դրամավարկային քաղաքականության ծրագրում, առանձին հավելվածով:

Դրամավարկային քաղաքականության թափանցիկության և հրապարակայնության ապահովումը

2005 թվականին ՀՀ կենտրոնական բանկը առաջնորդվել է իր գործունեության և հատկապես իրականացվող դրամավարկային ու արժութային քաղաքականությունների թափանցիկությունն ու հրապարակայնությունը ապահովելու սկզբունքով: Պարբերաբար հանդես է եկել դրամավարկային քաղաքականության ընթացքի և կանխատեսումների վերաբերյալ հայտարարություններով, ԿԲ խորհրդի և դրամավարկային հանձնաժողովների նիստերը մեկնաբանող հաղորդագրություններով, հրատարակել է ամսական («ՀՀ ԿԲ տեղեկագիր»), եռամսյակային («ՀՀ ԿԲ բանբեր»), կիսամյակային («Գնաճը ՀՀ-ում») և տարեկան հաշվետվություններ, Դրամավարկային քաղաքականության տարեկան ծրագիրը: Միաժամանակ, յուրաքանչյուր եռամսյակ կազմակերպվել են հանդիպումներ առևտրային բանկերի հետ, որտեղ ներկայացվել են դրամավարկային քաղաքականության հիմնական ուղղությունները, տարեկան ծրագրի իրագործման եռամսյակային ընթացքը և ԿԲ գլխավոր նպատակի ապահովման գործընթացում առկա ռիսկերն ու դրանցից հետևող ճշգրտումները:

Լայն հասարակությանը ևս լրատվական միջոցներով տեղեկացվել է դրամավարկային քաղաքականության բնագավառում ձևավորված միտումների, դրսևորված առանձնահատկությունների և առկա հիմնախնդիրների վերաբերյալ: Միաժամանակ, հարց ու պատասխանի ձևով հասարակությանը պարբերաբար ներկայացվել է նաև իրականացվող դրամավարկային քաղաքականության և ԿԲ գլխավոր նպատակի ապահովման գործընթացը:

Տարվա երկրորդ կեսից, պայմանավորված դրամավարկային քաղաքականության ռազմավարության փոփոխությամբ, այն է՝ ծավալային կարգավորման ռեժիմից գնաճի նպատակադրման ռազմավարությանն անցմամբ, ԿԲ-ն հանդես է եկել մի շարք հրապարակումներով և հայտարարությամբ: Վերջիններս հիմնականում ներառել են գնաճի նպատակադրման ռազմավարության հայեցակարգը, դրան անցման հիմնավորումն ու նպատակահարմարությունը, ինչպես նաև դրա ներդրումից ակնկալվող սպասումները:

2005 թվականին Կենտրոնական բանկը շարունակել է տնտեսավարող սուբյեկտների շրջանում տարբեր թեմաներով անցկացվող հարցումների մեխանիզմի կիրառումը: Հարցումների արդյունքում ստացված տվյալները հաշվի են առնվել ԿԲ կողմից 2006 թ. ֆինանսական և դրամավարկային քաղաքականության ծրագրերի մշակման գործընթացում՝ բարձրացնելով կանխատեսումների որակն ու քաղաքականության իրականացման արդյունավետությունը:

1.5. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐԻ ՄԱԿԱՐԴԱԿԸ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

2005 թվականին ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պետական պահուստները[1] (առանց սեփականաշնորհման միջոցների) ավելացել են 122 մլն ԱՄՆ դոլարով և կազմել 669.8 մլն ԱՄՆ դոլար:

Կենտրոնական բանկի միջազգային պահուստները հիմնականում համալրվել են ԱՄՀ՝ Աղքատության նվազեցման և տնտեսական աճի խթանման (PRGF) վարկի մասնաբաժնի (10.2 մլն ԱՄՆ դոլար), այլ դրամաշնորհների (21.4 մլն ԱՄՆ դոլար), ինչպես նաև ներքին շուկայից արտարժույթի զուտ առքի (103 մլն ԱՄՆ դոլար) և պահուստների կառավարման արդյունքում ստացված եկամուտների (23 մլն ԱՄՆ դոլար) հաշվին:


Կառավարության «Սեփականաշնորհումից ստացվող արտարժութային մուտքերի հաշվառում» հատուկ հաշվի մնացորդը տարվա ընթացքում ավելացել է 57.5 մլն ԱՄՆ դոլարով և կազմել 85.6 մլն ԱՄՆ դոլար: Արդյունքում՝ ՀՀ կենտրոնական բանկի պահուստները, ներառյալ սեփականաշնորհման միջոցները, 2005 թ. ավելացել են 179.45 մլն ԱՄՆ դոլարով և կազմել 755.35 մլն ԱՄՆ դոլար:

2005 թվականին ՀՀ կենտրոնական բանկը շարունակել է առաջնորդվել ՀՀ միջազգային պահուստների կառավարման ոլորտում իր որդեգրած սկզբունքներով, այն է՝ ապահովել առավելագույն եկամտաբերություն՝ պահպանելով ներդրումների ցածր ռիսկայնությունը և բարձր իրացվելիությունը: ՀՀ կենտրոնական բանկը ներդրումներ է կատարել հիմնականում օտարերկրյա պետական և պետական երաշխիքով թողարկված բարձր վարկային որակով պարտատոմսերում, ինչպես նաև արտարժույթով ավանդներում:

2005 թվականին ՀՀ միջազգային պահուստների կառավարումից ստացված եկամուտները կազմել են շուրջ 23 մլն ԱՄՆ դոլար՝ կրկնակի գերազանցելով 2004 թվականի ցուցանիշը, որը 11.3 մլն ԱՄՆ դոլար էր: Եկամուտների նման աճը միջազգային շուկաներում տոկոսադրույքների աճի և տարվա ընթացքում ՀՀ կենտրոնական բանկի իրականացրած ներդրումային քաղաքականության արդյունք է:

Մասնավորապես՝ ԱՄՆ դոլարով արտահայտված ակտիվների եկամտաբերությունները տարվա ընթացքում աճել են 2 տոկոսային կետով[2], եվրոյով ակտիվներինը՝ 1/4 տոկոսային կետով (0.25%), իսկ Մեծ Բրիտանիայում պահպանվել է տոկոսադրույքների բավականին բարձր մակարդակը: Սակայն մյուս երկրների համեմատ ԱՄՆ-ում տոկոսադրույքների ավելի արագ աճը տարվա արդյունքում հանգեցրել է ԱՄՆ դոլարի նկատմամբ ներդրումային հիմնական արժույթների արժեզրկմանը[3]:

Այս միտումները հաշվի առնելով՝ ՀՀ կենտրոնական բանկը տարվա ընթացքում ավելացրել է ԱՄՆ դոլարի տեսակարար կշիռը պահուստներում՝ միաժամանակ չխախտելով այն միջակայքերը, որոնք սահմանվել են ակտիվների և պարտավորությունների արժութակազմերի համադրման սկզբունքով՝ նպատակ ունենալով չեզոքացնել փոխարժեքների տատանումների ազդեցությունը ՀՀ կենտրոնական բանկի զուտ արտաքին ակտիվների վրա:



Գրաֆիկ 1.42
Համախառն արտաքին պահուստների կառուցվածքը

ՀՀ կենտրոնական բանկի համախառն արտաքին պարտավորությունները 2005 թվականին

[1] *ՀՀ միջազգային պահուստների և պարտավորությունների ցուցանիշները ներկայացված են փաստացի փոխարժեքներով:*

[2] *ԱՄՆ ֆեդերալ պահուստային համակարգը 2005 թվականի հունիսին ռեպո տոկոսադրույքը բարձրացրել է 2 տոկոսային կետով (տարեվերջին կազմել է 4.25 %): Անգլիայի բանկը 2005 թվականին վերաֆինանսավորման տոկոսադրույքը իջեցրել է 0.25%-ով՝ հասցնելով 4.5%-ի: Եվրոպական կենտրոնական բանկը 2005 թվականի ընթացքում տոկոսադրույքը բարձրացրել է 0.25%-ով՝ տարեվերջին հասցնելով 2.25%-ի:*

[3] *Եվրոյի և անգլիական ֆունտ ստեռլինգի արժեզրկումը համապատասխանաբար կազմել է՝ 12.6 և 10 տոկոս:*

նվազել են 42.6 մլն ԱՄՆ դոլարով: Պարտավորությունների նվազման հիմնական պատճառը շուրջ 50 մլն ԱՄՆ դոլարի չափով վարկերի մարումն է և մասամբ էլ՝ ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՓԻ-ի և եվրոյի արժեզրկումը:


Նշված գործառնությունների արդյունքում ՀՀ ԿԲ զուտ արտաքին ակտիվները (առանց սեփականաշնորհման միջոցների) 2005 թվականին ավելացել են 164.6 մլն ԱՄՆ դոլարով և կազմել 472.6 մլն ԱՄՆ դոլար:

1.6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՇՈՒԿԱ

2005 թ. ՀՀ ֆինանսական շուկայի գրեթե բոլոր հատվածներում տոկոսադրույքները ունեցել են տատանողական վարքագիծ՝ դրսևորելով նվազման միտում:


Ավանդների և վարկերի տոկոսադրույքներ

Առևտրային բանկերի կողմից ՀՀ դրամով ներգրավված ավանդների դեկտեմբերի միջին տոկոսադրույքը, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ, ավելացել է 1.75 տոկոսային կետով՝ կազմելով 6.45%, իսկ ԱՄՆ դոլարով ներգրավված ավանդների դեկտեմբերի միջին տոկոսադրույքը, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ, նվազել է 1 տոկոսային կետով՝ կազմելով 4.6%:



Գրաֆիկ 1.43
Առևտրային բանկերի՝ ՀՀ դրամով և ԱՄՆ դոլարով ավանդների տոկոսադրույքներ (%)


Արդյունքում, դրամային և ԱՄՆ դոլարով ավանդների տոկոսադրույքների տարբերությունը կազմել է 1.85 տոկոսային կետ՝ նախորդ տարվա 1-ի փոխարեն:



Գրաֆիկ 1.44.
Բանկային համակարգի կողմից դրամով և ԱՄՆ դոլարով տրամադրված վարկերի տոկոսադրույքներ

Առևտրային բանկերի դրամային և ԱՄՆ դոլարով վարկերի դեկտեմբերի միջին տոկոսադրույքները, նախորդ տարվա դեկտեմբերի միջին տոկոսադրույքների համեմատ, նվազել են 3.31 և 0.5 տոկոսային կետով՝ համապատասխանաբար կազմելով 17.29% և 17.59%:

Առևտրային բանկերի դրամային և ԱՄՆ դոլարով վարկերի տոկոսադրույքների տարբերությունը կազմել է -0.3 տոկոսային կետ՝ նախորդ տարվա 2.5-ի փոխարեն: Արդյունքում՝ դրամով տրամադրված վարկերի և ավանդների սպրեդը նվազել է 5.06 տոկոսային կետով և կազմել 10.84%, իսկ ԱՄՆ դոլարով տրամադրված վարկերի և ավանդների սպրեդն ավելացել է 0.5 տոկոսային կետով և կազմել 13%՝ նախորդ տարվա 12.5-ի փոխարեն:




Գրաֆիկ 1.45
Դրամով և ԱՄՆ դոլարով վարկերի և ավանդների տոկոսադրույքների սպրեդ (տոկոսային կետ)

ՊՊ առաջնային շուկա

ՊՊ առաջնային շուկայում ևս տոկոսադրույքները դրսևորել են տատանողական վարքագիծ՝ միաժամանակ շարունակելով դեռևս նախորդ տարիներին ձևավորված նվազման միտումը: Տարվա վերջին ՊԿՊ միջին եկամտաբերությունը կազմել է 3.74%՝ տարվա սկզբի համեմատ նվազելով 0.57 տոկոսային կետով, ՄԺՊ միջին եկամտաբերությունը կազմել է 5.09%՝ նվազելով 0.86 տոկոսային կետով: ԵԺՊ միջին եկամտաբերությունը՝ պայմանավորված ժամկետայնության երկարացմամբ, դրսևորել է հակառակ վարքագիծը և տարվա վերջին կազմել 8.82% (15 տարի մարման ժամկետով պարտատոմսերի համար)՝ տարվա սկզբի 6.93%-ի փոխարեն (8 տարի մարման ժամկետով պարտատոմսերի համար):


2005 թ. տեղի է ունեցել պետական կարճաժամկետ պարտատոմսերի (ՊԿՊ) 29 թողարկում՝ 22.5 մլրդ դրամ ընդհանուր ծավալով, պետական

միջնաժամկետ պարտատոմսերի (ՄԺՊ) 14 թողարկում՝ 18.3 մլրդ դրամ ընդհանուր ծավալով, և երկարաժամկետ պարտատոմսերի (ԵԺՊ) 4 թողարկում՝ 6 մլրդ դրամ ընդհանուր ծավալով: Նախորդ տարվա համեմատությամբ թողարկումների ընդհանուր ծավալն ավելացել է 2.9 մլրդ դրամով, ընդ որում՝ ՊԿՊ թողարկման ընդհանուր ծավալն ավելացել է 9.3 մլրդ դրամով, ՄԺՊ թողարկման ծավալը նվազել է 9.7 մլրդ դրամով, իսկ ԵԺՊ-ինը՝ ավելացել 3.3 մլրդ դրամով:




Գրաֆիկ 1.46
ՊՊ առաջնային շուկայի տոկոսադրույքներ (%)

2005 թ. ևս ՊՊ առաջնային շուկայում պահպանվել է պարտատոմսերի նկատմամբ ընդհանուր պահանջարկի բարձր մակարդակը, թեև նախորդ տարվա 249.34%-ի փոխարեն պարտատոմսերի նկատմամբ պահանջարկը 2005 թ. ընթացքում նվազել է և կազմել թողարկման ծավալի 229.2%-ը կամ 107.264 մլրդ դրամ: Նշված ժամանակահատվածում ՀՀ ՖԷՆ կողմից իրականացվել է պետական պարտատոմսերի հետգնում՝ 5559.758 մլն դրամ ծավալով՝ 3.48% միջին եկամտաբերությամբ:



Գրաֆիկ 1.47
ՊՊ առաջնային տեղաբաշխման ծավալները (մլն ՀՀ դրամ)

Տարեվերջի դրությամբ շրջանառության մեջ գտնվող պետական պարտատոմսերի ընդհանուր ծավալը, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ, աճել է 7965.5 մլն դրամով՝ կազմելով 57555.5 մլն դրամ: Ծավալի աճն ուղեկցվել է նաև շրջանառությունում պարտատոմսերի միջին ժամկետայնության երկարացմամբ՝ կազմելով 839 օր՝ նախորդ տարվա 629 օրվա փոխարեն:




Գրաֆիկ 1.48
Շրջանառությունում ՊՊ կառուցվածքը (%)

ՊՊ սեփականատերերի կառուցվածքը

2005 թ. ՊՊ սեփականատերերի կառուցվածքում զգալիորեն կրճատվել են ոչ բանկ ներդրողների կողմից պետական արժեթղթերում ներդրումների ծավալները: Ռեզիդենտ ոչ բանկ ներդրողներին պատկանող պարտատոմսերի տեսակարար կշիռը նվազել է 5.72 տոկոսային կետով կամ 2203.756 մլն դրամով՝ կազմելով 7.94% կամ 4568.268 մլն դրամ: Գրեթե ամբողջությամբ կրճատվել է ոչ ռեզիդենտներին պատկանող ՊՊ ծավալը և կազմել ընդամենը 0.13 մլն դրամ:

ՊՊ սեփականատերերի կառուցվածքում 7234.893 մլն դրամով ավելացել են ռեզիդենտ բանկերի (այդ թվում՝ ՀՀ ԿԲ-ի) ներդրումների ծավալները՝ կազմելով 46779.093 մլն դրամ կամ շրջանառության մեջ գտնվող պարտատոմսերի ամբողջ ծավալի 81.27%-ը:

ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից հետ գնված պարտատոմսերի ծավալը տարվա վերջին կազմել է 6208.009 մլն դրամ կամ շրջանառության մեջ գտնվող պարտատոմսերի ամբողջ ծավալի 10.79%-ը:




Գրաֆիկ 1.49
ՊՊ սեփականատերերի կառուցվածքը (%)

ՊՊ երկրորդային շուկա


2005 թ., նախորդ տարվա համեմատությամբ, պարտատոմսերի երկրորդային շուկայի մասնակիցները շուկայում դրսևորել են բավականին ակտիվ վարքագիծ, որի արդյունքում իրականացված գործառնությունների ծավալն ավելացել է 36.17 մլրդ դրամով՝ կազմելով 75.913 մլրդ դրամ: Երկրորդային շուկայի միջին շաբաթական շրջանառությունը կազմել է մոտ 1.46 մլրդ դրամ:

Եկամտաբերության կորի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ եկամտաբերությունը նվազել է կորի գրեթե ողջ երկայնքով:



Գրաֆիկ 1.50
Սփոթ եկամտաբերության կոր

Եկամտաբերության կորի դիրքի փոփոխության գերակշիռ մասը՝ 96.4%-ը, պայմանավորվել է կորի մակարդակի համընթաց (զուգահեռ) տեղաշարժով, որը կազմել է 0.37 տոկոսային կետ՝ ի հաշիվ եկամտաբերությունների նվազման: 6.5%-ով փոփոխվել է կորի գոգվածությունը (0.065-ից՝ 0.061), ինչը վկայում է երկարաժամկետ ու կարճաժամկետ պարտատոմսերի տոկոսադրույքների միջև տարբերության նվազման մասին: Մնացորդային գործոնները կորի փոփոխության մեջ կազմել են –2.9%:



Գրաֆիկ 1.51
Շեղում


Ռեպո շուկա

2005 թ. միջբանկային ռեպո շուկայում նույնպես տոկոսադրույքների միջին մակարդակները նվազել են: Գործառնությունների միջին տարեկան եկամտաբերությունը նախորդ տարվա համեմատությամբ նվազել է 0.98 տոկոսային կետով և կազմել 3.45%: Ի տարբերություն ՊՊ երկրորդային շուկայի՝ միջբանկային ռեպո շուկայում իրականացված գործառնությունների ծավալները նախորդ տարվա համեմատությամբ նվազել են մոտ 5.4 մլրդ դրամով՝ կազմելով 98.254 մլրդ դրամ: Գործարքների միջին շաբաթական շրջանառությունը կազմել է 1.890 մլրդ դրամ:

Տարվա ընթացքում դրամային ավելցուկային իրացվելիությունը գրեթե մշտապես պահպանել է բարձր մակարդակ՝ պայմանավորված կապիտալի մեծածավալ ներհոսքով, ինչպես նաև պարտադիր պահուստավորման մեխանիզմի փոփոխությամբ: Վերջինիս միջին տարեկան ցուցանիշը կազմել է 11 մլրդ դրամ՝ 2004 թ. 4.7 մլրդ դրամի համեմատ:

ՀՀ տնտեսության զարգացմանը համահունչ և առևտրային բանկերի ավելցուկային իրացվելիության կարգավորման նպատակով ՀՀ ԿԲ-ն 2005 թվականին դրամային շուկայում կիրառել է հիմնականում ներքաշող գործիքներ: Բացառություն են կազմել արժութային շուկայում կիրառված գործիքները: Կենտրոնական բանկը, նպատակ ունենալով թուլացնել կապիտալի մեծածավալ ներհոսքով պայմանավորված ճնշումները, միջբանկային շուկայում 2005 թ. գնել է 103.3 մլն ԱՄՆ դոլար, իսկ հուլիսին իրականացրել նաև 2.3 մլն ԱՄՆ դոլարի արտարժույթի տրամադրման սվոփ՝ 35 օր ժամկետով, 0.54%-ով:

Հարկ է նշել, որ ԿԲ կողմից պարտատոմսերի երկրորդային շուկայում իրականացված պետական պարտատոմսերի առքի գործառնությունները հիմնականում ուղղվել են ՊՊ պորտֆելի համալրմանը: Այդ նպատակով ՀՀ կենտրոնական բանկը գնել է 1287.49 մլն դրամի արժեթուղթ՝ 4.5% եկամտաբերությամբ:




Գրաֆիկ 1.52
ՀՀ ԿԲ կողմից իրականացված դրամային գործիքների տեսակարար կշիռները

Դրան զուգահեռ, բանկային համակարգում ավելցուկային իրացվելիության կրճատման


նպատակով, ԿԲ նախաձեռնությամբ 2005 թ. հունվար - սեպտեմբեր ամիսների ընթացքում ակտիվորեն կիրառվել է հակադարձ ռեպո գործիքը՝ 23231.674 մլն դրամ ընդհանուր ծավալով և 3.75% միջին կշռված տոկոսադրույքով:

2005 թ. շարունակվել է դեռևս նախորդ տարվա վերջից ՀՀ ԿԲ և ՖԷՆ քաղաքականությունների կոորդինացման բնագավառում ներդրված դրամային ավելցուկի ներքաշման գործիքի կիրառումը, համաձայն որի՝ 2005 թ. Գանձապետարանը լրացուցիչ թողարկել և տեղաբաշխել է 15877.5 մլն դրամի պարտատոմս, որից ստացված գումարներն ամբողջությամբ ավանդադրվել են ՀՀ ԿԲ ավանդային հաշվում:

2005 թ. հունիսից, որպես ավելցուկային իրացվելիության ներքաշման այլընտրանքային գործիք, ՀՀ ԿԲ-ն սկսեց սեփական արժեթղթերի թողարկման գործընթացը: Արդյունքում, ԿԲ-ն իրականացրել է մինչև մեկ տարի մարման ժամկետով պարտատոմսերի 20 թողարկում՝ 24500 մլն դրամ ընդհանուր ծավալով, որից տեղաբաշխել է 22964.275 մլն դրամի պարտատոմս՝ 4.35% միջին կշռված եկամտաբերությամբ:



Գրաֆիկ 1.53
ՀՀ ԿԲ կողմից իրականացված դրամային գործառնություններն ըստ եռամսյակների




Գրաֆիկ 1.54
Ավանդների ծավալները ըստ եռամսյակների (մլն ՀՀ դրամ)

Տարվա ընթացքում բանկերն ակտիվորեն դիմել են ավանդադրման մշտական հնարավորության գործիքին, որը կարճաժամկետ ավելցուկային իրացվելիություն տնօրինող բանկերին հնարավորություն է տվել ավելցուկային միջոցները ներդնել ՀՀ կենտրոնական բանկում: 2005 թվականին Կենտրոնական բանկ է ներկայացվել 151650.0 մլն դրամի ավանդի ներդրման պահանջարկ՝ տարեկան միջին կշռված 1.47% եկամտաբերությամբ:

ՀՀ ԿԲ տոկոսադրույքներ

Վերոնշյալ խնդիրներից ելնելով՝ ՀՀ կենտրոնական բանկի կողմից 2005 թ. ժամանակ առ ժամանակ փոփոխվել են դրամավարկային գործիքների տոկոսադրույքները. ռեպո համաձայնագրերի տոկոսադրույքը տարվա ընթացքում վերանայվել է 4 անգամ՝ տարեսկզբի 3.75%-ի փոխարեն տարեվերջին սահմանվելով 3.5%, ավանդներինը 2 անգամ՝ տարեվերջին սահմանվելով 1%, իսկ լոմբարդային վարկերինը մնացել է անփոփոխ՝ 16%:




Գրաֆիկ 1.55
ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված տոկոսադրույքներ (%)

Կենտրոնական բանկի կողմից ռեպո տոկոսադրույքը սահմանվել է՝ ելնելով միջբանկային շուկայում իրականացված ռեպո գործառնությունների տոկոսադրույքներից և, միաժամանակ, դրամավարկային քաղաքականության ծրագրային ցուցանիշներից: Քանի որ 2005 թ. գրեթե մշտապես առկա էր ավելցուկային իրացվելիության կրճատման խնդիրը, ուստի ռեպո համաձայնագրերի տոկոսադրույքը միջին հաշվով 0.4 տոկոսային կետով բարձր է սահմանվել միջին շուկայական տոկոսադրույքից, ընդ որում՝ ԿԲ-ի ու միջբանկային ռեպո տոկոսադրույքների սպրեդը տատանվել է 0.09-ից 0.8 տոկոսային կետի սահմաններում՝ բացառությամբ դեկտեմբերի, երբ միջբանկային շուկայում նկատվել է ռեպո տոկոսադրույքների կտրուկ աճ, որի պարագայում ԿԲ-ն վերանայել է ռեպո տոկոսադրույքը՝ բարձրացնելով 0.5 տոկոսային կետով:

Արժութային շուկա


2005 թ. արժութային շուկայում ձևավորվել է կայուն արժևորման միտում: ԱՄՆ դոլարի նկատ-

մամբ դրամի արժևորումը կազմել է 7.92%՝ նախորդ տարեվերջի 485.84 դրամից հասնելով 450.19 դրամի (վարիացիա՝ 197.47, միջին շեղում՝ 14.05 դրամ, նվազագույն փոխարժեք՝ 435.75 դրամ, առավելագույն՝ 501.80 դրամ): ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար միջին տարեկան հաշվարկային փոխարժեքն արժևորվել է 16.55%-ով:



Գրաֆիկ 1.56
ՀՀ դրամի փոխարժեքի տատանումները ԱՄՆ դոլարի նկատմամբ

ՀՀ արժութային շուկայում իրականացված գործառնությունների համախառն ծավալն ավելացել է 31.44%-ով (2004 թ.՝ 2301.70 մլն ԱՄՆ դոլար) և կազմել 3025.40 մլն ԱՄՆ դոլար:




Գրաֆիկ 1.57
ՀՀ արժութային շուկայում ԱՄՆ դոլարով իրականացված գործառնություններ

Արժութային շուկայում դրամով իրականացված եվրոյի առքի և վաճառքի գործարքների համախառն ծավալը կազմել է 234.50 մլն եվրո (նախորդ տարվա համեմատությամբ աճը կազմել է 40.43%), որից 73.83 մլն եվրոն կազմել է առքի ծավալը, 160.67 մլն եվրոն՝ վաճառքի: Վաճառքի ծավալի գերազանցումը պայմանավորվել է Եվրոմիության հետ ՀՀ արտաքին տնտեսական կապերի ընդլայնմամբ:

2005 թ. նոյեմբերին ձևավորվել է Հայաստանի ֆոնդային բորսան, որը հնարավորություն է տալիս համախմբել արտարժույթի առաջարկ և պահանջարկ ներկայացնող ոչ միայն առևտրային բանկերը, այլև արտարժույթի առևտրի իրավունք ունեցող այլ կազմակերպություններ: Սկզբնական շրջանում բորսայական առևտրին մասնակցել են ՀՀ բոլոր առևտրային բանկերը և մեկ արժութային դիլեր: Մասնակիցների քանակը միտում ունի ավելանալու:

Երկու ամսվա ընթացքում բորսայում իրականացված գործարքների համախառն ծավալը կազմել է 42.988 մլն ԱՄՆ դոլար և 0.4 մլն եվրո՝ համապատասխանաբար 450.28 դրամ և 534.88 դրամ միջին կշռված փոխարժեքներով:



Գրաֆիկ 1.58
ՀՀ արժութային շուկայում եվրոյով իրականացված գործառնություններ

2. ՀՀ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ

Ֆինանսական կայունության ապահովումը նշանակում է ֆինանսական համակարգը զերծ պահել փլուզումից կամ խափանումներից այնպես, որ համակարգը շարունակի ապահովել անհրաժեշտ իրացվելիության մակարդակ, գործարքների ու փոխանցումների անխափան իրականացում և պահպանի խնայողությունների ներդրման հնարավորությունը: Ընդհանուր առմամբ, ֆինանսական կայունությունը ֆինանսական ճգնաժամի կամ վայրիվերումների բացակայությունն է, երբ ֆինանսական ակտիվների գները մեծ տատանումների չեն ենթարկվում, և ֆինանսական կազմակերպություններն ունակ են կատարելու իրենց ստանձնած պարտավորությունները՝ ավանդների ներգրավում և վարկերի տեղաբաշխում, վճարումների և հաշվարկների իրականացում, ֆինանսական ռիսկերի արդյունավետ կառավարում, ինչպես նաև շոկային իրավիճակներում առաջացած հնարավոր ռիսկերի չեզոքացում[1]:

Տնտեսության ֆինանսական կայունությունը վտանգող ռիսկերը կարելի է պայմանականորեն բաժանել երկու հիմնական խմբի՝ ռիսկեր, որոնք առաջանում են մակրոմիջավայրում և հետագայում կարող են ներթափանցել ֆինանսական համակարգ, և ռիսկեր, որոնք ծագում են հենց ֆինանսական համակարգի ներսում:

Այդ առումով էլ ՀՀ ֆինանսական կայունությունը վտանգող հնարավոր ռիսկերի բացահայտման նպատակով իրականացված վերլուծությունը ներառում է ինչպես ՀՀ մակրոտնտեսական միջավայրը, այնպես էլ ֆինանսական համակարգի երեք հիմնական բաղադրիչները՝ ֆինանսական շուկան, ֆինանսական հաստատությունները և ֆինանսական ենթակառուցվածքները:


2.1. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐՈՒՄ

Ֆինանսական համակարգի զարգացումները գրեթե ամբողջությամբ ածանցվում են երկրի մակրոմիջավայրից, և դրա վառ ապացույցն են ՀՀ տնտեսության վերջին տարիների աճին զուգընթաց ֆինանսական համակարգի դրական զարգացումները: Սակայն ՀՀ տնտեսությունը, ինչպես և բոլոր նման տնտեսությունները, ենթակա է նաև մակրոտնտեսական որոշ գործոնների ազդեցությանը (օրինակ՝ անշարժ գույքի գներ, ներմուծման և արտահանման ծավալային կենտրոնացումներ, ներմուծվող և արտահանվող ապրանքների գնային ցնցումներ և այլն), որոնք կարող են անակնկալ ապակայունացնող ներգործություն ունենալ երկրի ֆինանսական համակարգի վրա:

Անշարժ գույքի գներ

Երկրի ֆինանսական կայունությունը բնութագրող կարևոր գործոններից են ակտիվների, մասնավորապես՝ անշարժ գույքի գները, որոնք, սովորաբար, բավականին զգայուն են շուկայի ցնցումների նկատմամբ և շատ դեպքերում տնտեսությունում անկայուն իրավիճակների վաղ ահազանգման ցուցիչ են:

Այս գործոնը էլ ավելի կարևորվում է ՀՀ նման երկրներում, որտեղ ֆինանսական միջնորդության մակարդակը ցածր է, և բնակչության կողմից անշարժ գույքը դիտարկվում է որպես ներդրումների այլընտրանքային աղբյուր:



Գրաֆիկ 2.1
Երևան քաղաքի* բնակարանների (1 մ²) միջին գների ինդեքս (2002 թ. 1-ին եռ. = 100)

** Աղբյուրը՝ ՀՀ կադաստրի պետական կոմիտեի ինտերնետային կայք (www.cadastre.am, կայքում ՀՀ անշարժ գույքի միասնական միջին գների ինդեքսի բացակայության պատճառով, որպես ՀՀ անշարժ գույքի գների փոփոխությունների ցուցանիշ է ընտրվել Երևան քաղաքի բնակարանների միջին գների ինդեքսը):*

ՀՀ անշարժ գույքի շուկայում վերջին չորս տարիներին արձանագրվել են գների կայուն աճի միտումներ (տարեկան միջինը՝ 37%), ընդ որում՝ անշարժ գույքի գների աճը պայմանավորվել է ինչպես առաջարկի, այնպես էլ պահանջարկի գործոններով: Պահանջարկի տեսանկյունից՝ ՀՀ տնտեսական կայուն աճը, զուտ տրանսֆերտների և զուտ գործոնային եկամուտների ներհոսքը նպաստել են ազգաբնակչության եկա-

[1] *Աղբյուրը՝ «Հայաստանի Հանրապետության ֆինանսական կայունության ապահովման կառուցվածքի ԿԲ հայեցակարգ»:*

մուտների մակարդակի բարձրացմանը, ինչը, զուգորդվելով վերջին տարիներին հիպոթեկային վարկերի ներդրման, շուկայական տոկոսադրույքների նվազման և անշարժ գույքի վարձավճարների աճի հետ, իր հերթին խթանել է անշարժ գույքի գների աճը:

Առաջարկի տեսանկյունից՝ անշարժ գույքի գների աճի պատճառ են հանդիսացել ազատ հողային ռեսուրսների սակավությունը և, հետևաբար, հողի գնի բարձրացումը, շինարարության ծախքերի շարունակական աճը և անշարժ գույքի առկա պաշարների նվազումը:

Վերջին տարիներին ՀՀ բանկային համակարգում ներդրվող խնայողությունների այլընտրանքային «մրցակից» են անշարժ գույքում կատարվող ներդրումները՝ պայմանավորված այն հանգամանքով, որ տնտեսությունում ձևավորվել է անշարժ գույքի գների կայուն աճի սպասում, և առկա ազատ դրամական միջոցների մի մասը հոսում է այդ ուղղությամբ, քանի որ վերջինիս գների տարեկան աճը, ինչպես նաև դրա դիմաց գանձվող վարձավճարները ապահովում են եկամտաբերության բավականին բարձր մակարդակ:

Անշարժ գույքի շուկայի ռիսկայնության աստիճանը մեծ չէ, քանի որ Հայաստանի տնտեսությունը տնտեսական ակտիվության աճի պարբերաշրջանում է, մակրոտնտեսական բոլոր ցուցանիշները կառավարելի են, և անշարժ գույքի գների նվազումը մոտ ապագայում քիչ հավանական է:

Սակայն, եթե նույնիսկ անշարժ գույքի գները նվազեն, բանկային համակարգը, անշարժ գույքով ապահովված վարկերի որակի վատացման և հիմնական միջոցների վերագնահատման տեսանկյունից, էական վնասներ չի կրի: Ըստ գնահատումների՝ նույնիսկ անշարժ գույքի գների մինչև 50%-ով նվազման դեպքում ֆինանսական համակարգի կայունության վրա ազդեցությունը նշանակալի չի լինի, և բանկերը ունակ կլինեն չեզոքացնելու առաջացած կորուստները[2]:

Այնուամենայնիվ, անշարժ գույքի գների կայուն աճի միտումները որոշ առումով կարող են անբարենպաստ ազդեցություն թողնել բանկային համակարգի զարգացումների վրա, քանի որ, անշարժ գույքի գների աճի սպասումների ձևավորման արդյունքում, ազատ երկարաժամկետ դրամական միջոցները հոսում են անշարժ գույքի շուկա՝ շրջանցելով բանկային համակարգը:

[2] *Անշարժ գույքի գների ստրես-սցենարների մանրամասն արդյունքները ներկայացված են շուկայական ռիսկերի վերլուծության հատվածում:*

Եկամտային և պարտքային ցուցանիշներ

Ֆինանսական կայունության տեսանկյունից էապես կարևորվում են համախառն ազգային տնօրինվող եկամտի և ֆիզիկական ու իրավաբանական անձանց պարտքային ցուցանիշների զարգացման միտումները: Սովորաբար, երբ տնտեսության վարկավորումը կամ, այլ կերպ ասած՝ ֆիզիկական անձանց և տնտեսավարող սուբյեկտների պարտքային ցուցանիշները, նրանց տնօրինվող եկամուտների համեմատ աճում են ավելի առաջանցիկ աճի տեմպով, մտավախություն կարող է առաջանալ, որ, տեսականորեն, ինչ-որ պահի, բնակչության և տնտեսավարող սուբյեկտների եկամուտները կարող են չբավարարել կուտակված պարտքերը սպասարկելու համար:

ՀՀ-ում վերջին տարիներին բանկային համակարգի վարկային ներդրումների աճի տեմպը զգալի գերազանցել է համախառն ազգային տնօրինվող եկամուտների աճի տեմպը:

	2004	2005
Բանկային համակարգի կողմից տնտեսությանը տրամադրված վարկերի աճ	39%	39%
Համախառն ազգային տնօրինվող եկամտի աճ	16%	17%
Բանկային համակարգի կողմից տնտեսությանը տրամադրված վարկեր / Համախառն ազգային տնօրինվող եկամուտ	6%	8%

Սակայն վերոնշյալ միտումները չեն սպառնում ՀՀ ֆինանսական կայունությանը, քանի որ «Տնտեսության վարկավորում/Համախառն ազգային տնօրինվող եկամուտ» հարաբերակցությունը ցածր մակարդակ ունի, և ՀՀ ֆինանսական համակարգին բնորոշ է բավականին մեծ առաջանցիկ աճի ներուժ՝ համախառն տնօրինվող եկամուտների աճի նկատմամբ: Այլ կերպ ասած՝ ազգաբնակչությունը դեռևս բարձր վերադարձելիություն ապահովող պարտք կուտակելու բավականաչափ մեծ ներուժ ունի:

Արտաքին աշխարհի հետ կապված հիմնախնդիրներ


Զուտ տրանսֆերտներ և զուտ գործոնային եկամուտներ: Համախառն ազգային տնօրինվող եկամուտների աճը պայմանավորվում է նաև ար-

տաքին տնտեսությունից զուտ տրանսֆերտների և զուտ գործոնային եկամուտների աճով:

ՀՀ տնտեսությանը բնորոշ է արտաքին տնտեսությունից մեծածավալ զուտ տրանսֆերտների և զուտ գործոնային եկամուտների ներհոսքը. 2005թ. զուտ տրանսֆերտների ծավալը (ներառյալ պաշտոնական տրանսֆերտները) կազմել է 174.5 մլրդ դրամ, զուտ գործոնային եկամուտների ծավալը՝ 43 մլրդ դրամ: Հատկանշական է, որ և՛ զուտ տրանսֆերտները, և՛ զուտ գործոնային եկամուտները բավականին կենտրոնացված են ըստ երկրների:

Այսպես. ՌԴ-ն և՛ Հայաստանի տնտեսական հիմնական գործընկերներից մեկն է, և՛ մեր երկիր ներհոսող մասնավոր տրանսֆերտների և գործոնային եկամուտների հիմնական աղբյուրը. 2004թ. տրանսֆերտների և գործոնային եկամուտների զուտ ներհոսքում Ռուսաստանի կշիռը կազմել է 74.2 տոկոս, իսկ 2005 թ.՝ 81.3 տոկոս:


ՌԴ-ում ՀՀ քաղաքացիները հիմնականում զբաղված են ոչ արտահանելի՝ առևտրի և շինարարության ոլորտներում[3], որտեղ, ըստ գնահատումների, մոտ ապագայում եկամուտների նվազում չի սպասվում: Նման գնահատումները պայմանավորված են այն հանգամանքով, որ ՌԴ-ում ոչ արտահանելի ճյուղում եկամուտների աճին էապես նպաստում է միջազգային շուկայում նավթի գների, հետևաբար և՝ ՌԴ նավթի արտահանման ծավալների աճը:



Գրաֆիկ 2.2
ՌԴ ոչ արտահանելի ճյուղի եկամուտներ և ՌԴ-ից ՀՀ տրանսֆերտներ (2000 թ. = 100)

Վերջին տարիներին զգալիորեն մեծացել է Ռուսաստանի տնտեսության կախվածությունը նավթի համաշխարհային գներից: Նավթի արտահանման և ոչ արտահանելի ճյուղում եկամուտների միջև կոռելյացիայի գործակիցը հավասար է 0.97, իսկ 2003-2005թթ. ոչ արտահանելի ճյուղում եկամուտների միջին ճկունությունը նավթի արտահանման ծավալներից կազմել է 0.67[4]:

Ռուսաստանի նավթի արտահանման և նավթի միջազգային գների միջև կոռելյացիայի գործակիցը բավականին մոտ է 1-ին՝ 0.986, իսկ 2003-2005թթ. ՌԴ նավթի արտահանման միջին ճկունությունը նավթի միջազգային գներից՝ 1.7:



Գրաֆիկ 2.3
Նավթի գներ և ՌԴ-ից ՀՀ տրանսֆերտներ (2000 թ. = 100)

Ֆինանսական կայունության առումով կարևորվում է ՌԴ-ից զուտ գործոնային եկամուտների և զուտ տրանսֆերտների ներհոսքի անընդհատության պահպանումը: Ըստ ԱՄՀ փորձագետների[5] 1 բարել նավթի գնի միջին մակարդակը 2006 թ. կանխատեսվում է 61.75 ԱՄՆ դոլար (2005 թ. տարեվերջին կազմել է 56.75 ԱՄՆ դոլար): Նավթի գների կանխատեսվող նվազ աճը կարող է հանգեցնել 2006թ. մասնավոր տրանսֆերտների աճի տեմպի փոքր-ինչ նվազման, որն էլ, սակայն, նավթի գներից ածանցյալ՝ ՌԴ-ից զուտ գործոնային եկամուտների և զուտ տրանսֆերտների ներհոսքի հետ կապված մտահոգությունների տեղիք չի տալիս:

Այդուհանդերձ, եթե ՌԴ-ից զուտ գործոնային եկամուտների և զուտ տրանսֆերտների ներհոսքի անընդհատությունը չպահպանվի, ապա ՀՀ տնտեսությունում երկարաժամկետ հատվածում ռիսկային խնդիրներ կառաջանան: Այդ իսկ պատճառով առավել կարևորվում է ՌԴ զարգացումների հետևողական վերլուծությունների իրականացումը:

Արտահանման և ներմուծման կենտրոնացումներ: Ֆինանսական համակարգի կայունության վրա զգալի ազդեցություն են թողնում նաև արտաքին շուկաների զարգացումները և արտաքին աշխարհի հետ կապերի փոփոխությունները:


---

[3] *Աղբյուրը՝ արտերկրից ՀՀ ֆիզիկական անձանց անունով ստացվող՝ ոչ առևտրային նպատակով փոխանցումների կառուցվածքի բացահայտման նպատակով ՀՀ ԿԲ կողմից իրականացված հարցման արդյունքներ:*


[4] *Առավել մանրամասն տե՛ս «ՀՀ 2006թ. դրամավարկային քաղաքականության ծրագիր»:*

[5] *Տե՛ս IMF, World Economic Outlook, Sep., 2005:*

ՀՀ տնտեսության համար այս հարցը էլ ավելի է կարևորվում, քանի որ ՀՀ և՛ ներմուծման, և՛ արտահանման ոլորտներում նկատվում են զգալի կենտրոնացումներ, և միջազգային շուկայում որոշ ապրանքատեսակների գների անբարենպաստ տատանումների դեպքում կարող են ապակայունացնող ֆինանսական իրավիճակ ստեղծել:



Գրաֆիկ 2.4
ՀՀ ներմուծումը ըստ ապրանքախմբերի 2004 - 2005 թթ. (հազար ԱՄՆ դոլար)




Գրաֆիկ 2.5
ՀՀ արտահանումը ըստ ապրանքախմբերի 2004 - 2005 թթ. (հազար ԱՄՆ դոլար)

ՀՀ և՛ ներմուծման, և՛ արտահանման ծավալներում զգալի տեսակարար կշիռ է կազմում ադամանդի շրջանառությունը: Համաձայն գնահատումների՝ միջազգային շուկաներում ադամանդի գնի զգալի տատանումներ մոտ ապագայում չեն սպասվում, ինչն էլ, հավանաբար, զերծ կպահի ՀՀ տնտեսությունը անակնկալ ցնցումներից:

Կարևորվում են նաև պղնձի, մոլիբդենի և ոսկու արտահանման գները՝ պայմանավորված այն հանգամանքով, որ ապրանքների արտահանման ծավալի 70%-ը բաժին է ընկնում թանկարժեք և ոչ թանկարժեք քարերին ու մետաղներին:

Վերջին երեք տարիներին միջազգային շուկայում արձանագրվել է պղնձի գների մոտ 2.5, իսկ մոլիբդենի գների՝ մոտ 9 անգամ աճ: Սակայն 2006 թ. նման միտումներ չեն սպասվում. կանխատեսվում է, որ նախորդ տարիների համեմատությամբ, միջազգային շուկայում կարձանագրվի պղնձի և մոլիբդենի գների ոչ էական նվազում:



Գրաֆիկ 2.6
Պղնձի, ոսկու, ադամանդի, վառելանյութի և մոլիբդենի գները 2000-2005թթ. (2000թ. = 100)

Այդ նվազումն էլ, ըստ ամենայնի, կփոխհատուցվի արտահանման ակնկալվող քանակական աճով, ինչն էլ կչեզոքացնի գների փոքր-ինչ նվազման բացասական ազդեցությունը[6]:

Ոսկու գների աճի և ծավալային գրեթե կայուն մակարդակի պայմաններում, առաջիկայում ոսկու արտահանման ծավալների էական տատանումներ նույնպես չեն սպասվում:

Ինչ վերաբերում է ներմուծման ծավալների տատանումներին, ապա ենթադրվում է հանքահումքային արտադրանքի ներկրման ավելացում՝ պայմանավորված ինչպես նավթամթերքի միջին գների աճի, այնպես էլ նավթամթերքի (բենզինի) սպառման ծավալների ավելացման կանխատեսումներով:

Ակնկալվում է նաև այլ ապրանքախմբերի ներմուծման աճ: Եկամուտների, արտաքին տրանսֆերտների և արտաքին զուտ գործոնային եկամուտների աճը անուղղակիորեն կնպաստի ՀՀ ներմուծման աճին:

Ընդհանուր առմամբ, 2006 թվականին ՀՀ արտաքին առևտրաշրջանառության մեծ մասն ապահովող ապրանքատեսակների միջազգային գների զգալի տատանումներ չեն սպասվում, ինչը, ամենայն հավանականությամբ, համեմատաբար չեզոք ազդեցություն կունենա երկրի ֆինանսական կայունության վրա:

Ներմուծման նկատմամբ հակվածության աճի գործոնի ազդեցությունը ևս, ֆինանսական կայունության տեսանկյունից, էական չէ, քանի որ զգալի արտարժութային ներհոսքի արդյունք է, և ներմուծման աճը ներհոսքի չեզոքացման տրամաբանական շարունակությունն է:

[6] *Տե՛ս «ՀՀ 2006 թ. դրամավարկային քաղաքականության ծրագիր», «Արտաքին հատվածը» բաժինը:*

2.2. ՀՀ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՇՈՒԿԱՅԻ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ


2005 թ. տոկոսադրույքները տատանողական վարքագիծ են ունեցել ՀՀ ֆինանսական շուկայի գրեթե բոլոր հատվածներում՝ դրսևորելով նվազման միտում: Թեև պետական պարտատոմսերը համարվում են ոչ ռիսկային արժեթղթեր և, հետևաբար, դրանց եկամտաբերությունների ձևավորման վրա տարբեր գործոնների ազդեցությունը նվազագույն է, այնուամենայնիվ, դրանք զերծ չեն ֆինանսական շուկայում տոկոսադրույքների տատանումների ազդեցություններից: Տոկոսադրույքի ռիսկի գնահատման նպատակով հաշվարկված մոդիֆիկացված դյուրացիայի (DM) միջին ցուցանիշը, որը ցույց է տալիս եկամտաբերության փոփոխության համեմատությամբ գնի փոփոխման մակարդակը, 2005 թ. վերջի դրությամբ շրջանառությունում առկա պետական պարտատոմսերի համար (առանց ՀՀ ԿԲ պարտատոմսերի) կազմել է 2.16 (2004 թ.՝ 1.65): Պետական գանձապետական պարտատոմսերի DM ցուցանիշի աճը հիմնականում պայմանավորվել է պարտատոմսերի ժամկետայնության՝ դյուրացիայի երկարացմամբ, որն էլ, շահույթի ստացման տեսանկյունից, տոկոսադրույքի նվազման սպասումների պարագայում դրական երևույթ է ներդրողների համար: Միաժամանակ, հաշվի առնելով շրջանառությունում առկա կարճաժամկետ պարտատոմսերի աճն ի հաշիվ ԿԲ արժեթղթերի, մոդիֆիկացված դյուրացիայի միջին ցուցանիշը նախորդ տարվա համեմատությամբ ավելացել է ընդամենը 0.03 տոկոսային կետով՝ կազմելով 1.68, ինչը նշանակում է, որ եկամտաբերության 1% փոփոխության դեպքում պարտատոմսի գինը միջին հաշվով աճում կամ նվազում է մոտավորապես 1.68%-ով:

DM	
մինչև 3 ամիս	0.23
3-6 ամիս	0.48
6-9 ամիս	0.69
9 ամսից 1 տարի	1.20
1-2 տարի	2.12
2-5 տարի	4.71
5-10 տարի	6.99

Ստորև ներկայացված է 2005 թվականի դեկտեմբերի վերջի դրությամբ վաճառքի նպատակով առևտրային բանկերի ձեռք բերած պետական պարտատոմսերի (ներառյալ ԿԲ պարտատոմսերի) պորտֆելը և գնահատված է եկամտաբերության 1% փոփոխության դեպքում շահույթի կամ վնասի չափը:

	ՊՊ ծավալ (մլն դրամ)	DM	Գնի փոփոխություն (±) (մլն դրամ)
մինչև 3 ամիս	4,446.9	0.24	10.45
3-6 ամիս	11,408.8	0.48	53.98
6-9 ամիս	5,053.4	0.68	34.17
9 ամսից 1 տարի	8,104.7	1.14	98.94
1-2 տարի	10,330.0	2.30	255.36
2-5 տարի	4,119.6	4.79	207.13
5-10 տարի	3,441.1	6.95	286.66
Ընդամենը	46,904.5	1.85	946.7


Թեև 2005 թվականին ֆինանսական շուկայում տոկոսադրույքի տատանումներ են արձանագրվել, այնուամենայնիվ, նախորդ տարիների համեմատությամբ, ՊՊ երկրորդային շուկայի կայունության մասին է վկայում իրականացված գործառնությունների եկամտաբերությունների միջին քառակուսային շեղման նվազումը: Ընդ որում՝ 2003 թ. այն կազմել է 3.09, 2004 թ.՝ 2.37, իսկ 2005 թ.՝ 1.54: Նույնը կարելի է ասել նաև միջբանկային ռեպո տոկոսադրույքների վերաբերյալ: Տոկոսադրույքների նվազմանը զուգընթաց, կրճատվել է նաև միջին քառակուսային շեղումը՝ 2005 թ. կազմելով 0.58:



Գրաֆիկ 2.7
Ռեպո տոկոսադրույքների միջին քառակուսային շեղում

Ֆինանսական շուկայի կայունության վրա էական ազդեցություն ունեն նաև փոխարժեքի տատանումները, ինչն էլ, որպես հետևանք, հանգեցնում է ՀՀ բանկային համակարգի արժութային ռիսկի գոտու ընդլայնմանը:

ՀՀ ներքին արժութային շուկան վերջին տարիներին (2003 - 2005 թթ.) բնութագրվել է տատանողականության (volatility) բարձր աճով:



Գրաֆիկ 2.8
ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար փոխարժեքը 2003 - 2005 թթ.

Տատանողականության աճի պայմաններում գործոնների ազդեցությունը փոխարժեքի ավելի մեծ շեղումներ է արձանագրում, քան կայուն շուկայի պարագայում: 2003 թ. երկրորդ կեսից արժութային շուկայում դրսևորվել է փոխարժեքի կայուն արժևորման միտում, որը ձևավորել է համապատասխան սպասումներ, և բանկերը, իրենց արժութային ռիսկը նվազեցնելու համար, ձգտում են դիրքերը փակ պահել:

Տատանողականության առումով 2005 թ., 2004 թ. համեմատությամբ (վարիացիա՝ 735.41), ավելի բարենպաստ էր՝ վարիացիան կազմել է 197.83, ընդ որում՝ երկրորդ կիսամյակում տատանողականությունը նվազել է մինչև 77 (առաջին կիսամյակում՝ 279):

2.3. ՀՀ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ

Բանկային համակարգի[1] զարգացման միտումները

I. Ընդհանուր դրույթներ

ՀՀ ֆինանսական կայունության տեսանկյունից էապես կարևորվում են բանկային համակարգի՝ վերջին տարիներին ձևավորված դրական զարգացումները, մասնավորապես՝ ակտիվների, պարտավորությունների, կապիտալի, եկամուտների աճի, ինչպես նաև ռիսկերի կառավարման համակարգի կատարելագործման պարագայում դրանց մակարդակների նվազման կայուն միտումները:

2005 թվականի սկզբին ՀՀ տարածքում գործել են 20 բանկեր (233 մասնաճյուղերով): Տարվա ընթացքում բանկային գործունեության լիցենզիա է ստացել «Արմսվիսբանկ» ՓԲԸ-ն: Տարեվերջին ՀՀ տարածքում գործել են 21 առևտրային բանկեր (269 մասնաճյուղերով), ընդ որում՝ բոլոր բանկերը գործել են ընդհանուր վերահսկողության դաշտում:

2005 թվականին արձանագրվել է բանկային համակարգի ընդհանուր կապիտալի, պարտավորությունների և ակտիվների աճ:

Բանկային համակարգի ակտիվներ, պարտավորություններ և կապիտալ *(հազար դրամ)*

	31.12.2004	31.12.2005	2005թ. տոկոսային աճ
Ակտիվներ	363567544	440674145	21.2%
Պարտավորություններ	298935905	345913389	15.7%
Կապիտալ	64631639	94760756	46.6%

Բանկային համակարգի կապիտալը և եկամտաբերությունը: Բանկային համակարգի ընդհանուր կապիտալի աճը տարեսկզբին կանխատեսվող 17.0 մլրդ դրամի[2] փոխարեն կազմել է 30.1 մլրդ դրամ՝ պայմանավորված համակարգի կանոնադրական հիմնադրամի աննախադեպ աճով:

Էապես շեղվել են միայն կանոնադրական հիմնադրամի աճի փաստացի և կանխատեսված ցուցանիշները (տարեսկզբին կանխատեսվել էր 7.3 մլրդ դրամ աճ, փաստացի աճը՝ 20.2 մլրդ դրամ): Կանխատեսված և փաստացի ցուցանիշների զգալի տարբերությունը հետևանք է այն հանգամանքի, որ կանոնադրական հիմնադրամի աճի կանխատեսումների համար հիմք են ընդունվել բանկերի կողմից ներկայացված ռազմավարական ծրագրերում կանխատեսված ցուցանիշները, ըստ որոնց՝ նման աճ չէր ակնկալվում:

Կանոնադրական հիմնադրամի աճ է արձանագրվել 14 բանկերում, ընդ որում՝ ի հաշիվ և՛ ներքին, և՛ արտաքին աղբյուրների: Ոչ ռեզիդենտների մասնակցության տեսակարար կշիռը բանկերի կանոնադրական հիմնադրամում ավելացել է ընդամենը 0.2 տոկոսային կետով և տարեվերջին կազմել 52.8%:

Նախորդ ժամանակաշրջանի շահույթից բաշխվող շահաբաժինների կանխատեսված ընդհանուր մեծությունը 2005 թվականին կազմել է 2.7 մլրդ դրամ: Տարվա ընթացքում նախորդ ժամանակաշրջանի շահույթից փաստացի շահաբաժիններ են բաշխել վեց բանկեր՝ ընդհանուր 2.9 մլրդ դրամի չափով, որը փոքր-ինչ գերազանցել է կանխատեսված մակարդակը:

Բանկային համակարգի զուտ շահույթն ավելացել է 16.5%-ով[3] և կազմել 12.0 մլրդ դրամ, որը ընդամենը 0.4 մլրդ դրամով է շեղվել կանխատեսված 12.4 մլրդ դրամ ցուցանիշից: Տարվա ընթացքում շահույթով է աշխատել 17 բանկ, իսկ վնասով՝ 4 բանկ:

Համակարգի շահութաբերությունն ըստ ակտիվների (չբաշխված շահույթի հարաբերությունը ակտիվների միջին տարեկան մեծությանը) կազմել է 3.0%, իսկ ըստ կապիտալի (չբաշխված շահույթի հարաբերությունը կապիտալի միջին տարեկան մեծությանը)՝ 15.3% (2004 թ., համապատասխանաբար՝ 3.2% և 18.4%):

Բանկային համակարգի եկամուտների և կապիտալի աճի միտումները ուղղակիորեն դրական ազդեցություն են թողել ֆինանսական կայունության վրա՝ բանկային համակարգին ընձեռելով ռիսկերով պայմանավորված հնարավոր կորուստների չեզոքացման ավելի լայն հնարավորություն:

---

[1] 31.12.05 թ. դրությամբ ընդհանուր վերահսկողության դաշտում գործող 21 բանկերը, իսկ 31.12.04թ. դրությամբ՝ 20 բանկերը:

[2] Ֆինանսական կայունության գնահատման համատեքստում ՀՀ ԿԲ կողմից իրականացվում են բանկային համակարգի զարգացումների պարբերական կանխատեսումներ, որոնց հիմքում առևտրային բանկերի ռազմավարական ծրագրերն են և ՀՀ ԿԲ մասնագետների փորձագիտական գնահատումները: Կանխատեսումների արդյունքները ամփոփվում են ՀՀ դրամավարկային քաղաքականության տարեկան ծրագրերում:

[3] 2004 թ. շահույթի մեծությունը՝ առանց Հայկապ բանկի ցուցանիշների:

Բանկային համակարգի պարտավորությունները: 2005 թ. ՀՀ բանկային համակարգի ընդհանուր պարտավորությունների աճը կազմել է 47.0 մլրդ դրամ՝ զիջելով տարեսկզբին կանխատեսվող 51.0 մլրդ դրամ ցուցանիշը: Փաստացի և կանխատեսվող աճերի տարբերությունը պայմանավորվել է ոչ ռեզիդենտների ավանդների աճի կանխատեսված ցուցանիշից շեղումով: Պարտավորությունների փաստացի աճը հիմնականում ապահովվել է ավանդների (34.4 մլրդ դրամ) և բանկերի նկատմամբ պարտավորությունների (7.3 մլրդ դրամ) աճի հաշվին:

Ընդհանուր կառուցվածքում դրամով ներգրավված պարտավորություններն աճել են 44.2%-ով, արտարժույթով ներգրավված պարտավորությունները՝ 5.4%-ով: Ընդհանուր պարտավորություններում դրամով պարտավորությունների տեսակարար կշիռն ավելացել է 6.5 տոկոսային կետով՝ կազմելով 33.2%:

Տարեսկզբին կանխատեսվել էր ընդհանուր ավանդների 41 մլրդ դրամով աճ, ընդ որում՝ ռեզիդենտների ավանդների աճի մեծությունը կանխատեսվել էր 33.4 մլրդ դրամ, ոչ ռեզիդենտներինը՝ 7.6 մլրդ դրամ: Տարեվերջին ռեզիդենտների ավանդների աճը կազմել է 34.1 մլրդ դրամ, ոչ ռեզիդենտներինը՝ 0.3 մլրդ դրամ:

Համընդհանուր ավանդների աճն ամբողջովին ապահովվել է ի հաշիվ դրամային ավանդների աճի. դրամային ավանդներն աճել են 71%-ով կամ 34.9 մլրդ դրամով, արտարժութային ավանդները նվազել են 0.3%-ով կամ 0.5 մլրդ դրամով:

Պարտավորությունների այլ հոդվածների մասով 2005 թվականին արձանագրվել է՝ ՀՀ կառավարության նկատմամբ պարտավորությունների 22%-ով աճ (2.9 մլրդ դրամով), բանկերի նկատմամբ այլ պարտավորությունների 32%-ով աճ (7.2 մլրդ դրամով), այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պարտավորությունների 30%-ով աճ (1.9 մլրդ դրամով) և այլ պարտավորությունների աճ 5%-ով (1.0 մլրդ դրամով):

Բանկային համակարգի ակտիվները: Բանկային համակարգի պարտավորությունների և կապիտալի փաստացի ու կանխատեսվող մակարդակների տարբերություններով պայմանավորված՝ ընդհանուր ակտիվների փաստացի աճը գերազանցել է կանխատեսված 68 մլրդ դրամ աճը՝ կազմելով 77.1 մլրդ դրամ:


31.12.2005 թ. դրությամբ համակարգի ընդհանուր ակտիվների ծավալը կազմել է ՀՆԱ 19.8%-ը (2004 թ.՝ 19.2%), իսկ տնտեսության վարկավորման ծավալը՝ ՀՆԱ 8.3%-ը (2004 թ.՝ 7.0%):

Համակարգի ընդհանուր ակտիվների աճի 67.0%-ը բաժին է ընկել վարկային ներդրումներին:

Ինչպես և նախորդ տարի, բարձր իրացվելի ակտիվների աճի տեմպը զիջել է ընդհանուր ակտիվների աճի տեմպին, իսկ տնտեսությանը տրամադրված վարկերի աճի տեմպը գրեթե կրկնակի գերազանցել է ընդհանուր ակտիվների աճի տեմպը: Բարձր իրացվելի ակտիվներն ավելացել են 16.4%-ով, իսկ տնտեսության վարկերը՝ 39.1%-ով: Վերջինս պայմանավորվել է այն հանգամանքով, որ պարտավորությունները հիմնականում ավելացել են ժամկետային պարտավորությունների հաշվին, և բանկերը, ձեռք բերելով ընթացիկ իրացվելիության բարձր մակարդակ, դարձյալ ապահովել են վարկային ներդրումների աճի ավելի արագ տեմպ, քան բարձր իրացվելի ակտիվներինը: Միաժամանակ, հատկանշական է, որ վարկերի արագատեմպ աճը չի հանգեցրել բանկային համակարգի վարկերի որակի վատթարացման և, հետևաբար նաև՝ ֆինանսական կայունության խոցելիության մակարդակի բարձրացման:

II. Վարկային ռիսկ

Բանկային համակարգում առկա ռիսկերից առանձնակի ուշադրության է արժանի վարկային ռիսկը՝ չնայած ՀՀ բանկային համակարգում վարկային ռիսկով պայմանավորված վնասների մեծությունը վերջին տարիներին նվազման միտումներ է դրսևորում:




Գրաֆիկ 2.9
Բանկային համակարգի կողմից տնտեսությանը տրամադրված վարկերի ծավալները

Բանկային համակարգի ֆինանսական միջնորդության մակարդակը դեռևս ցածր մակարդակ ունի, թեև վերջին տարիներին նկատելի են աճի միտումներ (եթե 2002 թ. բանկային համակարգի կողմից տնտեսությանը տրամադրված

վարկերի և ՀՆԱ հարաբերակցությունը 6.2% էր, ապա 2005թ.՝ 8.3%):

Բանկային համակարգի կողմից տնտեսությանը տրամադրված վարկերը կայուն աճել են, ընդ որում՝ վարկերի աճի տեմպը վերջին տարիներին գերազանցել է ընդհանուր ակտիվների աճի տեմպը, որի արդյունքում ընդհանուր ակտիվներում վարկերի տեսակարար կշիռն ավելացել է և 31.12.05 թ. կազմել 41.8%:

Բանկային համակարգի ֆինանսական միջնորդության կարևորագույն ցուցանիշ է տնտեսության վարկերի մեծության հարաբերակցությունը ընդհանուր ավանդների մեծությանը, ինչը, լայն իմաստով, խնայողություններից ներդրումների փոխանցման բնութագրիչ է: Վերջին տարիներին այս ցուցանիշը ևս աճել է և 31.12.05 թ. կազմել 70.4%:




Գրաֆիկ 2.10

Բանկային համակարգի վարկեր/ավանդներ հարաբերակցությունը և արտարժութային վարկերի տեսակարար կշիռը

ՀՀ բանկային համակարգի կողմից տնտեսությանը տրամադրված ընդհանուր վարկերում արտարժութային վարկերի տեսակարար կշիռը վերջին տարիներին նվազել է, ընդ որում՝ առավել զգալի նվազում է արձանագրվել 2005 թ. (6.3 տոկոսային կետով)՝ կազմելով 63.6%:

Ընդհանուր վարկային ներդրումները (վարկեր և դեբիտորական պարտքեր) 2005թ. ավելացել են 34%-ով կամ 52.4 մլրդ դրամով, այդ թվում՝ ոչ ռեզիդենտների վարկային ներդրումներն ավելացել են 23%-ով կամ 3.7 մլրդ դրամով, իսկ ռեզիդենտների վարկային ներդրումները՝ 35%-ով կամ 48.7 մլրդ դրամով:


Ռեզիդենտների վարկային ներդրումներում դարձյալ խոշոր աճ է արձանագրվել սպառողական (58%՝ 22.6 մլրդ դրամով) և առևտրի ոլորտի (35%՝ 11.0 մլրդ դրամով) վարկերում: Սպառողական վարկերից առանձնակի ուշադրության է արժանի հիպոթեկային վարկավորումը, որը թեև վարկային պորտֆելի ընդամենը 6%-ն է կազմում, սակայն աճի զգալի ներուժ ունի: Տնտեսության մնացած ճյուղերում ևս արձանագրվել է վարկերի աճ:



Գրաֆիկ 2.11


Բանկային համակարգի կողմից ռեզիդենտներին տրամադրված վարկերը՝ ըստ տնտեսության ճյուղերի (հազար ՀՀ դրամ)

Վարկային ներդրումներում երկարաժամկետ (1 տարի և ավելի ժամկետայնությամբ) վարկերի տեսակարար կշիռը վերջին տարիներին էապես աճել է՝ հիմնականում պայմանավորված սպառողական վարկերի ժամկետայնության մեծացմամբ:



Գրաֆիկ 2.12

Բանկային համակարգի կողմից ռեզիդենտներին տրամադրված վարկերը՝ ըստ ժամկետայնության (հազար ՀՀ դրամ)




Գրաֆիկ 2.13

Բանկային համակարգի վարկերի և դեբիտորական պարտքերի տեսակարար կշիռները՝ ըստ դասերի

Վարկային ռիսկի առումով հատկանշական է, որ վերջին տարիներին ՀՀ բանկային համակարգում արձանագրվել է ստանդարտ վարկերի և դեբիտորական պարտքերի տեսակարար կշռի աճ:


31.12.2005 թ. դրությամբ չաշխատող ակտիվների մեծությունը կազմել է 4.2 մլրդ դրամ, որի 4.6%-ը բաժին է ընկել ոչ ռեզիդենտներին, իսկ 95.4%-ը՝ ռեզիդենտներին: Ըստ տնտեսության ճյուղերի՝ ռեզիդենտների վարկային ներդրումներում չաշխատող ակտիվների տեսակարար կշիռը համեմատաբար բարձր է շինարարության ճյուղում՝ 6.9%, և հանրային սննդի ու սպասարկման այլ ոլորտների վարկերում՝ 3.2%:

Վարկային ռիսկը բնութագրող կարևորագույն ցուցանիշ է զուտ մասհանումների և ակտիվների մեծության հարաբերակցությունը, որը, լայն իմաստով, բնութագրում է վարկային ռիսկով պայմանավորված միավոր ակտիվի գծով միջին կորուստը: Նշված ցուցանիշը նվազելով՝ 2004 և 2005 թթ. կազմել է 0.4%:



Գրաֆիկ 2.14
Բանկային համակարգի զուտ մասհանումների հարաբերությունը ընդհանուր ակտիվներին


Նշված ցուցանիշները վկայում են բանկային համակարգում վարկային ռիսկի կառավարման մակարդակի բարելավման մասին, ինչին նպաստել է նաև վարկային ռեգիստրի գործունեությունը, որի միջոցով բանկերը նախապես տեղեկացվում են վարկառուի վարկային պատմությանը:



Գրաֆիկ 2.15
Բանկային համակարգի կապիտալի համարժեքության ցուցանիշները

Ռիսկերի զսպմանն են ուղղված ՀՀ ԿԲ կողմից սահմանվող նորմատիվները. 31.12.2005 թ. դրությամբ բանկերի ընդհանուր և հիմնական կապիտալի համարժեքության ցուցանիշները ($Ն1^1$, $Ն1^2$)՝ ընդհանուր կապիտալի հարաբերությունը ռիսկով կշռված ակտիվներին և հիմնական կապիտալի հարաբերությունը ռիսկով կշռված ակտիվներին, համապատասխանաբար կազմել են 33.7% և 31.7%, որոնք զգալի գերազանցում են նորմատիվային պահանջները (պահանջվող նվազագույն սահմանաչափը՝ 12% և 8%):

31.12.2005 թ. դրությամբ կապիտալի համարժեքության նորմատիվների խախտում որևէ բանկում չի արձանագրվել:



Գրաֆիկ 2.16
Ընդհանուր կապիտալի համարժեքությունը՝ ըստ բանկերի (31.12.2005 թ. դրությամբ)

Համակարգում վեց բանկերի նորմատիվային կապիտալը գերազանցում է 5 մլրդ դրամը, ինը բանկերինը՝ 3 - 5 մլրդ դրամի շրջանակներում է, հինգ բանկերինը՝ 2.4 - 3 մլրդ դրամի շրջանակներում և մեկ բանկինը՝ 2 - 2.4 մլրդ դրամի շրջանակներում:

Ֆինանսական կայունության ապահովման համատեքստում, հնարավոր ռիսկերի կանխատեսման, բացահայտման և գնահատման գործընթացում միջազգային փորձն էապես կարևորում է ստրես-տեստերի կիրառության անհրաժեշտությունը, ըստ որի՝ կառուցվում են նույնիսկ քիչ հավանական ամենատարբեր ստրես-սցենարներ և գնահատվում այդ իրավիճակների ի հայտ գալու դեպքում դրանց ազդեցության մակարդակը ֆինանսական կայունության վրա:

Վարկային ռիսկի ստրես-տեստերով գնահատվում է վարկերի դասերի փոփոխման իրավիճակների ազդեցությունը կապիտալի համարժեքության նորմատիվի վրա: Ըստ ակտիվների՝ վարկային ներդրումները դասակարգվում են ստանդարտ, հսկվող, ոչ ստանդարտ, կասկածելի և անհուսալի դասերի: Դիտարկվող ստրես-սցենարներում արվում են ենթադրություններ, ըստ որոնց՝ 1) բանկերի վարկերի ծավալները փոփոխության չեն ենթարկվում, 2) գրավադրված գույքը անտեսվում է:


Գնահատվել է, որ ներկայացված աղյուսակում դիտարկվող հնարավոր վատագույն ստրես-իրավիճակների ի հայտ գալու դեպքում որևէ բանկ չի խախտի կապիտալի համարժեքության $Ն1^1$ և $Ն1^2$ նորմատիվները: Միաժամանակ գնահատվել է, որ դիտարկվող վատագույն իրավիճակով պայմանավորված՝ բանկային համակարգի կորուստները բացասական ազդեցություն չեն թողնի ՀՀ ֆինանսական կայունության վրա:

Ստրես - սցենարներ

31.12.05	Հավկող, ոչ ստանդարտ և կոնյակածելի դասերի վարկերից 25%-ի ոռոտակորում անհուսալի վարկերի	Կոնյակածելի դասի վարկերի 75%-ի ոռոտակորում անհուսալի վարկերի	Ստանդարտ դասի վարկերի 30%-ի ոռոտակորում հավկող վարկերի
Բանկային համակարգի $Ն1^1$-ի մեծությունը	33.4 %	33.6 %	32.3 %
Բանկային համակարգի $Ն1^2$-ի մեծությունը	31.4 %	31.6 %	30.2 %


III. Իրացվելիության ռիսկ

Տարվա ընթացքում բարձր իրացվելի ակտիվները ավելացել են 16.4%-ով և կազմել 184.2 մլրդ դրամ: Բարձր իրացվելի ակտիվների աճի տեմպը փոքր-ինչ զիջել է ընդհանուր ակտիվների աճի տեմպին: Արդյունքում՝ ընդհանուր ակտիվներում դրանց տեսակարար կշիռը նվազել է 1.7 տոկոսային կետով՝ կազմելով 41.8%:




Գրաֆիկ 2.17
Բանկային համակարգի բարձր իրացվելի ակտիվների տեսակարար կշիռը ընդհանուր ակտիվներում

2005 թ. բարձր իրացվելի ակտիվների աճի տեմպը բարձր է եղել ցպահանջ պարտավորությունների աճի տեմպից և ցածր՝ ընդհանուր ակտիվների աճի տեմպից, ինչի արդյունքում համակարգի ընդհանուր իրացվելիության նորմատիվային ցուցանիշը փոքր-ինչ նվազել է, իսկ ընթացիկ իրացվելիության նորմատիվային ցուցանիշը՝ աճել: Ընդհանուր առմամբ, վերջին տարիներին բանկային համակարգի ընդհանուր և ընթացիկ իրացվելիության ցուցանիշների տատանումները շատ փոքր են եղել և գտնվել են պահանջվող նորմատիվային սահմանաչափերից բավականին բարձր մակարդակի վրա (պահանջվող նվազագույն սահմանաչափերը՝ համապատասխանաբար 20% և 80%):



Գրաֆիկ 2.18
Բանկային համակարգի ընդհանուր իրացվելիության և ընթացիկ իրացվելիության նորմատիվային ցուցանիշները


Այսպիսով, բարձր իրացվելի ակտիվները, ի տարբերություն ցպահանջ պարտավորությունների, այս տարի դրսևորել են առաջանցիկ աճի միտումներ, որը բանկերում ակնթարթային իրացվելիության հիմնախնդիրներ չի առաջացրել: Ըստ մարմանը մնացած ժամկետայնության խմբերի՝ բանկային համակարգի ակտիվների մեծությունները գերազանցել են պարտավորությունների մեծությունները, ինչից ելնելով էլ կանխատեսվում է, որ այլ հավասար պայմաններում, 2006 թվականին բանկային համակարգը զերծ կլինա իրացվելիության ռիսկով պայմանավորված այլընտրանքային վնասներից:



Գրաֆիկ 2.19
Բանկային համակարգի ակտիվների հարաբերությունը պարտավորություններին (ըստ մարմանը մնացած ժամկետայնությունների) [4]

[4] *31.12.2002թ. դրությամբ ցուցանիշների հաշվարկում 1 տարի և ավելի մարման ժամկետայնությամբ ակտիվները և պարտավորությունները ներառված են 181-365 օր մարման ժամկետայնության դասում:*

Բանկային համակարգի պարտավորությունների կառուցվածքում 2005 թվականին արձանագրվել է պարտավորությունների համակենտրոնացման աստիճանի նվազում: «Խոշոր» պարտավորությունների[5] տեսակարար կշիռն ընդհանուր պարտավորություններում փոքր-ինչ նվազել է և կազմել 27.1%:



Գրաֆիկ 2.20
Բանկային համակարգի խոշոր պարտավորությունների հարաբերությունը ընդհանուր պարտավորություններին

Գնահատվել է, որ ստորև դիտարկվող հնարավոր վատագույն ստրես - սցենարների դրսևորման դեպքում որոշ բանկեր կարող են փոքր-ինչ խախտել ընդհանուր իրացվելիության Ն2[1] և ընթացիկ իրացվելիության Ն2[2] նորմատիվները, սակայն համակարգը իրացվելիության հիմնախնդիրների առջև չի կանգնի, և սցենարների երևան գալը ՀՀ ֆինանսական կայունության վրա ազդեցություն չի թողնի:

Ստրես - սցենարներ

31.12.2005	Ֆիզիկական անձանց ժամկետային ավանդների 25 %-ի մարում[6]	Ցպահանջ միջոցների 25%-ի մարում	Ցպահանջ միջոցների 25%-ի և ֆիզիկական անձանց ժամկետային ավանդների 25 %-ի մարում
Բանկային համակարգի Ն1[1]-ի մեծությունը	41.8 % (որևէ բանկ չի խախտի)	37.9 % (որևէ բանկ չի խախտի)	35.0 % (կխախտեն 4 բանկեր)
Բանկային համակարգի Ն1[2]-ի մեծությունը	99.3 % (կխախտի 1 բանկ)	112.3 % (որևէ բանկ չի խախտի)	99.0 % (կխախտեն 3 բանկեր)


[5] Այն բոլոր միջոցների հանրագումարը, որոնք առանձին վերցրած գերազանցում են բանկի ընդհանուր պարտավորությունների 5% սահմանաչափը՝ առանց հաշվի առնելու փոխկապվածությունը:

[6] Ըստ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի հոդված 905-ի կետ 2-ի՝ «Ցանկացած տեսակի բանկային ավանդի պայմանագրով բանկը պարտավոր է ավանդի գումարը կամ դրա մի մասը վերադարձնել ավանդատուի առաջին իսկ պահանջով, բացառությամբ պայմանագրով նախատեսված՝ վերադարձման այլ պայմաններով իրավաբանական անձանց ներդրված ավանդների»:

IV. Շուկայական ռիսկեր

2005 թվականին արձանագրվել է ՀՀ դրամի նկատմամբ ԱՄՆ դոլարի 16.6%-ով միջին տարեկան արժևորում, իսկ ժամանակաշրջանի վերջի դրությամբ՝ 7.9%:

Արտարժութային ռիսկի տեսանկյունից, հաշվետու տարվա ընթացքում այլ արժույթների նկատմամբ ՀՀ դրամի փոխարժեքի տատանումների հետևանքով բանկային համակարգը արտարժույթի վերագնահատման արդյունքում ունեցել է 395 մլն դրամի չափով ընդհանուր վնաս, որը կազմել է բանկային համակարգի նորմատիվային կապիտալի 0.5%-ը (նախորդ տարի՝ 0.7%): Արտարժույթի վերագնահատման արդյունքում վնաս է ունեցել 13 բանկ, իսկ եկամուտ՝ 8 բանկ: 2005 թվականին արտարժույթի առք ու վաճառքի գործառնության արդյունքում բանկային համակարգն ապահովել է 6.0 մլրդ դրամ եկամուտ, որը 64%-ով գերազանցել է նախորդ տարվա ցուցանիշը:



Գրաֆիկ 2.21
Բանկային համակարգի՝ արտարժույթի առք ու վաճառքից և վերագնահատումից ստացված զուտ եկամուտները

31.12.2005 թ. դրությամբ բանկային համակարգի I խմբի համախառն արտարժութային դիրքը կազմել է 4.9%, իսկ երկրորդ խմբի զուտ դիրքը՝ 1.0% (պահանջվող առավելագույն նորմատիվային մակարդակները՝ համապատասխանաբար 15% և 5%):

Գնահատվել է, որ ներկայացված աղյուսակում դիտարկվող հնարավոր վատագույն ստրես-սցենարների դրսևորման դեպքում բանկերի կորուստները նշանակալի չեն և ՀՀ ֆինանսական կայունության վրա ազդեցություն չեն թողնի:


Բանկային համակարգում տոկոսադրույքի ռիսկը ներկայումս բավականին ցածր է: Վերջին տարիներին վարկերի և ավանդների շուկայա-

կան տոկոսադրույքները դրսևորել են նվազման կայուն վարքագիծ:

Ստրես - սցենարներ[7]

31.12.2005	ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի 10%-ով արժեզրկում (արժեզրկում)	Եվրոյի նկատմամբ ՀՀ դրամի 10%-ով արժեզրկում (արժեզրկում)	2006թ. հնարավոր առավելագույն վնասը՝ գնահատված VaR մոդելով
Բանկային համակարգի օգուտը/վնասը՝ արտարժույթի վերագնահատման արդյունքում	-70 մլն դրամ (+70 մլն դրամ)	90 մլն դրամ (-90 մլն դրամ)	-107 մլն դրամ

Բանկային համակարգի կողմից տեղաբաշխված ակտիվների միջին կշռված ժամկետայնությունը գերազանցել է ներգրավված պարտավորությունների միջին կշռված ժամկետայնությունը, որի արդյունքում ընդհանուր (միաժամանակ և՛ վարկերի, և՛ ավանդների) տոկոսադրույքների նվազումը համակարգին չի կարող վնասել: Միևնույն ժամանակ, քանի որ ակտիվների և պարտավորությունների միջին կշռված ժամկետայնության ճեղքվածքը նշանակալի չէ և կազմում է մոտ կես տարի, ապա շուկայական տոկոսադրույքների տատանումները բանկային համակարգին մեծ վնասներ չեն պատճառի:



Գրաֆիկ 2.22
Բանկային համակարգի ավանդների և վարկերի միջին տոկոսադրույքները

Գնահատվել է, որ ներկայացված աղյուսակում դիտարկվող հնարավոր վատագույն ստրես-սցենարների դրսևորման դեպքում բանկերի կորուստները համակարգի կապիտալի նկատմամբ նշանակալի չեն և ՀՀ ֆինանսական կայունության վրա ազդեցություն չեն թողնի:

Ստրես - սցենարներ

31.12.2005	Հնարավոր առավելագույն վնասը՝ 2 տոկոսանոց կանխատեսման միջակայքի սահմաններում տատանվող տոկոսադրույքների դեպքում (տոկոսային ռիսկի արժեքավորում)	Հնարավոր առավելագույն վնասը՝ 2 տոկոսանոց կանխատեսման միջակայքի սահմաններում տատանվող տոկոսադրույքների և ակտիվների ու պարտավորությունների միջև ժամկետայնության ճեղքվածքի դեպքում (GAP մեթոդ)[8]
Բանկային համակարգի օգուտը /վնասը	1.4 մլրդ դրամ կամ բանկային համակարգի կապիտալի 1.5%-ը (-1.4 մլրդ դրամ կամ բանկային համակարգի կապիտալի 1.5%-ը)	42 մլն դրամ (-42 մլն դրամ)

Բանկային համակարգում գնային ռիսկը ներկայումս բավականին ցածր է, և գնային ռիսկով պայմանավորված վնասները գրեթե բացակայում են:

Այնուամենայնիվ, ստորև ներկայացված աղյուսակում դիտարկվում են հնարավոր վատագույն ստրես-սցենարի դրսևորման դեպքում բանկերի կորուստները, որոնք թեպետ զգալի են, սակայն ՀՀ ֆինանսական կայունության վրա էական ազդեցություն չեն թողնի:

Ստրես - սցենար

31.12.2005	Անշարժ գույքի 50% արժեզրկում
Բանկային համակարգի վնասը՝ պայմանավորված բանկի սեփականության տակ գտնվող անշարժ գույքի վերագնահատման արդյունքով *(գնային ռիսկ)*	12.5 մլրդ դրամ (կամ բանկային համակարգի կապիտալի 13%-ը)
Բանկային համակարգի վնասը՝ պայմանավորված ստրես-սցենարի դրսևորման դեպքում խոցելի վարկային պորտֆելի[9] 30%-ի չվերադարձմամբ (հաշվի առնելով այդ վարկերի դիմաց գրավադրված գույքի իրացումը) *(վարկային ռիսկ)*	3.5 մլրդ դրամ (կամ բանկային համակարգի կապիտալի 3.7%-ը)
Բանկային համակարգի վնասը՝ պայմանավորված ստրես-սցենարի դրսևորման դեպքում խոցելի վարկային պորտֆելի 50%-ով չվերադարձմամբ՝ հաշվի առնելով այդ վարկերի դիմաց գրավադրված գույքի իրացումը *(վարկային ռիսկ)*	5.8 մլրդ դրամ (կամ բանկային համակարգի կապիտալի 6.5%-ը)

[7] Դիտարկվող ստրես-սցենարներով և VaR մոդելով (վերջինս չի համարվում ստրես - սցենար, քանի որ VaR-ի հաշվարկում հաշվի են առնվում արտարժույթների փոխարժեքների պատմական շարքերը) գնահատված կորուստների հաշվարկում կատարվում է ենթադրություն, որ տարվա ընթացքում բանկային համակարգի արտարժութային դիրքը փոփոխության չի ենթարկվի:

[8] Սույն մեթոդիկայի հաշվարկում կատարվում է ենթադրություն, ըստ որի՝ դիտարկվող ժամանակահատվածում (եռամսյա) ակտիվների և պարտավորությունների կառուցվածքը և ծավալները մնում են անփոփոխ, այսինքն՝ մարված ակտիվները և պարտավորությունները կրկին տեղաբաշխվում և ներգրավվում են, բայց արդեն նոր գործող տոկոսադրույքով:

[9] Խոցելի վարկային պորտֆելը բանկի այն վարկերի մնացորդների հանրագումարն է, որոնց մնացորդային մեծությունները գերազանցում են դրանց դիմաց գրավադրված անշարժ գույքի 50% արժեզրկված արժեքները:

Վարկային կազմակերպությունների զարգացման միտումները

2005 թվականի ընթացքում վարկային կազմակերպությունների թիվն ավելացել է մեկով. վարկային կազմակերպության լիցենզիա է ստացել «Վաշինգթոն Քափիթալ» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՓԲԸ-ն: Տարեվերջին ՀՀ-ում գործել են տասը վարկային կազմակերպություններ (երկու մասնաճյուղերով), որոնցից երկուսը լիզինգային կազմակերպություններ են, մեկը՝ վարկային միություն և յոթը՝ ունիվերսալ վարկային կազմակերպություններ:

2005 թվականին արձանագրվել է վարկային կազմակերպությունների ընդհանուր կապիտալի, պարտավորությունների և ակտիվների աճ:

Կապիտալի աճը հիմնականում ապահովվել է չորս վարկային կազմակերպությունների կողմից կանոնադրական հիմնադրամի 1.1 մլրդ դրամով համալրման հաշվին: Վարկային կազմակերպությունների ընթացիկ տարվա չբաշխված շահույթը կազմել է 80 մլն դրամ, շահութաբերությունն ըստ ակտիվների՝ 1.0%, իսկ ըստ կապիտալի՝ 1.8%:

Վարկային կազմակերպությունների ակտիվները, պարտավորությունները և կապիտալը 2004-2005 թթ.
(հազար դրամ)

	31.12.2004	31.12.2005	2005 թ. տոկոսային աճ
Ակտիվներ	5646115	7872259	39.4%
Պարտավորություններ	2381020	3481501	46.2%
Կապիտալ	3265094	4390758	34.5%

Պարտավորությունների աճը հիմնականում տեղի է ունեցել այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պարտավորությունների՝ 460 մլն դրամով և իրավաբանական անձանց փոխառությունների՝ 576 մլն դրամով աճի հաշվին: Իրավաբանական անձանցից և ֆիզիկական անձ մասնակիցներից փոխառությունները տարեվերջին կազմել են 1.7 մլրդ դրամ, որի 69.3%-ը բաժին է ընկել իրավաբանական անձանց, իսկ 30.7%-ը՝ ֆիզիկական անձ մասնակիցներին: Բանկերից և այլ ֆինանսական կազմակերպություններից ձեռք բերած միջոցների մեծությունը տարեվերջին կազմել է 1.2 մլրդ դրամ կամ ընդհանուր պարտավորությունների 33.9%-ը:

Վարկային կազմակերպությունների ակտիվների կազմում էապես ավելացել է վարկային ներդրումների (ներառյալ լիզինգը) ծավալը՝ 89.9%-ով կամ 2.9 մլրդ դրամով և կազմել 6.2 մլրդ դրամ: Վարկային ներդրումների կտրուկ աճը հանգեցրել է ընդհանուր ակտիվների կազմում դրանց տեսակարար կշռի 20.7 տոկոսային կետով աճի: Տարեվերջին վարկային ներդրումների տեսակարար կշիռը ընդհանուր ակտիվներում կազմել է 78.4%-ը: Վարկային կազմակերպությունների վարկերում զգալի տեսակարար կշիռը բաժին է ընկել սպառողական վարկերին և արդյունաբերության ճյուղին տրամադրված վարկերին:

Ռիսկայնության տեսանկյունից հատկանշական է, որ հաշվետու տարում ստանդարտ վարկերի և դեբիտորական պարտքերի տեսակարար կշիռը ընդհանուրում ավելացել է 1.3 տոկոսային կետով և կազմել 90%: Չաշխատող ակտիվների 58%-ը բաժին է ընկել սպառողական վարկերին:

Ապահովագրական ընկերությունների զարգացման միտումները

2005 թվականին ապահովագրական գործունեության լիցենզիա է ստացել 2 ապահովագրական ընկերություն՝ «Գոբա» ՍՊԸ-ն և «Ինօրինէք» ՍՊԸ-ն: Տարեվերջին ՀՀ տարածքում լիցենզավորված ապահովագրական ընկերությունների թիվը կազմել է 23:

2005 թվականին արձանագրվել է ֆինանսական հատվածի այս մասնակիցների ընդհանուր կապիտալի, պարտավորությունների և ակտիվների աճ:

Կապիտալի աճը հիմնականում պայմանավորվել է կանոնադրական հիմնադրամի 1.8 մլրդ դրամ աճով: Տարվա ընթացքում վնասով աշխատած ապահովագրական ընկերությունների ընդհանուր վնասը կազմել է 169.1 մլն դրամ, իսկ շահույթով աշխատած ապահովագրական ընկերությունների ընդհանուր շահույթը՝ 468.1 մլն դրամ:

Ապահովագրական ընկերությունների ակտիվները, պարտավորությունները և կապիտալը *(հազար դրամ)*

	31.12.2004	31.12.2005	2005 թ. տոկոսային աճ
Ակտիվներ	6357112	9891075	55.6%
Պարտավորություններ	3561319	5462748	53.4%
Կապիտալ	2795793	4428328	58.4%

Պարտավորությունների աճը հիմնականում ապահովել է «Վնասների պահուստներ և այլ տեխնիկական պահուստներ» հաշվի 1.2 մլրդ

դրամ աճը: Ապահովագրական ընկերությունների ընդհանուր պարտավորություններում կարճաժամկետ պարտավորությունների տեսակարար կշիռը կազմել է 99.6%, երկարաժամկետ պարտավորություններինը՝ 0.4%:

Ապահովագրական ընկերությունների գործող պայմանագրերով ապահովագրական գումարների մեծությունը տարեվերջին կազմել է 1.73 տրլն դրամ, որից 1.69 տրլն դրամը վերաապահովագրության փոխանցած գումարների մեծությունն է, ինչը փաստում է, որ ռիսկերի 97%-ը վերաապահովագրվել է: Վնասաբերությունը, որպես ռիսկի բնութագրման ցուցանիշ, իրենից ներկայացնում է ապահովագրողների կողմից իրականացված հատուցումների և նույն ժամանակաշրջանում հավաքագրված ապահովագրական գումարների հարաբերակցությունը, որը 2005 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 11.3%:

ՀՀ-ում գործող արտարժույթի փոխանակման կետերը, արժութային դիլերները, արժեթղթերի շուկայի մասնակիցները և գրավատները

Տարեսկզբին ՀՀ տարածքում արտարժույթի առք ու վաճառքի լիցենզիա են ունեցել 343 փոխանակման կետեր (ներառյալ մասնաճյուղերը), իսկ տարեվերջին՝ 375: Տարվա ընթացքում թվով 103 արտարժույթի փոխանակման կետերի լիցենզիաները ուժը կորցրած են ճանաչվել, որից 71-ինը՝ արժութային օրենսդրության խախտումների համար: Արտարժույթի առք ու վաճառքի լիցենզիա է տրվել թվով 135 արտարժույթի փոխանակման կետերի: 2004 թվականի համեմատությամբ հաշվետու տարվա ընթացքում արտարժույթի փոխանակման կետերում արձանագրվել է արտարժույթի առք ու վաճառքի ընդհանուր ծավալի աճ:

Արտարժույթի փոխանակման կետերի առք ու վաճառքի ծավալները

	31.12.2004	31.12.2005	2005թ. տոկոսային աճ
ԱՄՆ դոլարի առք (մլն ԱՄՆ դոլար)	173.9	255.6	47%
ԱՄՆ դոլարի վաճառք (մլն ԱՄՆ դոլար)	173.9	260.9	50%
Եվրոյի առք (մլն եվրո)	9.9	19.4	97%
Եվրոյի վաճառք (մլն եվրո)	8.7	19.0	119%

31.12.05 թ. դրությամբ ՀՀ տարածքում արտարժութային դիլերի գործունեության լիցենզիա է տրամադրված եղել 6 իրավաբանական անձանց, որոնցից երկուսը ժամանակավոր դադարեցրել են գործունեությունը: Հաշվետու տարում շուկա մուտք չեն գործել նոր արտարժութային դիլերներ: Արտարժութային դիլերների՝ ԱՄՆ դոլարի ընդհանուր առքի ծավալը տարվա ընթացքում կազմել է 15.9 մլն ԱՄՆ դոլար, վաճառքինը՝ 14.9 մլն ԱՄՆ դոլար, ընդ որում՝ և՛ առքի, և՛ վաճառքի ծավալները ավելի քան եռակի գերազանցել են նախորդ տարվա նշված գործարքների ծավալները: 2005 թվականի ընթացքում արտարժութային դիլերները ՀՀ արժեթղթերի շուկայում բրոքերային գործունեության շրջանակներում կնքել են 939.6 մլն դրամ ծավալի 729 գործարք, դիլերային գործունեության շրջանակներում՝ 8.8 մլրդ դրամ ծավալի 185 գործարք, ինչպես նաև 20.7 մլրդ դրամ ծավալի 264 ռեպո գործարք:

31.12.05 թ. դրությամբ ՀՀ արժեթղթերի շուկայում մասնագիտական գործունեություն են իրականացրել 18 ընկերություններ, որոնցից 4-ը վերոնշյալ արտարժութային դիլերներն են: 2005 թվականի ընթացքում ՀՀ արժեթղթերի շուկայում մասնագիտական գործունեություն իրականացնող 18 մասնագիտացված անձինք (ներառյալ արժութային դիլերները) բրոքերային գործունեության շրջանակներում կնքել են 3.0 մլրդ դրամ ծավալի 2696 գործարք, դիլերային գործունեության շրջանակներում՝ 35.4 մլրդ դրամ ծավալի 530 գործարք, ինչպես նաև 63.9 մլրդ դրամ ծավալի 704 ռեպո գործարք:

ՀՀ տարածքում 2005 թվականի վերջի դրությամբ գործել են 61 գրավատներ, ընդ որում՝ տարվա ընթացքում գրավատան գործունեության լիցենզիա են ստացել 23 ընկերություններ և անհատ ձեռնարկատերեր: Գրավատների կանխիկ դրամական միջոցների, բանկային հաշիվների և տրամադրված վարկերի հանրագումարը 31.12.05 թ. դրությամբ կազմել է 2.0 մլրդ դրամ (գրավատների կողմից տրամադրված վարկերի ընդհանուր մեծությունը կազմել է 1.1 մլրդ դրամ):

2.4. ՀՀ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

Վճարահաշվարկային հարաբերությունների զարգացումը

2005 թ. ընթացքում ՀՀ կենտրոնական բանկը ապահովել է 2005 թ. դրամավարկային ծրագրով վճարահաշվարկային բնագավառի համար նախանշված նպատակները: Մասնավորապես. համաձայն «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին»[1] ՀՀ օրենքի՝ մշակվել են ՀՀ վճարահաշվարկային բնագավառը, ինչպես նաև վճարային ծառայություններ մատուցող կազմակերպությունների գործունեությունը կարգավորող իրավական փաստաթղթեր, այդ թվում՝

«Դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունների լիցենզավորումը, մասնաճյուղերի և ներկայացուցչությունների հաշվառումը, գործունեության կարգավորումը, ղեկավարների որակավորումը» կանոնակարգ 16-ը:

«Վճարային գործիքների և վճարահաշվարկային փաստաթղթերի պրոցեսինգ և քլիրինգ իրականացնող կազմակերպությունների լիցենզավորումը, մասնաճյուղերի և ներկայացուցչությունների հաշվառումը, ղեկավարների որակավորումը» կանոնակարգ 17-ը:

«Հայաստանյան վճարահաշվարկային համակարգերի ստեղծման և գործունեության իրականացման համար թույլտվության տրամադրումը» կանոնակարգ 18-ը:

«Արտասահմանյան վճարահաշվարկային համակարգերում մասնակցելու թույլտվության տրամադրումը» կանոնակարգ 19-ը:

«Վճարահաշվարկային կազմակերպությունների հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» կանոնակարգ 22-ը:

«Հայաստանի Հանրապետության տարածքում չեկերի թողարկման, սպասարկման և շրջանառության մասին» կարգը:

«Հայաստանի Հանրապետության տարածքում վճարային գործիքների սպասարկման և /կամ/ իրացման /տարածման/ տեղեկացման վերաբերյալ» կարգը:

«Վճարահաշվարկային համակարգ վճարահաշվարկային փաստաթղթերի մուտքագրման և անվերադարձելիության պահը» կարգը:

«Դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունների կողմից վճարահաշվարկային ծառայությունների հաշվառման» կարգը:

Մշակվել է նաև վճարահաշվարկային կազմակերպությունների ղեկավարների որակավորման գրավոր և բանավոր քննությունների հարցաշարը:

Նշված իրավական ակտերի միջոցով կարգավորվել է ՀՀ տարածքում վճարահաշվարկային կազմակերպությունների լիցենզավորման, ԿԲ կողմից վճարահաշվարկային ծառայություն մատուցող կազմակերպություններին վճարահաշվարկային համակարգերին անդամակցելու թույլտվություն տրամադրելու գործընթացը: Ֆինանսական հոսքերի զգալի մասը կատարվում է վճարահաշվարկային համակարգերի միջոցով, և Կենտրոնական բանկի նպատակն է ապահովել այդ համակարգերի անվտանգությունը, արդյունավետ և անխոչընդոտ գործունեությունը, որը նպաստում է տնտեսության ֆինանսական կայունության ամրապնդմանը: Ուստի, ՀՀ կենտրոնական բանկը, իր իրավասությունների շրջանակներում, հավաքագրելով տեղեկատվություն վճարահաշվարկային համակարգի գործունեության մասին և իրականացնելով դրանց վերահսկողությունը, կանխում է այն համակարգերի գործունեությունը, որոնք կարող են վտանգել ՀՀ ֆինանսական կայունությանը: Այդ նպատակով իրավական ակտերով սահմանված են չափանիշներ, որոնք հնարավորություն են տալիս տարանջատել համակարգային նշանակություն ունեցող, ինչպես նաև տնտեսության համար կարևոր ՀՀ վճարահաշվարկային համակարգերը այլ համակարգերից: Չափանիշները հնարավորություն են տալիս տարանջատել նաև հանրահայտ և ռիսկեր չպարունակող արտասահմանյան համակարգերը այլ արտասահմանյան համակարգերից:

ՀՀ կենտրոնական բանկի կողմից վճարահաշվարկային կազմակերպությունների լիցենզավորումը և դրանց վերահսկելիությունը նվազեցրել են փոխանցված դրամական միջոցները կորցնելու հետ կապված ռիսկը, որն առաջանում էր ՀՀ կենտրոնական բանկի կողմից չլիցենզավորված կազմակերպությունների միջոցով դրամական միջոցների փոխանցում նախաձեռնելիս: Դրամական փոխանցում իրականացնող վճարա-

[1] *Ուժի մեջ է մտել 2005 թ. հունիսի 28-ից:*

հաշվարկային կազմակերպությունների համար սահմանվել են նորմատիվային պահանջներ՝ դրամական միջոցներ կամ արժեթղթեր դեպոնացնելու կամ անվերադարձելի բանկային երաշխիք ներկայացնելու տեսքով: Կազմակերպության դեպոնացված միջոցները կարող են օգտագործվել Կենտրոնական բանկի կողմից՝ բացառապես դրամական փոխանցումների գծով չկատարված պարտավորությունների մարման նպատակով:

ՀՀ կենտրոնական բանկի վճարային համակարգերում «գործառնական ռիսկը» նվազեցնելու հետ կապված, պարբերաբար կատարվել է Կենտրոնական բանկի վճարային համակարգերի պահուստային տարբերակների տեստավորում: Արտակարգ իրավիճակների առաջացման դեպքում վճարային համակարգերի պահուստային տարբերակին սահուն անցումը կազմակերպելու նպատակով պարբերաբար իրականացվել է նաև համակարգերի պահուստային տարբերակների փորձնական շահագործում, որին մասնակցել են նաև մի շարք առևտրային բանկեր, ինչպես նաև Գանձապետարանը: «ԱրՔա» միասնական վճարային համակարգի հուսալիության բարձրացման և անխափան գործունեությունը արտակարգ իրավիճակներում ապահովելու նպատակով ՀՀ կենտրոնական բանկի, համակարգի անդամ բանկերի և «ԱրՔա» պրոցեսինգային կենտրոնի համատեղ ջանքերով կատարվել են համակարգի պահուստային տարբերակի ստեղծման աշխատանքներ: CBANet միջբանկային համակարգչային ցանցի միջոցով պլաստիկ քարտերի սպասարկման սարքավորումների միացումը «ԱրՔա» պրոցեսինգային կենտրոնին նույնպես նպաստել է համակարգի հուսալիության բարձրացմանը:

Վերը նշված օրենքի համաձայն՝ 2005թ. ընթացքում «Հայփոստ» ՓԲԸ-ն լիցենզավորվել և ստացել է «Դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպության լիցենզիա», որը թույլ է տալիս, առանց բանկային հաշվի բացման, հաճախորդների համար կատարել դրամական փոխանցումներ: Իսկ «Արմենիան Քարդ» ՓԲԸ-ն, որպես քարտային գործառնությունների իրականացման պրոցեսինգային կենտրոն, լիցենզավորվել և ստացել է «Վճարային գործիքների և վճարահաշվարկային փաստաթղթերի պրոցեսինգ և քլիրինգ իրականացնող կազմակերպության» լիցենզիա: Օրենքի համաձայն՝ վճարահաշվարկային ծառայություն մատուցող կազմակերպությունները միջազգային վճարային համակարգերին անդամակցելու նպատակով դիմել և ՀՀ կենտրոնական բանկի կողմից ստացել են այդ համակարգերին անդամակցելու և շահագործելու համապատասխան թույլտվություններ:

ՀՀ կենտրոնական բանկի կողմից սեփական արժեթղթերի թողարկման և դրանց շրջանառության ապահովման հետ կապված՝ մշակվել է համապատասխան իրավական դաշտ, և կատարվել են փոփոխություններ՝ Պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման համակարգում:

Կարևորելով ՀՀ տարածքում բորսայական արտարժութային գործառնությունների իրականացման թափանցիկությունը, մատչելիությունը և այս գործառնությունների զարգացումը, 2005թ. ընթացքում ՀՀ կենտրոնական բանկի նախաձեռնությամբ և Հայաստանի ֆոնդային բորսայի և առևտրային բանկերի մասնակցությամբ նախագծվել և ներդրվել է Հայաստանի ֆոնդային բորսայում արտարժույթի առք ու վաճառքի իրականացման ընթացակարգը: Վերջինիս հետ կապված՝ մշակվել է նաև համապատասխան իրավական դաշտը:

Նպատակ ունենալով ապահովել արտարժույթի փոխանակման կետերի կողմից իրականացվող գործառնությունների թափանցիկությունը և դրանց նկատմամբ Կենտրոնական բանկի ակտիվ վերահսկողությունը՝ հաշվետու ժամանակահատվածում մշակվել է համապատասխան տեխնոլոգիական և տեխնիկագրային համալիր՝ արտարժույթի փոխանակման կետերում տեղադրելու նպատակով:

2005թ. ընթացքում նախագծվել և ընդունվել են ՀՀ կենտրոնական բանկի հիբրիդ վճարային համակարգի կառուցման սկզբունքները, որը իրենից ներկայացնում է վճարային նոր համակարգի կոնցեպտուալ կառուցվածքը և ընդգրկում է ժամանակակից տեխնոլոգիական առաջընթացի տարրեր:

Բացի այդ, կատարվել են նաև ՀՀ կենտրոնական բանկի ներքին համակարգերի զարգացման աշխատանքներ, այդ թվում՝ մշակվել և փորձնական շահագործման է հանձնվել «Կեղծ դրամանիշերի տեղեկատվական համակարգը», որի միջոցով իրականացվում է կեղծ թղթադրամների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումը և հաշվառումը:

ՀՀ կենտրոնական բանկը, կարևորելով ֆինանսական բնագավառում ռիսկերի բացահայտման, կառավարման և վերահսկման աշխատանքները, 2005թ. ընթացքում մշակել է «Վճարահաշվարկային համակարգերի հսկողության գծով


իրականացվող աշխատանքների ժամանակացույցը», որով նախատեսվում է 2006թ. շարունակել վճարային համակարգերի հսկողության հետ կապված փաստաթղթերի մշակման և դրանց կիրառման աշխատանքները:

ՀՀ կենտրոնական բանկի ռազմավարական նպատակներից է ՀՀ տարածքում անկանխիկ վճարումների խթանումը և զարգացումը: Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ տարածքում անկանխիկ վճարումների ծավալը կազմել է 4872 մլրդ ՀՀ դրամ (քանակը՝ 2011138), այդ թվում՝ ՀՀ կենտրոնական բանկի վճարային համակարգերով իրականացված վճարումների ծավալը կազմել է 2997 մլրդ ՀՀ դրամ, իսկ քանակը՝ 858478:

2004 թ. համեմատությամբ անկանխիկ վճարումների ծավալն ավելացել է 1.38 անգամ (1356 մլրդ ՀՀ դրամով), իսկ քանակը՝ 1.25 անգամ (410664-ով): ՀՀ կենտրոնական բանկի վճարային համակարգերով իրականացված վճարումները 2004 թ. համեմատությամբ ավելացել են՝ ծավալը 1.55 անգամ (1074 մլրդ ՀՀ դրամով), իսկ քանակը՝ 1.3 անգամ, որը կազմել է 202106:

ՀՀ կենտրոնական բանկի վճարային համակարգերով իրականացված դրամական փոխանցումների միջին օրական ծավալը կազմել է մոտ 11.7 մլրդ ՀՀ դրամ, իսկ քանակը՝ 3353: Դրամական փոխանցումների միջին օրական ծավալը, 2004թ. համեմատ, ավելացել է 4194 մլն ՀՀ դրամով (քանակը՝ 789-ով):

2005 թ. ընթացքում ՀՀ կենտրոնական բանկի միջոցով իրականացված վճարումներում շարունակել են մեծ տեսակարար կշիռ կազմել Գանձապետարանի նախաձեռնած, ինչպես նաև վերջինիս ուղղված փոխանցումները, որոնք կազմել են ընդհանուր վճարումների ծավալի 46.65%-ը և քանակի 46.13%-ը: ՀՀ կենտրոնական բանկի միջոցով Գանձապետարան ուղղված, ինչպես նաև վերջինիս նախաձեռնած փոխանցումների ընդհանուր ծավալը, նախորդ տարվա համեմատությամբ, ավելացել է 72.8%-ով (589 մլրդ ՀՀ դրամով), իսկ քանակը՝ 28.2%-ով (87131 -ով):



Գրաֆիկ 2.23
ՀՀ ԿԲ միջոցով իրականացված վճարումների քանակը և ծավալը

2005 թվականին ՀՀ տարածքում պլաստիկ քարտերով իրականացվել է 90136 մլն ՀՀ դրամի 2184492 գործառնություն, այդ թվում՝ քարտերով անկանխիկ վճարումների ծավալը կազմել է մոտ 6866 մլն ՀՀ դրամ: Քարտային գործառնությունների ծավալը 2004թ. համեմատ նվազել է 0.9 անգամ (8635 մլն ՀՀ դրամով), իսկ գործառնությունների քանակն ավելացել է 1.24 անգամ (421402 գործառնությունով): Տարեվերջի դրությամբ շրջանառության մեջ գտնվող ընդհանուր քարտերի քանակը կազմել է 137186 քարտ, որը 2004թ. համեմատությամբ ավելացել է 1.26 անգամ (28321 քարտով): Ընդլայնվել է ՀՀ տարածքում գործող բանկերի կողմից տրամադրվող ծառայությունների ցանկը. մասնավորապես՝ քաղաքացիներին հնարավորություն է ընձեռվել ինտերնետ միջավայրում քարտերով կոմունալ վճարումներից և ինտերնետ-առևտրից բացի, կատարել քարտից-քարտ վճարումներ:

Նպատակ ունենալով նվազեցնել ՀՀ տարածքում պլաստիկ քարտերով կանխիկացման գործառնությունների ժամանակ առաջացող ռիսկերը՝ 2005թ. ընթացքում ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանվել են ԱԳՄ-ների տեղադրման և շահագործման հետ կապված լրացուցիչ պահանջներ, ինչպես նաև սահմանափակվել է ԱԳՄ-ների միջոցով կանխիկ արտարժույթի տրամադրումը:


Էլեկտրոնային վճարումների համակարգ

2005թ. վերջի դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի էլեկտրոնային վճարումների համակարգի մասնակիցների ընդհանուր քանակը կազմել է 182, այդ թվում՝ ՀՀ կենտրոնական բանկը և նրա 3 տարածքային դրամարկղային կենտրոնները, ՀՀ գանձապետարանը՝ 44 բաժանմունքներով, 21 առևտրային բանկեր՝ 110 մասնաճյուղերով, «Արմենիան Քարդ» պրոցեսինգային կենտրոնը և Միջպետական բանկը (ք.Մոսկվա):

ՀՀ կենտրոնական բանկի վճարային համակարգերով վճարումների գերակշիռ մասը իրականացվել է էլեկտրոնային վճարումների համակարգի միջոցով: Համակարգի մասնակիցների կատարած էլեկտրոնային վճարումները միջին հաշվով կազմել են ընդհանուր վճարումների ծավալի 72.93%-ը և քանակի 96.3%-ը: Նախորդ տարվա համեմատությամբ էլեկտրոնային վճարումների ծավալն ավելացել է 34.6%-ով (558932 մլն ՀՀ դրամով) իսկ քանակը՝ 29.6%-ով

(188939-ով): Առևտրային բանկերի կողմից կատարված վճարումների ծավալային կառուցվածքում էլեկտրոնային վճարումները կազմել են մոտ 81.59%, իսկ քանակային կառուցվածքում՝ մոտ 99.30%:

Էլեկտրոնային վճարումների համակարգում իրականացված դրամական փոխանցումների միջին օրական քանակը 2004թ. համեմատ ավելացել է՝ կազմելով մոտ 3229, իսկ ծավալը՝ 2183 մլն ՀՀ դրամով՝ կազմելով 8540 մլն ՀՀ դրամ: Էլեկտրոնային վճարումների համակարգում մեկ էլեկտրոնային փոխանցման միջին ծավալը, նախորդ տարվա համեմատ, աճել է մոտ 93 հազ. ՀՀ դրամով և կազմել 2.6 մլն ՀՀ դրամ:



Գրաֆիկ 2.24
էլեկտրոնային վճարումների համակարգով իրականացված միջին օրական փոխանցումները 2001 – 2005թթ., ինչպես նաև 2004 – 2005 թթ. եռամսյակների ընթացքում

2005թ. ընթացքում էլեկտրոնային վճարումների համակարգում գրանցված մերժումները կազմել են նախաձեռնած վճարումների քանակի 0.06%-ը և ծավալի 0.5%-ը (553 փոխանցում՝ 12033 մլն ՀՀ դրամ ծավալով), ընդ որում՝ իրացվելիության չբավարարման պատճառով մերժված վճարումները կազմել են համակարգով իրականացված վճարումների քանակի 0.01%-ը և ծավալի 0.12%-ը (102 փոխանցում՝ 2713 մլն ՀՀ դրամ ծավալով):

Համախառն թղթային վճարումների համակարգ

2005թ. ընթացքում ՀՀ կենտրոնական բանկի միջոցով թղթային վճարումներ են նախաձեռնել ՀՀ կենտրոնական բանկը, ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերը, ՀՀ գանձապետարանը: Առևտրային բանկերի թղթային եղանակով վճարումները կազմել են նրանց վճարումների ծավալի 9.5%-ը (նախորդ տարվա համեմատ ավելացել են 2.9 տոկոսով) և քանակի 0.5%-ը (նախորդ տարվա համեմատ նվազել են 0.31 տոկոսով):

ՀՀ կենտրոնական բանկի միջոցով թղթային եղանակով իրականացված վճարումների միջին օրական քանակը կազմել է 111 փոխանցում՝ 2004թ. համեմատ ավելացել է 45-ով, իսկ ծավալն ավելացել է 1445 մլն ՀՀ դրամով՝ կազմելով 2275 մլն ՀՀ դրամ: Մեկ թղթային փոխանցման միջին ծավալը 2004թ. համեմատ ավելացել է մոտ 7.8 մլն ՀՀ դրամով և կազմել է 20.4 մլն ՀՀ դրամ: Թղթային եղանակով փոխանցումների աճը հիմնականում պայմանավորվել է ֆինանսական գործառնություններով: 2005թ. ընթացքում առևտրային բանկերի միջև թղթային եղանակով իրականացվել է 21527 մլն ՀՀ դրամ ծավալով 93 փոխանցում:

Պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման համակարգ

2005 թ. ընթացքում ներդրվել է Պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման համակարգի նոր տարբերակը, որը ապահովում է ՀՀ կենտրոնական բանկի սեփական արժեթղթերի թողարկումը և շրջանառությունը:

Տարեվերջի դրությամբ Պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման համակարգին անդամակցել են ՀՀ տարածքում գործող 6 գործակալ և 14 դիլեր բանկեր, մեկ ոչ բանկ դիլեր, ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը (թողարկողի կարգավիճակով), Գանձապետական պահառուն, ինչպես նաև ՀՀ կենտրոնական բանկը (կենտրոնական պահառուի կարգավիճակով):

Պետական արժեթղթերի առաջնային տեղաբաշխման և մարման նպատակով համակարգի կողմից ձևավորվել է 2011 հանձնարարական՝ 87823 մլն ՀՀ դրամ ծավալով (2004թ. համեմատ ավելացել է 4735 մլն ՀՀ դրամով): Այդ թվում՝ առաջնային տեղաբաշխման ժամանակ ձեռք բերված պարտատոմսերի դիմաց բանկերի կողմից կատարվել է 45702 մլն ՀՀ դրամի փոխանցում, իսկ արժեթղթերի մարման դիմաց Գանձապետարանի կողմից կատարվել է 42121 մլն ՀՀ դրամի փոխանցում:

Գանձապետական պահառու համակարգը արժեթղթերի դիմաց կատարել է 1054 մլն ՀՀ դրամի վճարում, այդ թվում՝ 631 մլն ՀՀ դրամ արժեթղթերի տեղաբաշխման և 423 մլն ՀՀ դրամ՝ արժեթղթերի մարման դիմաց:

2005 թ. ընթացքում Պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման համակարգի մասնակիցների կողմից ակտիվա-

ՀՀ կենտրոնական բանկի, ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերի և Գանձապետարանի իրականացրած վճարումները ՀՀ կենտրոնական բանկի վճարային համակարգերով

Ժամանակա-հատվածը	Համախառն				Պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման համակարգ		Ընդամենը	
	Էլեկտրոնային		Թղթային					
	Գումար *(մլն դրամ)*	Քանակ	Գումար *(մլն դրամ)*	Քանակ	Գումար *(մլն դրամ)*	Քանակ	Գումար *(մլն դրամ)*	Քանակ
2004								
I եռ.	318649	134340	82982	3639	15731	350	417362	138329
II եռ.	404239	152858	57732	4054	21003	378	482974	157290
III եռ.	422186	162106	20967	4186	24092	463	467245	166755
IV եռ.	482120	188496	50812	4998	22797	504	555729	193998
Ընդամենը	1627194	637800	212493	16877	83623	1695	1923310	656372
տեսակարար կշիռը վճարումներում (%)	84.59	97.17	11.05	2.57	4.35	0.26	100	100
2005								
I եռ.	429654	158131	150806	5188	20993	471	601453	163790
տեսակարար կշիռը վճարումներում (%)	71.44	96.54	25.07	3.17	3.49	0.29	100	100
II եռ.	515359	207423	123228	6062	74161	901	712748	214386
տեսակարար կշիռը վճարումներում (%)	72.31	96.75	17.29	2.83	10.40	0.42	100	100
III եռ.	524899	219123	153970	8315	60841	909	739710	228347
տեսակարար կշիռը վճարումներում (%)	70.96	95.96	20.81	3.64	8.23	0.40	100	100
IV եռ.	716214	242062	154294	8951	72601	942	943109	251955
տեսակարար կշիռը վճարումներում (%)	75.94	96.07	16.36	3.55	7.70	0.37	100	100
Ընդամենը	2186126	826739	582298	28516	228596	3223	2997020	858478
տեսակարար կշիռը վճարումներում (%)	72.94	96.30	19.43	3.32	7.63	0.38	100	100

ցել են համակարգի միջոցով երկրորդային շուկայում կատարված պետական արժեթղթերով գործառնությունները, որոնք կազմել են 341674 մլն ՀՀ դրամ՝ անվանական արժեքով (այդ թվում՝ առք ու վաճառք՝ 162079 մլն ՀՀ դրամ ծավալով, ազատ առաքում՝ 151287 մլն ՀՀ դրամ ծավալով, գրավադրում՝ 28308 մլն ՀՀ դրամ ծավալով): DVP սկզբունքով կատարված առք ու վաճառքի 1212 գործառնությունների դիմաց վճարվել է 140773 մլն ՀՀ դրամ:

Պետական արժեթղթերի երկրորդային շուկայում կատարված գործառնությունների արդյունքում, 2004թ. համեմատ, դեպո հաշիվների վրա գրանցված արժեթղթերի ծավալի շարժը ավելացել է 1.68 անգամ (31484 մլն ՀՀ դրամով) և կազմել է 77200 մլն ՀՀ դրամ՝ անվանական արժեքով, իսկ գործառնությունների քանակը՝ 1.3 անգամ և կազմել է 979:

Պլաստիկ քարտերի շուկա

2005թ. վերջի դրությամբ ՀՀ բանկային համակարգի հաճախորդներին պլաստիկ քարտերի տրամադրումը կամ դրանց սպասարկումը իրականացվել է ՀՀ տարածքում գործող 18 առևտրային բանկերի կողմից: Ընդ որում՝ 16 առևտրային բանկեր անդամակցում են «ԱրՔա» քարտերով վճարումների միասնական համակարգին: Հաշվետու տարվա ընթացքում «ԱրՔա» համակարգին անդամակցող բանկերի քանակը ավելացել է երեքով (Պրոմեթեյ բանկ, Կասկադ բանկ, ԲՏԱ ինվեստբանկ):

2005 թ. ընթացքում քարտերի սպասարկման նպատակով տեղադրվել են 45 նոր ավտոմատ գանձման մեքենաներ, և տարվա վերջի դրությամբ դրանց ընդհանուր քանակը կազմել է 116:

ՀՀ տարածքում գործող բանկերի կողմից տրամադրվող քարտերի տեսակները


Բանկի անվանումը	ArCa	MASTERCARD	VISA	Այլ քարտեր
Անելիք բանկ	+	+		
Արդշինինվեստբանկ	+	+		
Հայներարտբանկ	+	+		
Հայէկոնոմբանկ	+	+		
Զարգացման հայկական բանկ	+	+		
Կոնվերս բանկ	+		+	+
Էյչ-էս-բի-սի բանկ Հայաստան	+	+	+	+
Հայգյուղփոխբանկ	+		+	
Արցախ բանկ	+			
«ԻԹԲ» Միջազգային առևտրային բանկ	+			
Յունիբանկ	+		+	
Ինեկո բանկ	+	+	+	
Մելլաթ բանկ	+			
Պրոմեթեյ բանկ	+			
Կասկադ բանկ	+			
ԲՏԱ ինվեստբանկ	+			
Առէկսիմբանկ			+	
Հայխնայբանկ			+	

Այդ թվում՝ «ԱրՔա» պլաստիկ քարտերի սպասարկումը իրականացվել է 88 ավտոմատ գանձման սարքավորումների միջոցով: Առևտրային բանկերի կողմից տեղադրվել են նաև 352 POS-տերմինալներ և 20 իմպրինտերներ, որոնց ընդհանուր քանակը համապատասխանաբար կազմել է 981 POS-տերմինալ և 76 իմպրինտեր:

Տարեվերջի դրությամբ գործող «ԱրՔա» քարտերի քանակը նախորդ տարվա համեմատ ավելացել է 1.18 անգամ (8482 քարտով) և կազմել 55697: Միջազգային քարտային համակարգերի քարտերի քանակն ավելացել է 1.3 անգամ (19839 քարտով), այդ թվում՝ VISA միջազգային քարտային համակարգի քարտերն ավելացել են 1.3 անգամ (17079 քարտով) և կազմել 62839, իսկ MasterCard միջազգային քարտային համակարգի քարտերի քանակը՝ 1.96 անգամ (2898 քարտով)՝ կազմելով 5901:

Շրջանառության մեջ գտնվող «ԱրՔա» քարտերով իրականացվել է 1023304 գործառնություն՝ 27821 մլն ՀՀ դրամ ծավալով: «ԱրՔա» քարտերով կատարված գործառնությունների ծավալը 2004 թ. համեմատ աճել է մոտ 1.47 անգամ (8926 մլն ՀՀ դրամով), իսկ քանակը՝ 1.33 անգամ (258965-ով):

VISA միջազգային քարտային համակարգի քարտերով իրականացված գործառնությունների ծավալը կազմել է 39595 մլն ՀՀ դրամ (692100 գործառնություն), իսկ MasterCard միջազգային քարտային համակարգի քարտերով իրականացվել է 7689 մլն ՀՀ դրամ ծավալով 89937 գործառնություն: VISA համակարգի քարտերով իրականացված գործառնությունների ծավալն ավելացել է 1.29 անգամ (8951 մլն ՀՀ դրամով), իսկ MasterCard համակարգի քարտերով գործառնությունների ծավալը նվազել է 0.15 անգամ (1456 մլն ՀՀ դրամով):



Գրաֆիկ 2.25
«ԱրՔա» քարտերի զարգացման դինամիկան

Միջազգային այլ քարտերով իրականացվել է 379151 գործառնություն՝ 15030 մլն ՀՀ դրամ ծավալով, որը 2005թ. համեմատ նվազել է 25057 մլն ՀՀ դրամով:

Շրջանառության մեջ գտնվող մեկ «ԱրՔա» քարտով շարունակվել է ամսական իրականացվել միջինը մոտ 2 գործառնություն: Մեկ գործառ-

նության միջին ծավալը, 2004թ. համեմատ, գրեթե պահպանել է նույն մակարդակը՝ 27 հազար ՀՀ դրամ:

Տարեվերջի դրությամբ մեկ ավտոմատ գանձման մեքենան միջին հաշվով սպասարկել է 633 «ԱրՔա» քարտ:

Քարտեր սպասարկող սարքավորումների միջոցով «ԱրՔա» քարտերով կատարված գործարքներ

	Գումար (մլն դրամ)	Քանակ
Ավտոմատ գանձման սարքերով	19565.8	767941
այդ թվում՝ անկանխիկ	695	31956
POS տերմինալներով	8255.6	255355
այդ թվում՝ անկանխիկ	382.2	36626
Իմպրինտերներով	0.6	8
այդ թվում՝ անկանխիկ	0.6	8
Ընդամենը	27822	1023304
այդ թվում՝ անկանխիկ	1077.8	68590

Միջազգային փոխանցումների համակարգեր

ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերը հաճախորդների դրամական փոխանցումներն արագ իրականացնելու նպատակով անդամակցում են՝ WESTERN UNION, MONEYGRAM, ANELIK, UNISTREAM, EXPRESS և այլ համակարգերի: 2005թ. ընթացքում այս համակարգերի միջոցով Հայաստանի Հանրապետություն է փոխանցվել 244243 մլն ՀՀ դրամ (քանակը 971632), որը 7.5 անգամ գերազանցել է արտասահման կատարված փոխանցումների ծավալը: Հայաստանի Հանրապետություն փոխանցումների ծավալը 2004թ. համեմատությամբ ավելացել է 1.3 անգամ (54276 մլն ՀՀ դրամով): Այս համակարգերով Հայաստանի Հանրապետություն կատարված մեկ փոխանցման միջին ծավալը 2005թ. ընթացքում կազմել է 251 հազ. ՀՀ դրամ, որը 2004թ. համեմատ գրեթե պահպանել է նույն մակարդակը:


2005թ. երկրորդ կիսամյակի ընթացքում դրամական փոխանցում իրականացնող վճարահաշվարկային կազմակերպությունները Հայաստանի Հանրապետության իրենց հաճախորդներին կատարել են 918 մլն ՀՀ դրամի վճարում, իսկ արտասահման կատարվել է 38 մլն ՀՀ դրամի փոխանցում:

2005թ. ընթացքում SWIFT համակարգի միջոցով Հայաստանի Հանրապետություն կատարված փոխանցումները կազմել են՝ ծավալը՝ 2933 մլրդ ՀՀ դրամ, իսկ քանակը՝ 281881 փոխանցում: Մեկ փոխանցման միջին ծավալը կազմել է 10 մլն ՀՀ դրամ, որը նախորդ տարվա համեմատ ավելացել է 0.4 մլն ՀՀ դրամով:

Կանխիկ դրամաշրջանառություն

2005 թվականին տնտեսության դրամայնացման գործընթացը՝ դրամի նկատմամբ պահանջարկի կտրուկ աճը, իր ազդեցությունն է թողել ՀՀ կենտրոնական բանկից դուրս գտնվող կանխիկ դրամի աճի տեմպերի վրա: Տեղի է ունեցել նաև շրջանառությունում գտնվող կանխիկ դրամի ծավալի կտրուկ աճ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ կենտրոնական բանկից դուրս կանխիկ դրամը կազմել է 155275 մլն դրամ՝ նախորդ տարեվերջի համեմատությամբ ավելանալով 49741 մլն դրամով կամ 47.1%-ով: Նշենք, որ 2004 թ. ՀՀ կենտրոնական բանկից դուրս գտնվող կանխիկ դրամի ծավալն ավելացել էր 9.0%-ով, 2003 թ.՝ 5.2%-ով, 2002 թ.՝ 38.1%-ով, իսկ 2001 թ.՝ 7.8%-ով:

Շրջանառության մեջ գտնվող կանխիկ դրամի ծավալը ենթարկվել է սեզոնային տատանումների: Ինչպես նախորդ տարիներին, 2005 թ. հունվարին ևս տեղի է ունեցել կանխիկի ծավալի կտրուկ կրճատում. ՀՀ ԿԲ-ից դուրս կանխիկը նվազել է 13.5%-ով՝ ամսվա վերջին կազմելով 91268 մլն դրամ, որից հետո պահպանվել են կանխիկ զանգվածի համեմատաբար կայուն աճի տեմպերը (միջին հաշվով՝ ամսական 4.5%):



Գրաֆիկ 2.26
ՀՀ ԿԲ-ից դուրս կանխիկ դրամի շարժը 2001 - 2005 թթ. (մլն ՀՀ դրամ)

Աճի տեմպերն արագացել են հուլիս-օգոստոսին և նվազել սեպտեմբեր-նոյեմբերին: Դեկտեմբերին կանխիկ դրամի նկատմամբ պահանջարկի

սեզոնային աճի արդյունքում կանխիկն ավելացել է 11.6%-ով:

2005 թ. ՀՀ ԿԲ դրամական պահուստները բավարարել են տնտեսության մեջ կանխիկ դրամի նկատմամբ ձևավորված պահանջարկը:

Դրամավարկային քաղաքականության ծրագրային ցուցանիշներից զգալի շեղումների, արտակարգ իրավիճակների և այլ անկանխատեսելի հանգամանքների հետևանքով կանխիկ դրամի նկատմամբ առաջացած տնտեսության լրացուցիչ պահանջարկը բավարարելու նպատակով Կենտրոնական բանկը կազմավորում է անհրաժեշտ դրամական պահուստներ: Այսինքն, ԿԲ-ն հնարավորություն ունի տարբեր իրավիճակներում մեղմել իրացվելիության պահանջարկի կտրուկ ավելացման հնարավոր ռիսկերը:

Շրջանառությունում կանխիկ զանգվածի աճին զուգահեռ ավելացել է նաև դրա տեսակարար կշիռը փողի զանգվածում: Տարեվերջին բանկային համակարգից դուրս գտնվող կանխիկ դրամը կազմել է փողի զանգվածի 39.6%-ը՝ նախորդ տարվա 34.6%-ի փոխարեն:


Կանխիկի տեսակարար կշիռը փողի զանգվածում (%)

Երկիր	2003	2004	2005
Ղազախստան	63.5	57.4	61.4
Հայաստան	39.5	34.6	39.6
Վրաստան	41.6	40.7	38.5
Ուկրաինա	35.1	33.7	31.2
Ադրբեջան	40.1	31.8	29.7
Մոլդովա	32.2	31.6	28.9
Ռուսաստան	29.0	29.0	27.8
Բուլղարիա	23.4	22.7	21.4
Լիտվա	26.4	23.5	21.1
Լատվիա	26.6	22.5	19.7
Բելառուս	15.1	15.2	16.0

Ի տարբերություն փողի զանգվածի՝ դրամային զանգվածում կանխիկի տեսակարար կշիռը նվազել է 3.4 տոկոսային կետով՝ տարեվերջին կազմելով 64.3%: Դրամի արժևորման կայուն վարքագիծը, դրամայնացման գործընթացի զգալի աշխուժացումը արտահայտվել են փողի զանգվածի դրամային տարրի աճի անհամեմատ բարձր տեմպերով: Այս ցուցանիշը մի շարք զարգացող երկրների համանման ցուցանիշների հետ համեմատելիս ակնհայտ է, որ դրա մակարդակը դեռևս զիջում է վերջիններիս:

ՀՀ կենտրոնական բանկից դուրս կանխիկ դրամի ծավալի կտրուկ աճի պայմաններում ավելացել են նաև ԿԲ դրամարկղային շրջանառության ծավալները՝ նախորդ տարվա համեմատությամբ ավելանալով 114.8 մլրդ դրամով կամ 27%-ով: Ընդ որում, ՀՀ կենտրոնական բանկի դրամարկղի կանխիկ դրամի մուտքերն ավելացել են 18%-ով և կազմել 243.7 մլրդ դրամ, իսկ ելքերը՝ 36%-ով և կազմել 293.4 մլրդ դրամ:

ՀՀ կենտրոնական բանկը հանրապետության մարզերում և ԼՂՀ-ում գործող բանկերի ու դրանց մասնաճյուղերի դրամարկղային սպասարկումն իրականացրել է Կենտրոնական բանկի Գորիսի, Վանաձորի և Հրազդանի (Ծաղկաձորի) տարածքային դրամարկղային կենտրոնների (ՏԴԿ) միջոցով:




Գրաֆիկ 2.27
ՀՀ կենտրոնական բանկի դրամարկղային շրջանառությունը

2005 թ. տարածքային դրամարկղային կենտրոններն ապահովել են ՀՀ կենտրոնական բանկի ընդհանուր դրամարկղային շրջանառության 18.9%-ը՝ նախորդ տարվա 17.9%-ի փոխարեն: Ընդ որում, տարածքային դրամարկղային կենտրոնների միջոցով առավելապես իրականացվել են կանխիկի տրամադրման գործառնություններ ՀՀ մարզերում և ԼՂՀ-ում գործող բանկերին և դրանց մասնաճյուղերին: ՏԴԿ-ների դրամարկղային ելքերի ծավալը շուրջ 12 անգամ գերազանցել է դրամարկղային մուտքերի ծավալը:

Նմանատիպ առանձնահատկություն է ունեցել նաև առևտրային բանկերի դրամարկղային շրջանառությունը:

2005 թ. ՀՀ մարզերում և ԼՂՀ-ում գործող առևտրային բանկերի և դրանց մասնաճյուղերի դրամարկղային ելքերը գերազանցել են մուտքերը: Ինչպես և նախորդ տարիներին, 2005թ. ևս Երևանում շրջանառության մեջ առաջացել է կանխիկի ավելցուկ, որի արդյունքում առևտրային բանկերի դրամարկղային մուտքերը գերազանցել են ելքերը:



1. Երևան, 2. Արարատ, 3. Արմավիր, 4. Կոտայք, 5. Վայոց ձոր, 6. Շիրակ, 7. Տավուշ, 8. Լոռի, 9. Արագածոտն, 10. Գեղարքունիք, 11. Սյունիք, 12. ԼՂՀ

Գրաֆիկ 2.28
Առևտրային բանկերի դրամարկղային ելքերի և մուտքերի հարաբերակցությունը հանրապետության մարզերում և ԼՂՀ-ում (%)

Որոշակի փոփոխությունների է ենթարկվել շրջանառության մեջ գտնվող կանխիկի տեսակային կազմը:


2005 թ. հուլիսի 1-ից ՀՀ կենտրոնական բանկի կողմից շրջանառությունից հետ են կանչվել 1993 թվականի նմուշի 500 դրամանոց թղթադրամները, իսկ օգոստոսի 1-ից՝ 1995 թվականի նմուշի 5000 դրամանոց թղթադրամները:

Շրջանառության մեջ կանխիկի ծավալի էական աճն իր ազդեցությունն է թողել նաև կանխիկի տեսակային կառուցվածքի վրա: Քանի որ այդ աճը հիմնականում ապահովվել է բարձր անվանական արժեքների հաշվին, ուստի ՀՀ կենտրոնական բանկից դուրս կանխիկի կառուցվածքում ավելացել է 10000, 20000 և 50000 դրամ անվանական արժեքներով թղթադրամների տեսակարար կշիռը՝ համապատասխանաբար 3.8, 6.0 և 0.1 տոկոսային կետով: Տարվա ընթացքում 10000 և 50000 դրամանոց թղթադրամների զանգվածը շրջանառության մեջ ավելացել է 1.7 անգամ, իսկ 20000 դրամանոց թղթադրամի զանգվածը գրեթե կրկնապատկվել է:

Նշված անվանական արժեքներով թղթադրամների՝ շրջանառության մեջ գտնվող ծավալի աճի պայմաններում ՀՀ կենտրոնական բանկը կարողացել է բավարարել դրանց նկատմամբ ձևավորված տնտեսության պահանջը, այսինքն՝ առևտրային բանկերի կողմից ներկայացված կանխիկ դրամի ստացման հայտերում նշված գումարները՝ ըստ յուրաքանչյուր անվանական արժեքի:


Մյուս բոլոր անվանական արժեքներով դրամանիշերի տեսակարար կշիռը նվազել է՝ մասնավորապես 1000 դրամանոց (3.2 տոկոսային կետով) և 5000 դրամանոց (4.4 տոկոսային կետով) թղթադրամներինը:

Նախորդ տարվա համեմատությամբ խիստ դանդաղել է շրջանառության մեջ 10, 25, 50, 100 և 200 դրամ անվանական արժեքներով հետ կանչված թղթադրամների՝ մետաղադրամներով փոխարինման գործընթացը: 2005 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ դրանց ընդհանուր զանգվածը շրջանառության մեջ կազմել է 538 մլն դրամ կամ ՀՀ ԿԲ-ից դուրս կանխիկ դրամի ընդհանուր ծավալի 0.3%-ը:



Գրաֆիկ 2.29
ՀՀ ԿԲ-ից դուրս կանխիկ դրամի տեսակային կառուցվածքը 2004-2005 թթ.

10-ից 500 դրամանոց մետաղադրամների տեսակարար կշիռը տարեվերջին կազմել է ՀՀ ԿԲ-ից դուրս կանխիկի ընդհանուր զանգվածի 2.6%-ը՝ տարվա ընթացքում նվազելով 0.4 տոկոսային կետով: Գրեթե 4 անգամ ավելացել է 500 դրամանոց մետաղադրամի ծավալը՝ փոխարինելով նույն անվանական արժեքով թղթադրամին: Արդյունքում, 500 դրամանոց թղթադրամի և մետաղադրամի ընդհանուր զանգվածը շրջանառության մեջ նվազել է 23%-ով և կազմել կանխիկի ընդհանուր զանգվածի 1.4%-ը:



Գրաֆիկ 2.30
Շրջանառության մեջ մետաղադրամների տեսակային կառուցվածքը 31.12.2005թ. դրությամբ

Բացի 10-ից 500 դրամանոց մետաղադրամների, որոնք ակտիվորեն շրջանառում են, ՀՀ ԿԲ-ից դուրս կանխիկի մեջ են նաև 10, 20, 50 լումա, 1, 3, 5 և 100 դրամ (Չարենց-100, Շախմատի 32-րդ օլիմպիադա) անվանական արժեքներով մետաղադրամները, ինչպես նաև 25000 դրամ անվանական արժեքով «Անահիտ» ոսկե մետաղադրամը: Տարեվերջին դրանց ընդհանուր զանգվածը շրջանառության մեջ կազմել է 550 մլն դրամ կամ ՀՀ ԿԲ-ից դուրս կանխիկի 0.35%-ը:

Շրջանառության մեջ գտնվող կանխիկ դրամի տեսակային կազմի և կառուցվածքի նշված փոփոխությունների արդյունքում «պայմանական միջին դրամանիշը»[2] աճել է՝ տարվա սկզբի 1068 դրամից հասնելով 1442 դրամի:

Հնամաշ դրամանիշերի փոխարինումը

2005 թվականին ՀՀ կենտրոնական բանկը շրջանառությունից հանել և փոխարինել է նորով շուրջ 38.6 մլրդ դրամի կամ 17.2 մլն հատ հնամաշ թղթադրամներ, որոնք կազմում են տարվա ընթացքում շրջանառության մեջ գտնվող թղթադրամների միջին զանգվածի 33%-ը կամ տարվա ընթացքում ՀՀ ԿԲ վերադարձրած թղթադրամների 16%-ը:

[2] Պայմանական միջին դրամանիշի հաշվարկի մեջ ներառվել են 10-ից 50000 դրամ անվանական արժեքներով ՀՀ դրամանիշերը:

Նախորդ տարվա համեմատությամբ՝ ՀՀ ԿԲ կողմից շրջանառությունից դուրս բերված հնամաշ դրամանիշերի ծավալը 2005 թվականին ավելացել է 70%-ով, ինչը պայմանավորված է հիմնականում 5000 և 20000 դրամ անվանական արժեքներով թղթադրամների՝ շրջանառության մեջ գտնվող զանգվածի թարմացմամբ: Թեև զգալիորեն ավելացել է նաև 10000 դրամանոց թղթադրամի փոխարինման ծավալը, այնուամենայնիվ դա դեռևս գտնվում է ցածր մակարդակի վրա: Նշենք, որ վերջինս շրջանառության մեջ է դրվել 26 ամիս առաջ:

Բացի վերոնշյալներից, մնացած բոլոր անվանական արժեքներով թղթադրամների փոխարինման ծավալները նվազել են: Նախորդ տարվա համեմատությամբ՝ զգալիորեն կրճատվել է շրջանառությունից հետ կանչված 10-ից 200 դրամանոց թղթադրամների փոխարինումը մետաղադրամներով: Տարվա ընթացքում շրջանառությունից դուրս են բերվել շուրջ 21 մլն դրամի 10-ից 200 դրամանոց թղթադրամներ՝ նախորդ տարվա 891 մլն դրամի փոխարեն:

Արդյունքում, շրջանառության մեջ առկա թղթադրամների միջին «տարիքը» ավելացել է երկու ամսով և կազմել 14 ամիս:

Հուշադրամների թողարկումը

2005 թ. ՀՀ կենտրոնական բանկը շարունակել է տարբեր հիշարժան իրադարձությունների առիթով թողարկված թանկարժեք մետաղներից պատրաստված հուշադրամների թողարկումը:

2005 թվականին ՀՀ կենտրոնական բանկի կողմից թողարկվել են հետևյալ հուշադրամները.


- Արշիլ Գորկու (1904-1948 թթ.) ծննդյան 100-ամյակին նվիրված՝ 10000 դրամ անվանական արժեքով «Արշիլ Գորկի» ոսկե հուշադրամ,
- Գանձասարի վանքին նվիրված՝ 100 դրամ անվանական արժեքով արծաթե հուշադրամ,
- Մարտիրոս Սարյանի (1880-1972 թթ.) ծննդյան 125-ամյակին նվիրված՝ 10000 դրամ անվանական արժեքով «Մարտիրոս Սարյան» ոսկե հուշադրամ,
- Անանիա Շիրակացու ծննդյան 1400-ամյակին նվիրված՝ 100 դրամ անվանական արժեքով «Անանիա Շիրակացի» արծաթե հուշադրամ,

- Հայաստանի Հանրապետության զինված ուժերին նվիրված՝ «Հայաստանի զինված ուժեր» 5000 դրամ անվանական արժեքով արծաթե և 50000 դրամ անվանական արժեքով ոսկե հուշադրամներ,
- Սահակ Ա Պարթևին նվիրված՝ 100 դրամ անվանական արժեքով «Սահակ Ա Պարթև» արծաթե հուշադրամ,
- Վռամշապուհ արքային նվիրված՝ 100 դրամ անվանական արժեքով «Վռամշապուհ արքա» արծաթե հուշադրամ:

Վանաձոր և Ստեփանակերտ քաղաքներում կազմակերպվել են շրջիկ ցուցահանդեսներ, որոնց նպատակն էր՝ հանրությանը ծանոթացնել Հայաստանի դրամաշրջանառության պատմությանը և հայկական դրամներին: ՀՀ կենտրոնական բանկը թողարկել է «Հայաստանի դրամական թողարկումները» գիրքը, որում ներկայացված են Հայաստանի դրամաշրջանառության պատմության հիմնական փուլերը, ինչպես նաև ՀՀ ԿԲ կողմից թողարկված բոլոր թղթադրամները, մետաղադրամները և հուշադրամները:

Դրամանենգության դեմ պայքար

Տարվա ընթացքում ՀՀ կենտրոնական բանկը հայտնաբերված կեղծ թղթադրամների յուրաքանչյուր դեպքի մասին տեղեկացրել է ՀՀ տարածքում գործող բանկերին և ՀՀ ոստիկանության համապատասխան մարմիններին:




Գրաֆիկ 2.31
2005 թ. ՀՀ բանկային համակարգում հայտնաբերված կեղծ դրամանիշերի տեսակային կառուցվածքը

2005 թվականին բանկային համակարգում հայտնաբերված կեղծ թղթադրամների թիվը, նախորդ տարվա համեմատությամբ, ավելացել է 8%-ով: Ընդ որում, ինչպես նախորդ տարի, քանակային առումով ամենամեծ տեսակարար կշիռն ունի 1000 դրամ անվանական արժեքով թղթադրամը (67%): Բացի կեղծ թղթադրամներից, տարվա ընթացքում բանկային համակարգում հայտնաբերվել են նաև 100 և 200 դրամ անվանական արժեքներով կեղծ մետաղադրամներ:

Վարկային ռեգիստր

2003 թվականի հունվարի 1-ից Կենտրոնական բանկում գործում է Վարկային ռեգիստրը՝ իրականացնելով վարկառուների վերաբերյալ տվյալների հավաքագրում, ամփոփում և տրամադրում առևտրային բանկերին, վարկային կազմակերպություններին և վարկառուներին: Վարկային ռեգիստրում հաշվառվում են 1.5 մլն դրամը գերազանցող և մինչև 1.5 մլն դրամ, սակայն սահմանված ժամկետում չմարված և դասակարգված վարկերը: 2005 թվականի վերջին ԿԲ վարկային ռեգիստրում հաշվառվող վարկային պատմությունների թիվը հասել է 111706-ի, որից 106780-ը՝ ֆիզիկական, իսկ 4926-ը իրավաբանական անձանց վերաբերյալ: 2005 թվականին վարկային պատմությունների թիվն ավելացել է 51448-ով:




Գրաֆիկ 2.32
Վարկային պատմությունների քանակը ըստ ամիսների (հատ)

2005 թ. վերջին Վարկային ռեգիստրում առկա էր տեղեկատվություն 43513 գործող և 134099

մարված վարկերի վերաբերյալ: Նախորդ տարվա համեմատությամբ՝ հաշվառվող վարկերի ընդհանուր թիվն աճել է 2 անգամ, ինչը վկայում է վարկային ակտիվության բարձրացման մասին: Հաշվառվող վարկերի քանակի մեծացմանը զուգընթաց աճել է նաև մուտքագրվող տեղեկատվության ծավալը՝ օրական միջինը 3500 գրառում՝ նախորդ տարվա համեմատ ավելանալով 75%-ով:

2005 թ. լրամշակվել է տեղեկատվության շրջանառման կարգը, որի համաձայն, Վարկային ռեգիստր մուտքագրման ենթակա են նաև վարկատուների կողմից տնտեսավարող սուբյեկտների հետ իրականացվող արտարժութային սվոփ գործարքները և հետգնման պայմանով արժեթղթերի ձեռքբերումը: Արդյունքում, վերահսկողական նպատակով օգտագործվող տեղեկատվությունը դարձել է ամբողջական՝ հնարավորություն ընձեռելով ավելի արդյունավետ գնահատել վարկատուների վարկային ռիսկը: Վարկային ռեգիստրի տեղեկատվությունը ԿԲ-ն կարող է օգտագործել նաև ձեռնարկությունների վարկարժանությունը գնահատելու գործընթացում:

Առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների մեծ մասը ավտոմատացրել է Վարկային ռեգիստրին տվյալների տրամադրման գործընթացը, ինչի արդյունքում մեծացել է համակարգի արագագործությունը: ԿԲ «Վարկային ռեգիստր» ծրագրային համակարգի կատարելագործման արդյունքում վարկային պատմությունները բանկերին և վարկային կազմակերպություններին տրամադրվում են հարցումը ստանալուց հետո մեկ օրվա ընթացքում: Նվազագույնի է հասցվել Վարկային ռեգիստր ներկայացվող տվյալների մեջ սխալների տեսակարար կշիռը:



Գրաֆիկ 2.33
Ստացված հայտերի քանակը ըստ ամիսների (հատ)

2005 թվականին Վարկային ռեգիստրը շարունակել է յուրաքանչյուր եռամսյակ անպարտաճանաչ վարկառուների անվանացանկի հրապարակումը մամուլում և ինտերնետային էջում: 2004 թվականի համեմատությամբ՝ ԿԲ կողմից սահմանված՝ բանկի նվազագույն կապիտալի մեծության 5%-ը գերազանցող և 180 օր ժամկետանց պարտավորություն ունեցող անպարտաճանաչ վարկառուների քանակը նվազել է 11-ով:

2004 թ. վերջի համեմատությամբ մոտ 2 անգամ ավելացել է նաև բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից պահանջվող վարկային պատմությունների քանակը: Սպառողական վարկավորման աճի պայմաններում բանկային համակարգի կողմից հետզհետե աճում է հաճախորդի վարկային պատմության նկատմամբ պահանջարկը: Վարկային պատմության ստուգման միջոցով հաճախորդի վարկարժանության գնահատումը կրճատում է վարկավորման վրա ծախսվող ժամանակը և հնարավորություն է տալիս նվազեցնել վարկային ռիսկը՝ խուսափելով անպարտաճանաչ վարկառուներից: Առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների մեծ մասը կարևորում է վարկային պատմությունը՝ հատկապես նոր հաճախորդների վարկավորման դեպքում: 2005 թ. Վարկային ռեգիստրում բացասական վարկային պատմություն ունեցող 950 վարկառուների վարկային դիմումներ (1.32 մլրդ դրամ ընդհանուր գումարով) մերժվել են բանկերի կողմից՝ խուսափելով բացասական վարկային պատմություն ունեցող վարկառուներին վարկեր տրամադրելուց:

Վարկային ռեգիստրի գործունեության արդյունքում բարձրացել է վարկառուների գործարար կարգապահությունը, նվազել են վարկերի մասնակի մարումների ուշացումները, որոնք հաճախորդների կողմից իրենց վարկային պատմության կարևորության գիտակցման արդյունք են:

2005 թվականին Վարկային ռեգիստրում հաշվառվող տեղեկատվության ծավալների, ինչպես նաև տեղեկատվության օգտագործման ցուցանիշների աճն ըստ ամենայնի կշարունակվի նաև 2006 թվականին: Ելնելով առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների իրականացրած աշխատանքներից՝ կարելի է եզրակացնել, որ վարկատուները կավտոմատացնեն տեղեկատվության տրամադրումը Վարկային ռեգիստրին:

Կշարունակվեն իրականացվել նաև մեթոդաբանական փոփոխություններ՝ բացահայտվող սխալների քանակի նվազեցման և գործունեության օպերատիվության բարձրացման նպատակով:

ՀՀ ֆինանսական համակարգի օրենսդրական և ենթաօրենսդրական փոփոխություններ

Ֆինանսական համակարգի օրենսդրական դաշտի փոփոխություններ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը շարունակել է Հայաստանի Հանրապետության ֆինանսական համակարգը կարգավորող օրենսդրական ակտերի բարեփոխման աշխատանքները: 2005 թվականին լրամշակվել են բանկերի գործունեությունը, ինչպես նաև արժութային կարգավորման ոլորտում իրավահարաբերությունները կարգավորող օրենքները, որոնք ընդունվել են Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից:

2005 թվականի նոյեմբերի 15-ին Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովն ընդունել է՝ «Բանկերի և բանկային գործունեության մասին», «Բանկային գաղտնիքի մասին», «Հաշվապահական հաշվառման մասին», «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքները, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքը:

«Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը և դրանից բխող մի շարք այլ օրենքներում փոփոխություններ և լրացումներ նախատեսող ՀՀ օրենքների փաթեթն ուղղված է հետևյալ նպատակների իրականացմանը.

1. Առաջնահերթ նպատակն է՝ բանկերում ներդնել կորպորատիվ կառավարման նոր սկզբունքներ: Օրենքով սահմանվել են բանկերի կառավարման մարմինների՝ մասնավորապես բանկի մասնակիցների ընդհանուր ժողովի, խորհրդի, գործադիր մարմնի, ինչպես նաև գլխավոր հաշվապահի, ներքին և արտաքին աուդիտի գործունեության առանձնահատկությունները բանկերում, նրանց իրավական կարգավիճակը, ձևավորման և գործունեության կազմակերպման չափանիշները և այլն: Օրենքը սահմանում է նաև բանկերի կողմից խոշոր կամ շահագրգռվածության առկայությամբ գործարքների կնքման կարգը, բանկի գործունեության հրապարակայնության ապահովմանը և բանկի ղեկավարների ֆիդուցիար պատասխանատվության սահմանմանն ուղղված դրույթներ:

2. Համախմբված (կոնսոլիդացված) վերահսկողության վերաբերյալ բանկային վերահսկողության Բազելյան սկզբունքների ներդրումը: Օրենքով տարանջատվել են ուղղակի և անուղղակի նշանակալից մասնակցություն ունեցող անձանց բնորոշումները, նրանց իրավունքներն ու պարտականությունները բանկերի համախմբված վերահսկողության համատեքստում:

3. Օրենքով սահմանել բանկերի լուծարման ընթացակարգի առանձնահատկությունները: Այս կապակցությամբ վերախմբագրվել է «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի՝ բանկերի լուծարմանը վերաբերող գլուխը՝ նպատակ ունենալով հստակեցնել բանկերի լուծարման ընթացքում պետական վերահսկողության վերաբերյալ հարցերը՝ մասնավորապես բանկի պարտատերերի և, առաջին հերթին, բանկի ավանդատուների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության տեսանկյունից:

2005 թվականի դեկտեմբերի 8-ին Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովն ընդունել է ***«Ֆինանսական կարգավորման և վերահսկողության միավորված համակարգի ներդրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը*** և դրանով պայմանավորված մի շարք օրենքներում փոփոխություններ և լրացումներ նախատեսող օրենքների փաթեթը: Դրանք կոչված են ապահովելու Հայաստանի Հանրապետության ֆինանսական համակարգի կայունությունը և դրա նկատմամբ վստահության բարձրացումը, պաշտպանելու ֆինանսական շուկայի հաճախորդների շահերը:

«Ֆինանսական կարգավորման և վերահսկողության միավորված համակարգի ներդրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական կարգավորման և վերահսկողության միավորված համակարգի ներդրման ուղղությամբ իրականացվելիք միջոցառումները, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսական համակարգի այլ մասնակիցների նկատմամբ կարգավորման և վերահսկողության գործառույթները Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին փոխանցելու հետ կապված միջոցառումները, այդ միջոցառումների

իրագործման կապակցությամբ առաջացող հարաբերությունները, ֆինանսական համակարգը կարգավորող և վերահսկող մարմնի լիազորությունները: Սահմանում է, որ ***ֆինանսական համակարգը*** ֆինանսական համակարգի մասնակիցների մասնակցությամբ հարաբերությունների ամբողջություն է, իսկ այդ ***համակարգի մասնակիցներ*** են հանդիսանում Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերը, վարկային կազմակերպությունները, Կենտրոնական բանկի կողմից լիցենզավորվող այլ անձինք, արժեթղթերի շուկայի մասնակիցները, ինվեստիցիոն ընկերությունները, ինվեստիցիոն հիմնադրամները, կուտակային կենսաթոշակային ապահովագրություն իրականացնող կազմակերպությունները, ապահովագրական գործունեություն իրականացնողները, գրավատները, որոնք իրականացնում են մասնագիտացված գործունեություն: Օրենքում նշվում է, որ ֆինանսական համակարգի վերը հիշատակված մասնակիցների գործունեության լիցենզավորումը, կարգավորումն ու վերահսկողությունը իրականացնում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը:

«Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկման ընթացքում ի հայտ եկած թերությունների վերացման նպատակով Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից 2005 թվականի դեկտեմբերի 8-ին ընդունվել է ***«Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը:*** Օրենքով նախատեսվել է, որ բանկերը հանդես են գալիս որպես արժութային գործակալներ և հաշվետու են ՀՀ կենտրոնական բանկին՝ ՀՀ կենտրոնական բանկի սահմանած կարգով: Միևնույն ժամանակ հստակեցվել են ՀՀ կենտրոնական բանկի կողմից լիցենզավորված անձանց պատասխանատվության ենթարկելու հիմքերը:

Բանկային համակարգի կարգավորման դաշտի փոփոխություններ

2005 թ. բանկային համակարգի կարգավորման դաշտում իրականացվել են հետևյալ փոփոխությունները.

«Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» և «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքների պահանջները բավարարելու և փոխանակման կետերի կողմից տրամադրվող ծառայությունների որակը բարձրացնելու նպատակով մշակվել է «Փոխանակման կետերի վերստուգման ձեռնարկը», և կատարվել են համապատասխան փոփոխություններ «Արտարժույթի առք ու վաճառքի գործառնությունների լիցենզավորումը և կարգավորումը» կանոնակարգ 10-ում:

Նոր խմբագրությամբ հաստատվել է «Վարկային կազմակերպությունների գրանցման ու լիցենզավորման համար գործունեության վայրին ներկայացվող տեխնիկական հագեցվածության պահանջները, մասնաճյուղերի և ներկայացուցչությունների հաշվառումը, ղեկավարների որակավորումը, կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցության ձեռքբերումը» կանոնակարգ 13-ը: Կանոնակարգում մեղմացվել են վարկային կազմակերպություններին ներկայացվող որոշ պահանջներ, որպեսզի ՀՀ տարածքում միկրովարկավորում իրականացնող հիմնադրամներին հնարավորություն տրվի ստանալ վարկային կազմակերպության լիցենզիա: Մասնավորապես՝ փոքր ծավալով գործառնություններ իրականացնող վարկային կազմակերպությունների մասնաճյուղերի նկատմամբ սահմանվել են տարածքային և տեխնիկական հագեցվածության ավելի մեղմ պահանջներ: Վարկային կազմակերպության խորհրդի անդամները չեն անցնելու որակավորման և մասնագիտական համապատասխանության ստուգում հարցազրույցի ձևով: Բարձր վարկանիշ ունեցող օտարերկրյա կազմակերպությունների համար պարզեցվել է վարկային կազմակերպությունների կապիտալում նշանակալից մասնակցության ձեռքբերման ընթացակարգը:

Հաստատվել է «Վարկային կազմակերպությունների հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» կանոնակարգ 15-ը նոր խմբագրությամբ: Կանոնակարգի վերանայումը պայմանավորված է 2004 թվականի վերջին Կանոնակարգ 14-ում կատարված փոփոխություններով և նպատակ ունի պարզեցնել հաշվետվական ձևերը: Կանոնակարգի հետ միաժամանակ, հաստատվել է «ՀՀ տարածքում գործող վարկային կազմակերպությունների կողմից Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունների կազմման ուղեցույցը»:

«Վարկային կազմակերպությունների գործունեության կարգավորումը, վարկային կազմակեր-

պությունների գործունեության տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 14-ում նախատեսվել է դրույթ, համաձայն որի՝ ունիվերսալ վարկային կազմակերպություններին թույլատրվում է իրենց անունից թողարկել և տեղաբաշխել արժեթղթեր, որոնց առնվազն 30%-ը պետք է ապահովված լինի առաջնակարգ վարկանիշ (AAA(Aaa1)-ից A-(A3)) ունեցող կազմակերպությունների կողմից: Այս փոփոխությունը հնարավորություն կտա վարկային կազմակերպություններին դուրս գալ արժեթղթերի շուկա: Հաշվի առնելով վարկային կազմակերպությունների կողմից արժեթղթերի թողարկման նախագծի բացակայությունը, ներդրողների շահերի պաշտպանության անհրաժեշտությունը և արժեթղթերի շուկայի ցածր զարգացածությունը՝ այդ տիպի արժեթղթերի նկատմամբ սահմանվել է առաջնակարգ ապահովվածության պահանջ: Կախված վարկային կազմակերպությունների կողմից թողարկված արժեթղթերի նկատմամբ հետագայում ձևավորվող պահանջարկից, այդ արժեթղթերի վարքագծից և վարկային կազմակերպությունների կողմից իրենց պարտավորությունները մարելու կարողությունից (և պատմությունից)՝ առաջնակարգ ապահովվածության պահանջը կարող է հանվել:

«Բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի գրանցումն ու լիցենզավորումը, բանկերի մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցումը, բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի ղեկավարների որակավորումը և գրանցումը» կանոնակարգ 1-ի փոփոխությունները հնարավորություն են տվել պահանջել առավել ամբողջական տեղեկատվություն բանկի նշանակալից մասնակիցների վերաբերյալ՝ իրական սեփականատերերին բացահայտելու նպատակով: Ընդլայնվել է բանկի (բանկի մասնաճյուղերի) տնտեսական ծրագրերի նկատմամբ պահանջների շրջանակը, ինչը հնարավորություն կտա բանկին (բանկի մասնաճյուղերին) ապահովելու ներքին հսկողության և ռիսկերի կառավարման համակարգերի պատշաճ գործունեությունը: Հստակեցվել է բանկերի կողմից ղեկավարներին որակավորման և մասնագիտական համապատասխանության քննությանը ներկայացնելու ընթացակարգը: Մասնավորապես, եթե անձը բանկի միջնորդությամբ մասնակցել է որակավորման քննությանը, ստացել է համապատասխան վկայական, սակայն բանկի կողմից չի ներկայացվել Կենտրոնական բանկի գրանցմանը, և բանկը միևնույն պաշտոնի համար առաջարկում է նոր թեկնածուի, ապա նա Կենտրոնական բանկ պետք է ներկայացնի նոր թեկնածուի առաջարկման հիմնավորումը: Նախատեսվել է նաև թեկնածուների կողմից անցկացված քննությունների արդյունքների բողոքարկման հնարավորությունը:

Հաստատվել է «Բանկի հիմնական գործունեության հետ կապված կամ բանկի գործադիր տնօրենի անմիջական ղեկավարության ներքո աշխատող կամ բանկի կառավարման մարմինների կողմից որոշումների կայացման հարցում ազդեցություն ունեցող աշխատակիցներին բանկի ղեկավար համարելու ուղեցույցը»: Համաձայն ուղեցույցի՝ բանկի նկատմամբ արդյունավետ վերահսկողության իրականացման նպատակով սահմանվել են այն չափանիշները, որոնք կարող են հիմք հանդիսանալ ՀՀ ԿԲ խորհրդի կողմից բանկի աշխատակցին բանկի ղեկավար համարելու համար՝ համաձայն «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի դրույթի:

Հաստատվել է «Իրավաբանական անձանց գործունեության ուղղությունները, ոլորտները կամ կառավարման մարմինների որոշումները կանխորոշելու կամ որոշումների կայացման կամ կիրառման վրա էապես ազդելու հնարավորություն ունեցող անձանց նշանակալից մասնակից հանդիսանալու չափանիշները», որի նպատակը «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի «բ» ենթակետի դրույթի կիրարկման համար արդյունավետ և հստակ սահմանված հիմքերի ստեղծումն է:

«Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ում կատարվել են փոփոխություններ և լրացումներ: Կանոնակարգ 2-ը համապատասխանեցվել է «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի պահանջին՝ ՀՀ տարածքում բանկերի կանոնադրական կապիտալը կարող է համալրվել բացառապես ՀՀ դրամով:

Պայմանավորված ակնկալվող մեծածավալ արտարժութային ներհոսքի չեզոքացման խնդրով՝ փոխվել են Կենտրոնական բանկում տեղաբաշխվող պարտադիր պահուստավորման նվազագույն չափի նորմատիվը՝ նախկին 6 տոկոսի փոխարեն՝ 8 տոկոս, և նորմատիվի հաշվարկման կարգը՝ ՀՀ դրամով ներգրավված միջոցների դիմաց պահուստավորումն իրականացվում է ՀՀ դրամով, ԱՄՆ դոլարով ներգրավված

միջոցների դիմաց՝ ԱՄՆ դոլարով, եվրոյով ներգրավված միջոցների դիմաց՝ եվրոյով, իսկ այլ արտարժույթներով ներգրավված միջոցների դիմաց՝ ԱՄՆ դոլարով:

Կանոնակարգ 2-ում կատարված փոփոխությունների համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից բարձր վարկանիշ («Ա», «Բ» և «Գ») ստացած կազմակերպությունների արժեթղթերը, այդ կազմակերպությունների նկատմամբ այլ պահանջները, ինչպես նաև այդ կազմակերպությունների երաշխավորությամբ պահանջները բանկերի կապիտալի համարժեքության հաշվարկում կընդգրկվեն 20% ռիսկի կշռով՝ «Ա» և «Բ» վարկանիշերի դեպքում, և 50% ռիսկի կշռով՝ «Գ» վարկանիշի դեպքում: Բացի այդ, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը նախատեսում է օգտագործել «Ա», «Բ» և «Գ» վարկանիշ ստացած կազմակերպությունների արժեթղթերը իր կողմից իրականացվող շուկայական գործառնություններում: Վերոնշյալ փոփոխությունները կնպաստեն ձեռնարկությունների թափանցիկությանը և կբարձրացնեն վերջիններիս հուսալիությունը՝ մեծացնելով բանկերի և իրական հատվածի համագործակցությունը:

«Բանկերի հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» կանոնակարգ 3-ում կատարվել են փոփոխություններ և լրացումներ՝ Կանոնակարգ 2-ի փոփոխություններին համապատասխանեցնելու նպատակով:

Մշակվել է «Մասնագիտացված անձանց կողմից հաճախորդներին արտարժույթի առք ու վաճառքի գործառնությունները հավաստիացնող փաստաթղթերի տրամադրման կարգ», որով սահմանվել է ՀՀ տարածքում արտարժույթի առք ու վաճառքը հավաստիացնող անդորրագրի միասնական ձևը:

Փողերի «լվացման» և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքար

Հայաստանի Հանրապետությունում փողերի «լվացման» և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարն իրականացվում է՝ համաձայն ՀՀ Ազգային ժողովի կողմից 2004 թ. դեկտեմբերի 14-ին ընդունված «Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի: Հայաստանի Հանրապետությունում փողերի «լվացման» և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի լիազորված մարմինը Կենտրոնական բանկն է: Ըստ օրենքի՝ Կենտրոնական բանկին հաշվետու մարմիններն են՝ բանկերը, վարկային կազմակերպությունները, արտարժույթի դիլերային առուվաճառքի, արտարժույթի առուվաճառքի մասնագիտացված գործունեություն, դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող անձինք, վճարային գործիքների և վճարահաշվարկային փաստաթղթերի պրոցեսինգ և քլիրինգ իրականացնող կազմակերպությունները, արժեթղթերի շուկայում մասնագիտացված գործունեություն իրականացնող անձինք, գրավատները, գույքի նկատմամբ իրավունքների գրանցում իրականացնող մարմինները, օրենքով սահմանված դեպքերում և կարգով գործարքներ վավերացնող, շահումով խաղ և վիճակախաղ կազմակերպող անձինք, խաղատները, հավատարմագրային կառավարում, ապահովագրական գործունեություն, ինվեստիցիոն գործունեություն իրականացնող անձինք, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով նվիրատվություն իրականացնող ոչ առևտրային կազմակերպությունները (ներառյալ՝ դրամաշնորհներ տրամադրող կազմակերպությունները): Ըստ օրենքի՝ հաշվետու մարմինների վրա դրված հիմնական պարտականություններն են՝ կասկածելի գործարքների և 20 մլն ՀՀ դրամ (անշարժ գույքի առք ու վաճառքի գործարքների դեպքում՝ 50 մլն ՀՀ դրամ) գումարը գերազանցող բոլոր գործարքների մասին տեղեկացումը Կենտրոնական բանկին:

2005 թ. ապրիլին Կենտրոնական բանկում ստեղծվել է Ֆինանսական դիտարկումների կենտրոնը, որի հիմնական գործառույթներն են.

- Փողերի «լվացման» և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի տեղեկատվական բազաների ձևավորում և զարգացում,
- Փողերի «լվացման» և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի տվյալների մշակում և վերլուծություն,
- Հայաստանի Հանրապետության պետական մարմինների՝ իրավապահ մարմինների հետ տեղեկատվության փոխանակում և համագործակցություն,
- Փողերի «լվացման» և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի միջազգային կազմակերպությունների, օտարերկրյա ֆինանսական հետախուզության մարմինների հետ տեղեկատվության փոխանակում և համագործակցություն,

- Փողերի «լվացման» և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի կարգավորում,
- Փողերի «լվացման» և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի օրենսդրության պահանջների կատարման ապահովում (վերահսկողություն),
- Փողերի «լվացման» և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում խորհրդատվության և ուսուցման իրականացում:

Կենտրոնական բանկի խորհրդի կողմից հաստատվել է Ֆինանսական դիտարկումների կենտրոնի գործունեության եռամյա ռազմավարությունը: Կատարվում են հաշվետվական ձևերի հաստատման, օրենքով սահմանված կարգերի մշակման ու ընդունման և հաշվետվական գործընթացը սկսելու աշխատանքներ:

Հայաստանի Հանրապետությունը Եվրոխորհրդի Փողերի «լվացման» և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի հատուկ կոմիտեի (ՄԱՆԻՎԱԼ) անդամ է: Կոմիտեի կողմից պարբերաբար կատարվում են անդամ երկրների գնահատումներ: Հայաստանի Հանրապետությունում կոմիտեի առաջին գնահատումը կատարվել է 2004 թ. հուլիսին, ի կատարումն որի՝ ընդունվել է փողերի «լվացման» և ահաբեկչության դեմ պայքարի օրենսդրությունը:


«Գերմանա - հայկական հիմնադրամ». փոքր և միջին ձեռներեցության աջակցման վարկային ծրագիր (ԳՀՀ)

2005 թ. շարունակվել է փոքր և միջին ձեռներեցության աջակցման «Գերմանա-հայկական հիմնադրամ» վարկային ծրագրի իրականացումը, որի շրջանակներում Գերմանիայի Դաշնային Հանրապետության Վերականգնման վարկերի բանկը (KfW) 40 տարի մարման ժամկետով (տարեկան 0.75% տոկոսադրույքով) տրամադրել է ընդհանուր առմամբ 16.8 մլն եվրոյի դրամաշնորհ: Խորհրդատվական ծառայությունների նպատակով լրացուցիչ տրամադրվել է նաև 2.2 մլն եվրո:


Ծրագրի իրականացման սկզբից՝ 1999 թ., ծրագրում ընդգրկված գործընկեր բանկերը ՀՀ կենտրոնական բանկից ստացել են 11700000.0 հազար դրամ վարկային միջոց, որից՝

- «Հայգյուղփոխբանկ» կոոպերատիվ բանկ - 5700000.0 հազար դրամ
- «Անելիք բանկ» ՍՊԸ - 2400000.0 հազար դրամ
- «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ - 1800000.0 հազար դրամ
- «Կոնվերս բանկ» ՓԲԸ - 1500000.0 հազար դրամ
- «Ինեկո բանկ» ՓԲԸ - 300000.0 հազար դրամ

Գործընկեր բանկերը 2005 թ. ծրագրի շրջանակներում տրամադրել են 5991 վարկ՝ 22489179.1 հազար դրամ ընդհանուր գումարով. ծրագրի իրականացման սկզբից տրամադրվել է 19886 վարկ՝ 78608467.5 հազար դրամ ընդհանուր գումարով:



Գրաֆիկ 2.34
ԳՀՀ միջոցով տրամադրված վարկեր




Գրաֆիկ 2.35
Ընթացիկ պորտֆելի կառուցվածքը 31.12.05 թ. դրությամբ

2005 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ծրագրի շրջանակներում գործընկեր բանկերի ընթացիկ վարկային ներդրումները կազմել են 5030 վարկ՝ 15982535.6 հազար դրամ ընդհանուր գումարով,

ինչը վկայում է, որ բանկերը, ելնելով ծրագրով ներդրված նոր վարկային տեխնոլոգիայի արդյունավետությունից, բացի ՀՀ կենտրոնական բանկի կողմից տրամադրված գումարներից, սեփական միջոցների հաշվին փոքր և միջին ձեռներեցներին տրամադրել են 4282535.6 հազար դրամ վարկ:

Ծրագրի արդյունավետության մասին է վկայում նաև այն հանգամանքը, որ նույն տեխնոլոգիայով «Հայգյուղփոխբանկ» կոոպերատիվ բանկում և «Անելիք բանկ» ՍՊԸ-ում 2005 թ. վարկավորում է իրականացվել նաև Վերականգնման և զարգացման եվրոպական բանկի (EBRD) միջոցներով, որոնց ընդհանուր քանակը կազմել է 5642 վարկ՝ 7837490.1 հազար դրամ գումարով:

Տարվա ընթացքում բանկերի մասնաճյուղերի շնորհիվ ընդլայնվել է նաև վարկավորումը ըստ հանրապետության տարածաշրջանների:




1. Արագածոտն, 2. Արարատ, 3. Արմավիր, 4. Գեղարքունիք, 5. Կոտայք, 6. Լոռի, 7. Շիրակ, 8. Սյունիք, 9. Տավուշ, 10. Վայոց ձոր, 11. Երևան

Գրաֆիկ 2.36
Պորտֆելի բաշխվածությունը՝ ըստ մարզերի

2005 թ. IPC խորհրդատվական ընկերությունն ավարտեց իր առաքելությունը նաև «Ինեկո բանկ» ՓԲԸ-ում:

Անցած 6 տարիներին ընկերությունը հաջողությամբ է իրականացրել իր առաքելությունը՝ գործընկեր բանկերում ներդնելով վարկավորման նոր տեխնոլոգիա, պատրաստելով 235 վարկային մասնագետներ: Դրա հետ մեկտեղ, գործընկեր բանկերում ստեղծվել են «Գերմանա-հայկական հիմնադրամ» ծրագրով վարկավորման հատուկ կառույցներ, որոնք ներկայումս այդ բանկերի կառուցվածքային ստորաբաժանումներն են:



1. Առևտուր, 2. Ծառայություն, 3. Արտադրություն, 4. Գյուղատնտեսություն, 5. Շինարարություն, 6. Սննդի արտադրություն

Գրաֆիկ 2.37
Պորտֆելի բաշխվածությունը՝ ըստ գործունեության տեսակների

3. ԿԱԴՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

2005 թվականին ՀՀ կենտրոնական բանկի իրականացրած կադրային քաղաքականության նպատակը եղել է կառավարման մեխանիզմների միջոցով կազմակերպության հիմնական գործունեության խթանումը և, միաժամանակ, աշխատակիցների սոցիալական և պրոֆեսիոնալ զարգացման պահանջների բավարարումը:

Շարունակել է գործել աշխատակիցների առաջխաղացման և կատարած աշխատանքին ու փորձառությանը համապատասխան վարձատրության աստիճանական աճի ճկուն համակարգը, որը հիմնված է աշխատակիցների մասնագիտական գիտելիքների ստուգման և աշխատանքի կատարողականի գնահատման մեխանիզմի վրա:

Թափուր հաստիքների համալրումը, ինչպես նախորդ տարիներին, հիմնականում կատարվել է մրցութային կարգով: Ընտրության ժամանակ նախապատվությունը տրվել է ՀՀ կենտրոնական բանկի ներքին ռեսուրսների օգտագործմանը, իսկ երիտասարդ մասնագետների ընտրության ժամանակ՝ ՀՀ կենտրոնական բանկի կողմից կազմակերպվող «ՀՀ կենտրոնական բանկ. ներածական դասընթաց» ուսումնական ծրագրի մասնակիցներին:

ՀՀ կենտրոնական բանկը շարունակել է վարել երիտասարդ մասնագետներ ներգրավելու, նրանց ներուժը օգտագործելու, որակավորումը բարձրացնելու քաղաքականություն: 2005 թվականի ընթացքում ՀՀ կենտրոնական բանկի ֆունկցիոնալ ստորաբաժանումներում ժամկետային պայմանագրերով աշխատել են շուրջ 23 երիտասարդ մասնագետներ, որոնցից 16-ը համալրել են ՀՀ կենտրոնական բանկի հաստիքացուցակը:

Երևանի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետի և Երևանի պետական տնտեսագիտական ինստիտուտի բարձր առաջադիմությամբ ուսանողներին խրախուսելու նպատակով ՀՀ կենտրոնական բանկը 9 լավագույն ուսանողների հատկացրել է Իսահակ Աբասի Իսահակյանի անվան կրթաթոշակ:

2005 թվականի ընթացքում ՀՀ կենտրոնական բանկում ուսումնական և նախադիպլոմային պրակտիկա են անցել Հայաստանի Հանրապետության բուհերի 30 ուսանողներ:

Աշխատակիցների մասնագիտական պատրաստվածության աստիճանը և պաշտոնային համապատասխանելիությունը գնահատելու նպատակով գործել է պարբերական ատեստավորման մեխանիզմը:

2005 թվականին մշակվել է «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի աշխատակիցների ծառայողական էթիկայի կանոնները»: Ձեռնարկի նպատակն է ամրապնդել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հեղինակությունը և ձևավորել մեկ ամբողջական բարոյաիրավական հիմք՝ աշխատակիցների արդյունավետ գործունեության ապահովման համար:

2005 թվականին ՀՀ կենտրոնական բանկի աշխատակիցների միջին թվաքանակը կազմել է 532՝ 298 կին և 234 տղամարդ: ՀՀ կենտրոնական բանկի աշխատակիցների միջին տարիքը 39,5 է:

Կադրերի ուսուցում և վերապատրաստում

2005 թվականին ՀՀ կենտրոնական բանկը մշակել և իրականացրել է կադրերի որակավորման բարձրացման ու մասնագիտական հմտությունների զարգացման ծրագրեր:

ՀՀ կենտրոնական բանկի 175 մասնագետներ մասնակցել են օտարերկրյա կենտրոնական բանկերի, այլ բանկերի ուսումնական կենտրոններում կազմակերպված վերապատրաստման ծրագրերին: Այս առումով, ՀՀ կենտրոնական բանկի հետ սերտորեն համագործակցել են Արժույթի միջազգային հիմնադրամը, Անգլիայի բանկի՝ կենտրոնական բանկերի ուսուցողական կենտրոնը, Ֆրանսիայի բանկը, Գերմանիայի Բունդեսբանկը, Նիդեռլանդների, Ռուսաստանի Դաշնության կենտրոնական բանկերը, Միջազգային հաշվարկների բանկը, Շվեյցարիայի ազգային բանկը, Չեխիայի ազգային բանկը, Ֆինանսական կայունության ինստիտուտը և այլն: Ծրագրերից մի քանիսը իրականացվել է ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության կողմից տրամադրված տեխնիկական օժանդակության միջոցներով:

Կենտրոնական բանկը առանձնակի ուշադրություն է դարձրել օտարերկրյա բանկերի հետ երկկողմանի հարաբերությունների ընդլայնմանը, որի արդյունքում նախագծվել և իրականացվել են վերապատրաստման տեսակետից առավել արդյունավետ և ինքնատիպ ծրագրեր:

Բանկային համակարգի տարածաշրջանային զարգացման գործում մեծ դեր են ունեցել Երևանում կազմակերպված միջազգային երկու սեմինարները. ԱՄՆ Դաշնային Պահուստային համակարգի նախաձեռնությամբ՝ «Ռիսկերի կառավարում և ներքին ստուգումներ» և Նիդեռլանդների բանկի նախաձեռնությամբ՝

«Կանխիկ դրամի կառավարում» թեմաներով, որոնցից յուրաքանչյուրին, ՀՀ կենտրոնական բանկի աշխատակիցներից բացի, մասնակցել են օտարերկրյա մեկ տասնյակից ավելի բանկերի ներկայացուցիչներ: Հատուկ ծրագրերով դասընթացների կազմակերպման առաջատարը Նիդեռլանդների բանկն էր:

2005 թ. դեկտեմբերին Կենտրոնական բանկը մասնակցել է Եվրասիայի տնտեսական համագործակցության շրջանակներում կայացած՝ համակարգողների խորհրդի երկրորդ հանդիպմանը, որտեղ քննարկվել են այդ շրջանակներում կազմակերպվելիք ընթացիկ և 2006 թ. վերապատրաստման ծրագրերը: Արդյունքում՝ 2005 թ. Կենտրոնական բանկի 16 աշխատակիցներ հնարավորություն են ունեցել մասնակցելու ԱՊՀ երկրների կենտրոնական բանկերի համար բանկային տարբեր թեմաներով կազմակերպված ծրագրերին:

ՀՀ բանկային գործունեությունը խթանելու և առավել արդյունավետ դարձնելու նպատակով Կենտրոնական բանկը նախաձեռնել և կազմակերպել է արդիական և հրատապ թեմաներով ներքին սեմինար-դասընթացներ: Դասընթացներին մասնակցել են 495 ունկնդիրներ, որոնցից 243-ը՝ ՀՀ կենտրոնական բանկից, 252-ը՝ ՀՀ տարածքում գործող բանկերից և վարկային կազմակերպություններից:

Կենտրոնական բանկի թափուր աշխատատեղերը երիտասարդ կադրերով համալրելու գործընթացը խթանելու նպատակով «ՀՀ կենտրոնական բանկ. ներածական դասընթաց» ուսումնական ծրագրի շրջանակներում վերապատրաստվել են ՀՀ բուհերի 120 շրջանավարտներ, որոնցից 9 լավագույնները հնարավորություն են ունեցել մրցութային կարգով աշխատանքի ընդունվել Կենտրոնական բանկ:

Կազմակերպվել են նաև փորձի փոխանակման չորս տասնյակից ավելի և ՀՀ կենտրոնական բանկում գործող կանոնակարգերի վերաբերյալ 38 սեմինարներ, որոնց մասնակցել են ՀՀ կենտրոնական բանկի 494 աշխատակիցներ:

Տարեկան երկու անգամ կազմակերպվել է «Ներմուծական դասընթաց»՝ ՀՀ կենտրոնական բանկ նոր ընդունված աշխատակիցների համար:

ՀՀ կենտրոնական բանկի 20 ղեկավար պաշտոնյաներ մասնակցել են «Կառավարչական հմտություններ» թեմայով հատուկ դասընթացին:

ՀՀ կենտրոնական բանկի միջազգային համագործակցությունը

2005 թվականին ՀՀ կենտրոնական բանկը շարունակել է բազմակողմանի և երկկողմ համագործակցությունը միջազգային և արտասահմանյան ֆինանսական կազմակերպությունների հետ: Մասնավորապես՝ ԱՄՀ/ՀԲ տեխնիկական օժանդակության շրջանակներում ՀՀ կենտրոնական բանկն ընդունել է ԱՄՀ դրամավարկային քաղաքականության, բանկային վերահսկողության և ֆինանսական գործառնությունների բնագավառների խորհրդականների և առաքելությունների:

ՀՀ կենտրոնական բանկի աշխատակիցները մասնակցել են բանկային և ֆինանսական միջազգային համաժողովների, ֆորումների, կլոր սեղանի նիստերի, խորհրդակցությունների, ցուցահանդեսների, աշխատանքային սեմինարների, որտեղ հանդես են եկել զեկույցներով և ելույթներով: Հիշատակման են արժանի՝ Եվրոպական ֆինանսական և բանկային ֆորումը (Պրահա, Չեխիա), KfW բանկի կողմից կազմակերպված «Վարկային գործառնություններ և վարկավորման կազմակերպում» թեմայով միջազգային կոնֆերանսը (Կիև, Ուկրաինա), «Հավալա» համակարգին նվիրված միջազգային կոնֆերանսը (Աբու-Դաբի, Միացյալ Արաբական Էմիրություններ), «Տնտեսական վերլուծությունների կարևորումը կենտրոնական բանկերի համար» թեմայով սեմինար - խորհրդակցությունը (Վինձոր, Մեծ Բրիտանիա), «Վաղ արձագանքման համակարգ. իրականացման մեթոդները և ուղիները» թեմայով միջազգային կոնֆերանսը (Ալմաթի, Ղազախստան), Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի բանկային վերահսկողների 18-րդ միջազգային կոնֆերանսը (Կիև, Ուկրաինա), ԱՄՀ և Համաշխարհային բանկի Նիդեռլանդների ենթախմբի պետությունների տարեկան հանդիպումը (Թբիլիսի, Վրաստան), G-10 երկրների և ԱՊՀ երկրների կենտրոնական բանկերի տեխնիկական օժանդակության գծով համակարգողների ամենամյա հանդիպումը (Սանկտ Պետերբուրգ, ՌԴ), SWIFT օգտագործողների և անդամների ազգային ասոցիացիաների նախագահների տարեկան համաժողովը և SIBOS կոնֆերանսը (Կոպենհագեն, Դանիա), Արժույթի միջազգային հիմնադրամի և Համաշխարհային բանկի կառավարիչների խորհուրդների տարեկան հանդիպումը (Վաշինգտոն, Ամերիկայի Միացյալ Նահանգներ),

Անգլիայի բանկի և Վերականգնման և զարգացման եվրոպական բանկի կողմից կազմակերպված «Բանկային ճգնաժամերի կառավարում» թեմայով սեմինար - խորհրդակցությունը (Մոսկվա, ՌԴ):

2005 թ. ընթացքում ՀՀ կենտրոնական բանկն ակտիվորեն համագործակցել է Եվրոպական Միության կառույցների հետ և մասնակցել Եվրոպայի խորհրդի կողմից կազմակերպված՝ փողերի «լվացման» և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի (MONEYVAL) խնդիրներին նվիրված համաժողովների և սեմինարների աշխատանքներին (Ստրասբուրգ, Ֆրանսիա):

Գործնական կապերն ընդլայնելու և բանակցություններ վարելու նպատակով 2005 թ. ՀՀ կենտրոնական բանկ են այցելել Սևծովյան առևտրի և զարգացման բանկի պատվիրակությունը, ING Bank-ի և OMX Group-ի պատվիրակությունները: 2005 թ. հունիսի 9 - 10-ը Հայաստանի Հանրապետությունում էր Նիդեռլանդների Թագավորության պատվիրակությունը՝ ֆինանսների նախարար Գերրիթ Զալմի գլխավորությամբ: Այցի ընթացքում ՀՀ կառավարության և Նիդեռլանդների կառավարության միջև ստորագրվել են փոխըմբռնման մի շարք հուշագրեր և համաձայնագրեր: Այցի շրջանակներում Նիդեռլանդների պատվիրակության անդամներ Հ. Բրաուերը և Կ. վան դեն Բերգը այցելել են ՀՀ կենտրոնական բանկ և քննարկել ՀՀ կենտրոնական բանկի և Նիդեռլանդների բանկի միջև տեխնիկական համագործակցության շրջանակներում իրականացվող ծրագրերը և 2006 թ. հեռանկարները:

Հուլիսի 20-ին Երևանում և օգոստոսի 20-ին Մինսկում ստորագրվել է «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի և Բելառուսի Հանրապետության ազգային բանկի միջև հաշվարկների կազմակերպման մասին» համաձայնագիրը:

2005 թ. ընթացքում շարունակվել են միջկառավարական հանձնաժողովների շրջանակներում ՀՀ կենտրոնական բանկի և Ազգային/կենտրոնական բանկերի միջև համաձայնագրեր և փոխըմբռնման հուշագրեր ստորագրելու աշխատանքները, մասնավորապես՝ «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի և Թաիլանդի Թագավորության Թաիլանդի բանկի միջև բանկային համագործակցության մասին» փոխըմբռնման հուշագիրը, «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի և Կիպրոսի կենտրոնական բանկի միջև բանկային վերահսկողության բնագավառում համագործակցության մասին» փոխըմբռնման հուշագիրը և «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի և Իրանի Իսլամական Հանրապետության կենտրոնական բանկի միջև բանկային վերահսկողության բնագավառում համագործակցության մասին» համաձայնագիրը:

Սեպտեմբերի 25 - 30-ը ՀՀ կենտրոնական բանկի պաշտոնական ներկայացուցիչը Հայ - չինական միջկառավարական հանձնաժողովի կազմում այցելել է Չինաստանի ազգային բանկ: Բանակցությունների արդյունքում պայմանավորվածություն է ձեռք բերվել 2006 թ. ընթացքում իրականացնել երկու բանկերի միջև բանկային ոլորտում համագործակցության մասին համաձայնագրի ստորագրման նախապատրաստական աշխատանքներ:

2005 թ. փետրվարի 2 - 4-ը ՀՀ կենտրոնական բանկի կողմից կազմակերպվել է Անդրկովկասյան, Կենտրոնական Ասիայի երկրների և Ռուսաստանի Դաշնության բանկային վերահսկողության Բազելյան կոմիտեի տարածաշրջանային խմբի 15-րդ կոնֆերանսը: Ամփոփելով տարածաշրջանային խումբը նախագահող Տաջիկստանի ազգային բանկի անցած երկու տարում կատարված աշխատանքների արդյունքները, կոնֆերանսի մասնակիցները քննարկել և քվեարկությամբ տարածաշրջանային խմբի նախագահության լիազորությունները փոխանցել են ՀՀ ԿԲ-ին, իսկ տարածաշրջանային խմբի նախագահի պաշտոնը ստանձնել է ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Տ. Սարգսյանը:

2005 թ. հոկտեմբերի 12 - 14-ը ՀՀ կենտրոնական բանկի կողմից կազմակերպվել է Անդրկովկասյան, Կենտրոնական Ասիայի երկրների և Ռուսաստանի Դաշնության բանկային վերահսկողության Բազելյան կոմիտեի տարածաշրջանային խմբի 16-րդ կոնֆերանսը, որին մասնակցել են 12 երկրների և կազմակերպությունների 18 ներկայացուցիչներ:

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ

Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն 31.12.2005 թ. դրությամբ

հազար ՀՀ դրամ

	Ծանոթագրություն	2005	2004
Տոկոսային եկամուտներ	3, 4	11,092,460	7,102,630
Տոկոսային ծախսեր	6, 7	(2,829,108)	(1,975,484)
Զուտ տոկոսային եկամուտ		**8,263,352**	**5,127,146**
Եկամուտներ վարձավճարներից և կոմիսիոն գանձումներից		5,936	7,794
Ծախսեր վարձավճարներից և կոմիսիոն վճարներից		(468,894)	(257,875)
Վարձավճարներից և կոմիսիոն վճարներից զուտ եկամուտ/(ծախս)		**(462,958)**	**(250,081)**
Արտարժութային գործարքներից և փոխարկումից զուտ եկամուտ/(ծախս)			
- Իրացված		(4,017,129)	(2,674,503)
- Չիրացված		(12,453,849)	(15,600,767)
Արժեթղթերի և դրամագիտական արժեքների առք ու վաճառքից զուտ եկամուտ/(ծախս)		(50,192)	(61,894)
Եկամուտներ այլ գործառնություններից	5	380,069	471,104
Աշխատավարձ և նրան հավասարեցված միջոցներ		(1,859,515)	(1,690,957)
Վարչական ծախսեր		(401,036)	(402,146)
Թղթադրամների թողարկման և մետաղադրամների հատման ծախսեր		(1,588,825)	(309,539)
Ամորտիզացիա և մաշվածք		(760,402)	(657,144)
Հնարավոր կորուստների ապահովման պահուստի (համալրում) / նվազում	13	180,622	(30,052)
Այլ ծախսեր	8	(804,887)	(670,087)
Տարվա վնաս		**(13,574,750)**	**(16,748,920)**
Տարվա վնաս		(13,574,750)	(16,748,920)
Արտարժույթի վերագնահատման պահուստից/(պահուստին) մասհանումներ		-	7,663,642
Ընդամենը բաշխման ենթակա շահույթ		**-**	

93 – 118 էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ

Հաշվեկշիռ 31.12.2005 թ. դրությամբ

հազար ՀՀ դրամ

	Ծանոթագրություն	2005	2004
ԱԿՏԻՎՆԵՐ			
Ակտիվներ արտարժույթով			
Կանխիկ դրամական միջոցներ		269,956	263,649
Օտարերկրյա բանկերի և վարկային կազմակերպությունների նկատմամբ պահանջներ	9	203,034,141	200,665,499
ԱՄՀ-ում հատուկ փոխառության իրավունք	10	63,808,889	74,997,910
Ներդրումային արժեթղթեր	11		
- Վաճառքի համար նախատեսված ներդրումներ		1,301	1,514
- Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ		135,171,386	74,091,282
Այլ արտարժութային ակտիվներ		422,267	1,228,824
		402,707,940	**351,248,678**
Ակտիվներ ՀՀ դրամով			
Վարկեր և այլ պահանջներ	12	11,949,866	13,020,001
Ներդրումային արժեթղթեր			
- Վաճառքի համար նախատեսված ներդրումներ	11	8,077,077	8,442,489
Հիմնական միջոցներ	14	6,088,280	5,546,100
Ոչ նյութական ակտիվներ	15	77,914	75,245
Օտարման ենթակա հիմնական միջոցներ		1,393	107,687
Այլ ակտիվներ ՀՀ դրամով	16	325,472	362,842
		26,520,002	**27,554,364**
ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ		**429,227,942**	**378,803,042**
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Արտարժույթով պարտավորություններ			
Փոխառված միջոցներ			
- Բանկեր և վարկային կազմակերպություններ	17	31,206,005	11,088,132
- ԱՄՀ	10	79,411,892	104,337,934
- ՀՀ կառավարություն		39,493,293	13,878,092
Այլ ավանդային հաշիվներ արտարժույթով	18	1,990,006	154,751
Այլ պարտավորություններ արտարժույթով	19	101,068	43,970
		152,202,264	**129,502,879**

ՀՀ դրամով պարտավորություններ			
Շրջանառության մեջ թղթադրամներ և մետաղադրամներ	20	155,274,723	105,533,669
Փոխառված միջոցներ			
- Բանկեր և վարկային կազմակերպություններ	17	30,359,201	28,436,945
- ԱՄՀ	10	59,199,628	70,244,915
- ՀՀ կառավարություն	21	21,993,849	42,610,033
Այլ ավանդային հաշիվներ դրամով	18	1,199,662	1,184,367
Թողարկված պարտքային արժեթղթեր	22	21,482,856	-
Դրամով այլ պարտավորություններ	23	149,996	225,823
		289,659,915	**248,235,752**
Ընդամենը պարտավորություններ		**441,862,179**	**377,738,631**
ԿԱՊԻՏԱԼ			
Կանոնադրական կապիտալ		100,000	100,000
Գլխավոր պահուստ		9,870,486	9,870,486
Կուտակված վնաս և այլ պահուստներ		(22,604,723)	(8,906,075)
Ընդհանուր կապիտալ		**(12,634,237)**	**1,064,411**
ԸՆԴԱՄԵՆԸ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		**429,227,942**	**378,803,042**

93 – 118 էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի կողմից 2006 թվականի մարտի 28-ին և ստորագրվել.

Տ. ՍԱՐԳՍՅԱՆ
Նախագահ

Հ. ՀԱԿՈԲՅԱՆ
Գլխավոր հաշվապահ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ

Կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն 31.12.2005 թ. դրությամբ

հազար ՀՀ դրամ

	Լոսվիտոի ցոիկոմոսցոմ	Գլխավոր պահուստ	Արտարժույթի վերագնահատման պահուստ	Վաճառքի համար մատչելի ներդրումների գծով վերագնահատման պահուստ	Կուտակված շահույթ/(կմցում)	Ընդհանուր կապիտալ
Հաշվեկշիռը 31.12. 2003 թ. դրությամբ	100,000	9,335,186	7,663,642	-	2,676,502	19,775,330
Տարվա վնաս					(16,748,920)	(16,748,920)
Վաճառքի համար մատչելի արժեթղթերի իրական արժեքի ճշգրտումից զուտ օգուտ	-	-	-	179,203	-	179,203
Մասհանումներ արտարժույթի վերագնահատման պահուստից	-	-	(7,663,642)	-	7,663,642	-
Մասհանումներ գլխավոր պահուստին	-	535,300	-		(535,300)	-
Մասհանումներ կառավարությանը	-	-	-	-	(2,141,202)	(2,141,202)
Հաշվեկշիռը 31.12.2004 թ. դրությամբ	**100,000**	**9,870,486**	**-**	**179,203**	**(9,085,278)**	**1,064,411**
Տարվա վնաս	-	-	-	-	(13,574,750)	(13,574,750)
Վաճառքի համար մատչելի արժեթղթերի իրական արժեքի ճշգրտումից զուտ օգուտ	-	-	-	(123,898)	-	(123,898)
Հաշվեկշիռը 31.12.2005 թ. դրությամբ	**100,000**	**9,870,486**	**-**	**55,305**	**(22,660,028)**	**(12,634,237)**

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ

Դրամական միջոցների հոսքի հաշվետվություն
31.12. 2005 թ. դրությամբ

հազար ՀՀ դրամ

	2005	2004
Դրամական միջոցների հոսք գործառնական գործունեությունից		
Տարվա վնաս	(13,574,750)	(16,748,920)
Հնարավոր կորուստների պահուստի ավելացում/(նվազում)	(180,622)	30,052
Մաշվածք և ամորտիզացիա	760,402	657,144
Գործառնական գործունեությունից դրամական հոսքեր՝ մինչև գործառնական ակտիվներում և պարտավորություններում փոփոխությունները	(12,994,970)	(16,061,724)
Գործառնական ակտիվների (ավելացում) / նվազում		
ԱՄՀ-ին առնչվող ակտիվներ	9,977,736	7,910,102
Արտարժութային ակտիվներ	(23,684,111)	66,893,333
Պետական արժեթղթեր և այլ ներդրումներ	241,515	(7,654,574)
Վարկեր, ավանդներ և այլ պահանջներ բանկերում	1,187,567	(4,229,030)
Այլ ակտիվներ	143,877	155,250
Գործառնական պարտավորությունների ավելացում / (նվազում)		
Պարտավորություններ բանկերի հանդեպ	24,199,945	7,213,733
ՀՀ կառավարության ավանդներ և հաշիվներ	4,999,017	18,988,956
Այլ պարտավորություններ	1,895,011	167,704
Գործառնական գործունեությունից զուտ դրամական հոսքեր	**5,965,587**	**73,383,750**
Դրամական միջոցների հոսք ներդրումային գործունեությունից		
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(1,307,457)	(1,241,331)
Հիմնական միջոցների օտարում	2,206	3,637
Այլ ներդրումների օտարում/(ձեռքբերում)	(33,159,622)	6,141,689
Ներդրումային գործունեությունից զուտ դրամական հոսքեր	**(34,464,873)**	**4,903,995**
Դրամական միջոցների հոսք ֆինանսական գործունեությունից		
Թղթադրամներ և մետաղադրամներ շրջանառության մեջ	49,741,054	8,695,498
Թողարկված արժեթղթեր	21,482,856	-
Պարտավորություններ ԱՄՀ-ի հանդեպ	(35,971,330)	(23,597,588)
Վարկեր բանկերից	(2,159,816)	2,470,263
Մասհանումներ կառավարությանը	-	(2,141,202)
Ֆինանսական գործունեությունից զուտ դրամական հոսքեր	**33,092,764**	**(14,573,029)**
Դրամական միջոցների զուտ հոսք՝ ավելացում / (նվազում)	**4,593,478**	**63,714,716**
Դրամական միջոցների մնացորդ տարվա սկզբին (ծանոթագր.24)	179,985,585	116,270,869
Դրամական միջոցների մնացորդ տարվա վերջին (ծանոթագր.24)	**184,579,063**	**179,985,585**

Ֆինանսական հաշվետվությունների ծանոթագրություններ

Ծանոթագրություն 1. Իրավական դաշտը

Կենտրոնական բանկը Հայաստանի Հանրապետության օրենքով հիմնադրված իրավաբանական անձ է: Կենտրոնական բանկը ներկայացնում է իր հաշվետվություններն Ազգային Ժողովին: Կենտրոնական բանկի կանոնադրական կապիտալը Հայաստանի Հանրապետության սեփականությունն է և չի կարող գրավադրվել, վաճառվել կամ այլ կերպ օտարվել:

Կենտրոնական բանկի հիմնախնդիրը գների կայունության ապահովումն է, որն իրականացվում է դրամավարկային քաղաքականության մշակման և իրականացման միջոցով: Իր հիմնախնդրին համահունչ, Կենտրոնական բանկը նաև պատասխանատու է՝

- բանկային համակարգի կայունության, իրացվելիության, վճարունակության և բնականոն գործունեության համար անհրաժեշտ այլ պայմանների ապահովման և
- գործուն վճարահաշվարկային համակարգ ստեղծելու և զարգացնելու համար:

Կենտրոնական բանկը նաև՝

- թողարկում է ազգային արժույթը (Հայաստանի Հանրապետության դրամ) և կարգավորում է դրամաշրջանառությունը,
- իրականացնում է Հայաստանի Հանրապետության կառավարության (այսուհետ՝ Կառավարություն) բանկային սպասարկումը,
- Կառավարության ֆինանսական գործակալն ու խորհրդատուն է,
- լիցենզավորում է առևտրային բանկերին և, եթե նախատեսված է օրենքով, այլ անձանց՝ կարգավորելով և վերահսկելով վերջիններիս գործունեությունը,
- առևտրային բանկերի համար վերջին ատյանի վարկատու է,
- կարգավորում և վերահսկում է վճարահաշվարկային համակարգի գործունեությունը,
- տիրապետում, օգտագործում և տնօրինում է Հայաստանի Հանրապետության միջազգային պահուստները և
- կարգավորում է արտարժութային գործարքները:

Ծանոթագրություն 2. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

(ա) Ֆինանսական հաշվետվությունների պատրաստում և ներկայացում

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների ներկայացման միջազգային ստանդարտների (ՖՀՆՄՍ) համաձայն, որոնք հաստատվել են

Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից:

Հաշվապահական հաշվառման իր գրանցումները Կենտրոնական բանկը վարում է Հայաստանի Հանրապետության դրամով (այսուհետ՝ դրամ): Ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են դրամով՝ հազարների ճշտությամբ: Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս դրամը ազատ փոխարկելի չէ:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են իրական արժեքի սկզբունքի հիման վրա, վաճառքի համար մատչելի ակտիվների համար, բացառությամբ այն ակտիվների, որոնց իրական արժեքը հնարավոր չէ որոշել: Այլ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները, ինչպես նաև ոչ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները հաշվառվում են ամորտիզացված կամ պատմական արժեքով, բացառությամբ որոշ հիմնական միջոցների, որոնք վերագնահատվել են 1995 թվականին:

Ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է կատարել այնպիսի գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն են գործում ներկայացված գումարների վրա՝ հաշվետու ժամանակաշրջանում: Սույն ֆինանսական հաշվետվությունների գծով առավել նշանակալի գնահատումները վերաբերում են հնարավոր կորուստների պահուստին, մաշվածությանը և ամորտիզացիային և այլ պահուստներին, որոնք բացահայտված են Կենտրոնական բանկի հաշվապահական հաշվառման քաղաքականության համապատասխան ծանոթագրություններում: Գնահատումները հիմնված են այն տեղեկատվության վրա, որը առկա է ֆինանսական հաշվետվությունների ներկայացման օրվա դրությամբ: Հետևաբար, փաստացի արդյունքները կարող են տարբերվել այս գնահատումներից:

Անհրաժեշտության դեպքում համադրելի թվերը ճշգրտվել են՝ ընթացիկ տարվա հետ համադրելիության ապահովման նպատակով:

Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում բանկի ֆինանսական հաշվետվություններում էական համարվող հոդվածների կտրվածքով հետևողականորեն կիրառվել են ներքոհիշյալ հաշվապահական հաշվառման քաղաքականությունները:

(բ) Եկամուտների և ծախսերի ճանաչում

Տոկոսային եկամուտներն ու ծախսերը ճանաչվում են հաշվեգրման սկզբունքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներն ու ծախսերը, ինչպես նաև այլ հիմնական եկամտային և ծախսային հոդվածները ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում արտացոլվում են այն ժամանակ, երբ դրանց գծով գործառնությունները փաստացի կատարվում են:

(գ) Կանխիկ և կանխիկին հավասարեցված միջոցներ

Կանխիկ և կանխիկին հավասարեցված միջոցները ճանաչվում և չափվում են ստացված հատուցման իրական արժեքով:

Կանխիկ և կանխիկին հավասարեցված միջոցները ներառում են կանխիկ արտարժույթը, միջազգային վարկային կազմակերպու-

թյուններում արտարժույթով թղթակցային հաշիվները, Արժույթի միջազգային հիմնադրամի (այսուհետ՝ ԱՄՀ) Հատուկ փոխառության իրավունքով (այսուհետ՝ ՀՓԻ) արտահայտված ակտիվները և այն ավանդներն ու ներդրումային արժեթղթերը, որոնք մարվում են 90 օրվա ընթացքում և զերծ են պայմանագրային խոչընդոտներից:

(դ) Արտարժութային գործարքներ և փոխարկում

Արտարժույթով կատարված գործարքները հաշվառվում են ՀՀ դրամով՝ կիրառելով գործարքի օրվա դրությամբ Կենտրոնական բանկի կողմից սահմանված հաշվարկային փոխարժեքը: Արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են՝ կիրառելով հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ Կենտրոնական բանկի կողմից հաստատված պաշտոնական փակման փոխարժեքը: Հաշվետվությունում որպես փակման փոխարժեք է ընդունվել Կենտրոնական բանկի կողմից 30.12.2005 թ. դրությամբ սահմանված պաշտոնական փակման փոխարժեքը, որի ազդեցությունը 31.12.2005 թ. դրությամբ ներկայացվող տարեկան ֆինանսական հաշվետվության վրա էական չէ:

ՀՓԻ-ով արտահայտված ակտիվներն ու պարտավորությունները փոխարկվում են հաշվապահական հաշվառման ամսաթվի դրությամբ ԱՄՀ-ի ՀՓԻ-ի նկատմամբ ԱՄՆ դոլարի փոխարժեքի հիման վրա:

Արտարժութային գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամական ակտիվների և պարտավորությունների փոխարկումից առաջացած օգուտը և վնասը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության «Արտարժութային գործարքներից և փոխարկումից զուտ եկամուտ» հոդվածում:

(ե) ԱՄՀ-ի հաշիվներ

Կենտրոնական բանկը հանդիսանում է Կառավարության՝ որպես ԱՄՀ-ի անդամ երկրի ֆիսկալ գործակալը: Որպես գործակալ, Կենտրոնական բանկը իր հաշվապահական հաշվեկշռում արտացոլում է ԱՄՀ-ում Հայաստանի Հանրապետության անդամակցության բաժնեմասը և ԱՄՀ-ի նկատմամբ պարտավորությունների գծով թողարկված երկարաժամկետ պարտքային արժեթղթերը՝ հանդիսանալով նշված արժեթղթերի պահառուն:

Կենտրոնական բանկի ակտիվները ներառում են Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ներդրված բաժնեմասը և ՀՓԻ-ով պահուստները: ԱՄՀ-ի նկատմամբ պարտավորությունները բաղկացած են տարբեր վարկային ծրագրերի շրջանակներում Կառավարության և ԱՄՀ-ի միջև կնքված պայմանագրերով ստացված վարկերից և ԱՄՀ-ի բաժնեմասի սպասարկման նպատակով Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության ու Կենտրոնական բանկի կողմից թողարկված արժեթղթերից: Վարկերը նախապես ճանաչվում են սկզբնական արժեքով և հետագայում հաշվառվում են ամորտիզացված արժեքով:

ԱՄՀ-ի կողմից տրամադրված վարկային պայմանագրերի գծով տոկոսային ծախսերը ընդգրկվում են Կենտրոնական բանկի ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Վարկերի գծով

տոկոսները վճարվում են Կենտրոնական բանկի կողմից և ճանաչվում են որպես տոկոսային ծախսեր, իսկ ՀՓԻ-ի՝ դրամի նկատմամբ վերաչափման արդյունքում առաջացած տարբերությունները ներառվում են «Փոխարկումից օգուտներ և վնասներ» հաշվում:

(զ) Ֆինանսական գործիքներ

Կենտրոնական բանկն ընդունում է, որ ենթակա է ֆինանսական գործիքներին բնորոշ ռիսկերին:

(ի) Ռիսկ

Տոկոսադրույքի ռիսկ

Շուկայական տոկոսադրույքների փոփոխությունները ուղղակի ազդեցություն ունեն որոշակի ֆինանսական ակտիվների և պարտավորությունների պայմանագրերով որոշված դրամական հոսքերի վրա, որոնց տոկոսադրույքները պարբերաբար համապատասխանեցվում են շուկային, ինչպես նաև այն գործիքների իրական արժեքների վրա, որոնց գծով տոկոսադրույքները հաստատագրված են պայմանագրի գործողության ընթացքում:

Ծանոթագրություն 27-ը ներկայացնում է ակտիվների և պարտավորությունների ժամկետային վերլուծությունը: Բացի շրջանառության մեջ գտնվող թղթադրամներից և մետաղադրամներից, գրեթե բոլոր ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները տոկոսային են: Տոկոսադրույքները սահմանված են շուկայական մակարդակին հավասար կամ դրան մոտ:

ԱՄՀ-ից ստանալիք և վճարվելիք գումարները ենթակա են հատուկ տոկոսային կարգավորման, և գործնականում հնարավոր չէ դրանց իրական արժեքի չափումը՝ նման պարտքերի համար շուկայի բացակայության պատճառով:

Վարկային ռիսկ

Վարկային ռիսկի բացահայտումը ֆինանսական հաշվետվություններ օգտագործողներին հնարավորություն է տալիս գնահատելու գործընկերոջ կողմից պայմանագրային պարտավորությունների խախտման դեպքում ֆինանսական ակտիվների գծով ապագա դրամական հոսքերի կրճատման չափը:

Այս տեղեկատվությունը կարող է ձեռք բերվել անմիջականորեն հաշվեկշռից կամ ծանոթագրություններից՝ կապված վարկային ռիսկի հետ, ինչպիսիք են օրինակ՝ ավանդները և վարկերը: Վարկային ռիսկը առկա է նաև երաշխիքներում, որոնք բացահայտված են ծանոթագրություն 25-ում:

Իրական արժեք

Իրական արժեքի մասին տեղեկատվությունը լայնորեն օգտագործվում է ձեռնարկության ֆինանսական դրության և առանձին ֆինանսական գործիքների գնահատման համար: Իրական արժեքի գաղափարը համապատասխանում է ֆինանսական հաշվետվություններ օգտագործողների կողմից ընդունված բազմաթիվ որոշումներին, քանի որ շատ դեպքերում այն արտահայտում է ֆինանսա-

կան շուկաների մոտեցումները գործիքից ակնկալվող ապագա դրամական հոսքերի ներկա արժեքի վերաբերյալ:

Կենտրոնական բանկի դեպքում իրական արժեքի հիմնական որոշիչներն են՝ փոխարժեքները, տոկոսադրույքները և վարկային ռիսկը: Այնքանով, որքանով իրական արժեքները արտացոլված չեն հաշվապահական հաշվեկշռում որպես հաշվապահական քաղաքականության արդյունք, հաշվեկշռային արժեքը որոշելու համար հաշվի է առնվել արտարժույթի փոխարժեքը: Ընդունվում է, որ վարկերի և դեպոզիտների իրական արժեքը, որը պայմանավորված է տոկոսադրույքներով, էականորեն չի տարբերվում դրանց հաշվեկշռային արժեքից: Երբ առկա է վարկային ռիսկ, այն ճանաչվում է որպես արժեզրկում՝ պահուստավորման միջոցով: Ծանոթագրություն 25-ում արտացոլված երաշխիքներից բացի, այլ արտահաշվեկշռային ֆինանսական գործիքներ չկան:

(II) Դասակարգում

Մինչև մարման ժամկետը պահվող ակտիվները հաստատագրված կամ որոշելի վճարումներով և հաստատագրված մարման ժամկետներով ֆինանսական ակտիվներն են, որոնք Կենտրոնական բանկը մտադիր է և հնարավորություն ունի պահել մինչև մարման ժամկետը: Այս ակտիվները ներառում են տարբեր երկրների պետական գործակալությունների կողմից թողարկված արժեթղթեր:

Վաճառքի համար մատչելի ակտիվները այն ֆինանսական ակտիվներն են, որոնք չեն պահվում վերավաճառքի նպատակներով, Կենտրոնական բանկի կողմից տրամադրված փոխառություններ (վարկեր) և դեբիտորական պարտքեր չեն և մինչև մարման ժամկետը պահվող ակտիվներ չեն: Վաճառքի նպատակով պահվող գործիքները ներառում են որոշակի պարտքային և բաժնեմասնակցության գործիքներ:

(III) Ճանաչում

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվները, մինչև մարման ժամկետը պահվող արժեթղթերը և տրամադրված վարկերն ու դեբիտորական պարտքերը ճանաչվում են գործարքի կատարման օրվա դրությամբ:

(IV) Չափում

Սկզբնական ճանաչման պահին ֆինանսական գործիքները չափվում են իրենց սկզբնական արժեքով, ներառյալ գործարքի հետ կապված ծախսումները:

Սկզբնական ճանաչումից հետո վաճառքի համար մատչելի բոլոր ակտիվները չափվում են իրական արժեքով, բացառությամբ այն գործիքների, որոնք գործող շուկայում չունեն գնանշված շուկայական գին, և որոնց իրական արժեքը հնարավոր չէ արժանահավատորեն գնահատել: Այդ ակտիվները ներկայացված են ինքնարժեքով, ներառյալ գործարքի հետ կապված ծախսումները և հանած արժեզրկումից կրած վնասները:

Ոչ առևտրային նպատակներով պահվող բոլոր ֆինանսական պարտավորությունները, տրամադրված վարկերը, դեբիտորական

պարտքերը և մինչև մարման ժամկետը պահվող ակտիվները չափվում են ամորտիզացված արժեքով՝ հանած արժեզրկումից կրած վնասները: Ամորտիզացված արժեքը հաշվարկվում է՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Հավելավճարները և զեղչերը, ներառյալ գործարքի հետ կապված սկզբնական ծախսումները, ներառված են համապատասխան գործիքի հաշվեկշռային արժեքի մեջ և ամորտիզացվում են՝ կիրառելով գործիքի արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

(V) Իրական արժեքի չափման սկզբունքներ

Ֆինանսական գործիքների իրական արժեքը հիմնված է հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ գնանշված շուկայական գնի վրա՝ առանց նվազեցնելու գործարքի հետ կապված ծախսումները: Եթե գնանշված շուկայական գինը առկա չէ, գործիքի իրական արժեքը գնահատվում է՝ օգտագործելով գնային մոդելները:

(VI) Հետագա չափման հետևանքով առաջացած շահույթ և վնաս

Վաճառքի համար մատչելի ակտիվների իրական արժեքի փոփոխությունից առաջացած շահույթը և վնասը վերագրվում են սեփական կապիտալին՝ մինչև ֆինանսական ակտիվի օտարումը կամ արժեզրկումը:

(VII) Յուրահատուկ գործիքներ

Հետգնման պայմանագրեր

Հետգնման պայմանագրերով վաճառված արժեթղթերը հաշվառվում են որպես վաճառքի համար մատչելի արժեթղթեր, իսկ այդ պայմանագրերով ստացված միջոցները գրանցվում են «Պարտավորություններ այլ բանկերի նկատմամբ» հոդվածում:

Հետգնման պայմանագրով ձեռք բերված արժեթղթերի դիմաց տրամադրված գումարները գրանցվում են «Պահանջներ այլ բանկերի նկատմամբ» հոդվածում:

Ձեռք բերված արժեթղթերը չեն ճանաչվում ֆինանսական հաշվետվություններում՝ մինչև դրանց օտարումը երրորդ կողմին: Այս դեպքում նշված արժեթղթերի վերադարձման գծով պարտավորությունը ճանաչվում է իրական արժեքով՝ որպես առևտրական նպատակներով պարտավորություն:

Արժեթղթերի գնման և վաճառքից առաջացած եկամուտը կամ ծախսը իրենից ներկայացնում է տոկոսային եկամուտ կամ ծախս, որը հաշվեգրվում է համապատասխան հետգնման պայմանագրերի գործողության ժամկետների ընթացքում:

Հայաստանի Հանրապետության պետական արժեթղթեր

Հայաստանի Հանրապետության պետական արժեթղթերը թողարկվում են Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից: Պետական արժեթղթերը լինում են զեղչատոկոսային և տոկոսային: Հաշվեկշռում երկուսն էլ հաշվառվում են իրական արժեքով, կամ, երբ գնանշված շուկայական արժեք չկա, իրական արժեքը որոշվում է գնահատման մոդելներով:

Այլ երկրների պետական արժեթղթեր

Գերմանիայի կառավարության, ԱՄՆ-ի պետական գործակալությունների և Մեծ Բրիտանիայի պետական և կառավարության կողմից երաշխավորված գործակալությունների կողմից թողարկված արժեթղթերն ունեն 1 - 5 տարի մարման ժամկետ, Կենտրոնական բանկը դրանք պահում է մինչև մարում: Հաշվապահական հաշվեկշռում դրանք հաշվառվում են անվանական արժեքով՝ հանած չամորտիզացված զեղչը կամ գումարած չամորտիզացված հավելավճարը՝ հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով:

(է) Պահուստներ

Պահուստները ճանաչվում են հաշվապահական հաշվեկշռում, երբ Կենտրոնական բանկն ունի ներկա իրավական կամ կառուցողական պարտականություններ՝ որպես անցյալի դեպքերի արդյունք, և հավանական է, որ այդ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք, և պարտականության գումարը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

(ը) Դրամագիտական արժեքներ

Դրամագիտական արժեքները հաշվեկշռում հաշվառվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից՝ նվազագույնի չափով: Դրամագիտական արժեքները վաճառելիս զուտ վաճառքի գնի և հաշվեկշռային արժեքի տարբերությունը ճանաչվում է օգուտ կամ վնաս՝ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

(թ) Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ

Հիմնական միջոցները և ոչ նյութական ակտիվները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածքը և արժեզրկումը, բացառությամբ Կենտրոնական բանկի շենքի, որը վերագնահատվել է 1995 թվականին՝ Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության հրահանգների համաձայն:

Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների մաշվածքը և ամորտիզացիան հաշվառվում են գծային մեթոդով՝ ակտիվի օգտակար ծառայության ժամկետում, հետևյալ տարեկան դրույքներով.

	2005	2004
Շենքեր և շինություններ	5-10%	5-10%
Կահույք և այլ գույք	20%	20%
Համակարգչային սարքավորում	20%	20%
Համակարգչային ծրագրեր	20-33.33%	20-33.33%
Ավտոմեքենաներ	20%	20%
Այլ հիմնական միջոցներ	20%	20%

Կենտրոնական բանկի կողմից սահմանված է հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների մնացորդային (լուծարային) արժեք՝ կապված հիմնական միջոցի սկզբնական արժեքի հետ, ըստ հետևյալ դասերի.

	2005	2004
Շենքեր և շինություններ	1%	1%
Կահույք և այլ գույք	5%	5%
Համակարգչային սարքավորում	5%	5%
Համակարգչային ծրագրեր	0.5-1%	0.5-1%
Ավտոմեքենաներ	5%	5%
Այլ հիմնական միջոցներ	1-5%	1-5%

Հիմնական միջոցների մնացորդային արժեքը և օգտակար ծառայության ժամկետը վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի համար և փոփոխության դեպքում կատարվում են համապատասխան ճշգրտումներ:

Հիմնական միջոցները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվին՝ որոշելու համար, թե առկա են արդյոք արժեզրկման նշաններ: 2005 թվականին արժեզրկում չի ճանաչվել: Հիմնական միջոցների միավորի իրացումից առաջացած արդյունքը որոշվում է որպես ակտիվի զուտ իրացման գնի և հաշվեկշռային արժեքի տարբերություն և ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչվում է օգուտ կամ վնաս:

Հիմնական միջոցների վերանորոգման և պահպանման հետ կապված ծախսումները ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես ծախս՝ դրանց կատարման պահին: Կապիտալ բնույթի նորոգման ծախսումները ավելացվում են ակտիվի հաշվեկշռային արժեքին, երբ հավանական է, որ դրանց շնորհիվ ապագա տնտեսական օգուտները՝ ավելի շատ, քան ակնկալվում էր առկա ակտիվի նորմատիվային ցուցանիշների սկզբնական գնահատումից, կհոսեն դեպի կազմակերպություն: Այս ծախսումների մաշվածությունը հաշվարկվում է համապատասխան ակտիվի օգտակար ծառայության մնացորդային ժամկետի ընթացքում:

(ժ) Նվիրատվություններ

Որպես հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ հաշվառվող ստացված նվիրատվությունները գրանցվում են որպես հետաձգված եկամուտ և ճանաչվում են եկամուտների ու ծախսերի հաշվետվությունում, դրանց օգտակար ծառայության ընթացքում:

(ժա) Սոցիալական ապահովագրության հիմնադրամ

Սոցիալական ապահովագրության գծով հատկացումները իրականացվում են հաշվարկված աշխատավարձից՝ տոկոսային մասհանումների կարգով, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն: Հատկացումների գծով ծախսերը ուղղակիորեն ընդգրկվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

(ժբ) Թղթադրամներ և մետաղադրամներ շրջանառության մեջ

Թողարկված թղթադրամները և մետաղադրամները հանդիսանում են Կենտրոնական բանկի չսպասարկված պարտավորություն և գրանցվում են անվանական արժեքով: Թղթադրամների տպագրման ծախսերը հաշվառվում են որպես այդ տարվա ծախսեր:

(ժգ) Թողարկված պարտքային արժեթղթեր

Թողարկված պարտքային արժեթղթերը սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով, որն իրենից ներկայացնում է դրանց դիմաց ստացված փոխհատուցման իրական արժեքը՝ հանած գործարքի հետ կապված ծախսումները: Հետագայում թողարկված պարտքային արժեթղթերը չափվում են ամորտիզացված արժեքով, և ստացված զուտ փոխհատուցման և մարվող գումարների ցանկացած տարբերություն արտացոլվում է եկամուտների և ծախսերի հաշվետվությունում, տվյալ արժեթղթերի շրջանառության ժամանակահատվածում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Եթե Բանկը ձեռք է բերում սեփական թողարկված պարտքային արժեթղթերը՝ դրանք դուրս են գրվում հաշվապահական հաշվեկշռից, և հաշվեկշռային արժեքի ու ձեռքբերման գնի տարբերությունը արտացոլվում է զուտ առևտրային եկամուտներում:

(ժդ) Կապիտալ և պահուստներ

Կենտրոնական բանկի կապիտալը ներառում է կանոնադրական կապիտալը, գլխավոր պահուստը, արժեթղթերի, հիմնական միջոցների և այլ ակտիվների վերագնահատման պահուստները, չբաշխված շահույթը և շահույթը (պահուստների վերաբերյալ փոփոխությունը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքում ընդունվել է 03.03.2004 թվականին):

Կենտրոնական բանկի կանոնադրական կապիտալը Հայաստանի Հանրապետության սեփականությունն է և չի կարող գրավ դրվել, բռնագանձվել կամ այլ կերպ օտարվել Հայաստանի Հանրապետության պարտավորությունների դիմաց՝ համաձայն «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի՝ ընդունված ՀՀ Ազգային Ժողովի կողմից 1996 թ. հունիսի 30-ին:

